



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### **Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### **About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

B 1,211,541

THE UNIVERSITY OF MICHIGAN  
LIBRARIES

Simeon J. Catholics of Armenia 1710-1  
Tamb. r girk or ...

# Ջ Ա Մ Բ Ռ

ԳՐԱԴԱՐԱՆ  
ԳՐԻԳՐ ԱՊՈՋԻԱՆ  
ՆԱԳՐԱԹԻՒ 648

Որ կոչի յիշատակարան արձանացուցիչ,  
Տայելի և պարունակող բնաւից որպիսու-  
թեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շքակալից  
վանօրէիցն:

ՀԱՄԱԵՂՈՎՆԵՆԱԼ ԵՒ ՇԱԲԱԿՆԵՆԱԼ

Ի ՄԵՐԻՑՆԻ ՏԱՒԱՀՈՐ ԵՒ ՎՇԱԿՈՅ ԿԱԹՈՒՂՈՍՈՍՆԵՆ  
ԵՐԵՒԱՆՏԻՈՅ:

Իփառս Առաւծոյ և ի յօգուտ Եղեակերտի Ամուսնոյ, իննարան և իննչաւթիւն  
խմաւ նստող Հայրապետաց, զարժակալաց Ս. Կանայն Կարգաւորից պաշտօնէիցն ստիճ:

Յամի Անբարձմուտեան Տեառն, Կազար Եօրն Կարիւր վարտուն և  
Տիճ — 1763, ՌՁԿԵ — :

Իսկ զսօ Հայրոց բուսակամի, Կազար Երկու Կարիւր օսան և յարս:


Ի ՎԱՂԱՐՏԱԿԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂՈՍԻ ԷԶՄԻՆԱՆԻ

ՌՅԻԳ — 1873



Grad  
Erem  
340  
Buhr.



Հ.Ր.Ա.Ր.Ա.Ր.Ա.Ր.

**Տ՝ Տ՝ ԳԼՈՐԳԵԱՆ Դ՝**

ՎԵՐՈՒՄ ԵՒ ՄԱՐԶԵՆԱԳՈՆ ԿԱԹՈՒԳԻԿՈՍԻ  
ԱՐԵՆԱՆ ԼՈՐԵՆ.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՏՈՒԳԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԵՆԱՆ ԼՈՐԵՆ

## Լ.Ջ.Դ.

Մի օրինակ և եթէ էր մասններս Գ.Ա.Մ.Կ.Պ. անուանելոյ որ իբրև գանձարան միժերէր յինքեան ոչ միայն զհակիրճ եկեղեցական պատմութիւն և այրատարանեաց, յառաջին դարէ անտի ցերեզդ քառորդ եթէ և նուազաներորդի դարու, և յառկապէս զինչ ինչ անցեալ և զժամանակակից երևելի և նշանաւոր անցս և գրասուտանս Իջնիածնի և ըն, այլ և զառիւղեկութիւն երս և պրուցակս արգի բողի կալուածագրոց, հարցոց, գիւղորէից, արքունական հրովարտանքոց, սրբանագրոց, կալուածագրոց, ընծայագրոց և այլոց և այլոց, զորս աշխատաբերեալ է արժանայիշակուակ և քաղմարդիւն կաթողեկոս ամենայն Հայոց Յիսկան Երևանցի ցլերջին ամն Հայրապետութեան իւրոյ:

Թէպէտ կասկեալ է Լ.Ջ.Պ.Տ.Պ.Կ.Պ. Յիսկանի որպէս զի Յաջորդ Հայրապետք և Գաճառ կապ. Մ. Իջնիածնի շարունակեացն և արձան սարկեացին ի ամին զանցս իւրաքանչիւր ճամբու սակայ իւրեանց, սակայն անգիտանալք զարդ գեղան՝ եթէ ընդէր մնացեալ էր ցարդ արարագիւն և ոչ զք հոգացեալ արձանագրել գիւր

ինչ՝ որպէս Տրահանգեալ և խնդրեալ էր Առ-  
 սահողի Սիմէօն Աթոռիկոս:— Երդարև գը-  
 տանին ի Հայրապետական Եթոռս Ածնդակք,  
 Տրովարտակք, կալուածագիրք և թղթեանք պի-  
 տանիք յաւուրց անտի Հայրապետութեան Յա-  
 ջորդաց Սիմէօնի, յորս երևին ինչ ինչ նշանա-  
 ւոր, սնոցք, սրճանիք, յիշատակաց, միանգամայն  
 դեպք, գրողնայիք, գրկանք, բռնութիւնք,  
 ստատապանք և խարդաւանութիւնք ի յետին  
 ժամանակս նիւթեալք յօտարաց, քայց քանի՛  
 առ առէ, սրճանահաստ լինէին այնորիկ և ան-  
 կարուստ սպանճովէին իբրև ի միում յամիտի յի-  
 շատակագրութեան և գիրութիւն մեծ ընծա-  
 յէին ընթերցողացն ամենից՝ եթէ պատմագրէին  
 ի ամին Աստենիս, զարպիսիս այժմ՝ ստիպիմք  
 ծաղկազարդել ի յիշատակարանաց և ի հատ և  
 կտոր թղթեանց՝ ոչ սակաւ աշխատութեանք  
 և սճաւ սրգութեանք:

Մակերայ այժմ պակնայի՛ք երկուցեալ ի ժա-  
 նեաց ժամանակին՝ թողեալ վաղ և այլ թե-  
 բութիւնս և առանց յապաղելոյ զսպագրու-  
 թիւն սորին, — զի ոչ բազում ամք էին յորմէ  
 Տեանէ օղանոցաւ սար ի գերութենէ . . . — քայթե-  
 եղև որալ ի շոյս ըստ հրամանի Ա՛հ՛. Հայրապե-  
 տի ամենայն Հայոց, Տեանն և Տեանն Վեդրգեայ  
 Գ. Աղգառէր Աթոռիկոսի, զի մի որպէս երբեմն  
 զրկեացի Մայր Եթոռս և Եզգ մեր նաև յայս-  
 պիւուց պատուական Գ. Գնձարանէ:

Մեր խորհրդովն՝ և լուսադէտ՝ մտնանց և գործ՝ առանց դեգերելոյ ի բժախնդրութիւնս թերեւ վայրնապարս՝ գլուխը՝ զարժանաւորութիւն և զկարծարութիւնն՝ յանունիս՝ մտնաւանդ՝ ի ժամանակին յայնմիկ և՝ առ յապայսն, — որպէս զի ըստ արժանւոյն պատկեցի նպատակ շնորհնակին՝ եթէ ուշադիր վերձանողք ճանդերձ բարդ դատութեամբ ժամանակաց և տերանց և դա՛ զափարաց՝ զաչս մտայ՝ յախցեն՝ ի պատճառ և բքն և նեսցեն:


Եւ և չէ Տնար ընթերցանելեաց չափել զընդարձակութիւն պարունակութեանց մատենիս առանց թորելոյ զարտասուս յականողեաց, և այնպէս է մեզ կարծել, զի ողբք, հառաչք, թառանչք և վիշաք ծանունք պարտին լինել և ի ժամանակին՝ ըստ արտաքին բերմանց՝ քան զորս ակնարկէ և յիշէ Սիմէօն Աթուղիկոս և արտասուէ ի մեծ վիշտ:


Ի վերջ գրոցս յաւելաք զհակիրճ կենսագրութիւն Արժանայիշատակ շեղենակին և զգիտողութիւնս ինչ զժամանակակից իրաց:

Փութամբ կատարել և զպարտս մեր յայտնելով զհաւաստիս խորին շնորհակալեաց առ բարեպաշտս Վանձակեցի Ազգայինս՝ որք ըստ յորդորանաց Առաջ. — Փոխանորդի Վրիգոր Ալարզապետի Տէր Ստեփաննոսեանց՝ կանխավճար ստորագրութեամբք դումարաց նպաստեցին ծախուց տպագրութեան Աատենիս, զորոց

Գանձանա ընդ գունդացն որոշեցաք է զերջ  
 գրոցս :  
 Եթէ ընդ ամենացն տեղիս Եզրայից մեզ  
 այսպիսի ըզճիւք եւ ըստ անորդաց թուժեալն  
 օգնեցեն Տարաւնի Մայր Եթ ուրցս սակս տպար  
 գրուժեանց սյլ եւ իմ ընտիր ձեռագիր մա-  
 տինադրուժեանց՝ գաւազրոց եւ այլոց, անշունչ  
 նպատ մեծ ընծայեցեն չայլ ժամեւագրու-  
 թեան եւ գրականութեան : —







## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Առ արդեյո-Ղի-ն ինչ արհեստ- արդեւել է նշոյ հեղեւի, ինչ արհեստ-  
էրոյ որ իւրէ Զ-ժիւ և Յիշտ-իտան որից Անտոյց էլի-ժնէ և այլոց չե-  
լոցն էնորէնք արքն:

Վանգի աշխարհս և աշխարհայինքս են միշտ ի փոփոխման  
և ենթադրեցեալք զանազանից պէսպէսութեանց ըստ վճա-  
հասութեանց արբազանից գրոց, և այս այնքան սաստկապէս,  
մինչ զի ոչ ինչ ունին ի հաւաստութեան: Վանգի ապագայքն  
հաւաստի տրամադրութիւնքն տան անհաւաստութիւն ներ-  
կայականաց, որոց և զունեցեալն տան ունել տարակուսանօք,  
և զունեցեալն կարծեօք: Արդ այսց ամենից փոփոխմանց և  
որամտորութեանց շտեմարանն և մանաւանդ ներգործական և  
ծնորդական պատճառն է ժամանակն, որ ի հոյովիլն անգաղարա-  
պէս՝ հոյովէ ընդ ինքեան և զորպիսութիւնս ժամանակաւորաց:  
Այս ուրեմն կարի հարկաւոր է մեզ ժամանակաւորացս՝ զնոյն  
ինքն զժամանակն ունել միշտ առձեռն իրրև զհայելի, և ի  
նմանէ ուսանիլ զօգուան մեր որքան եմք ի նմա սեւեռեցեալք:  
(Վանգի ժամանակն ունի զանցեալս, զներկայս, և զպառնիս,  
որ անցերմն խրատէ զներկայականսս, և զգուշացուցանէ զա-  
պագայականն): Այս այս որով եղանակաւ կարէ լինել եթէ ոչ  
ներկայացուցանելով մեզ զորպիսութիւնս անցելոցն, յորս լիա-  
պէս երևին բոլոր որպիսութիւնք փոփոխմանց յաջողութեանց  
և ձախարհութեանց, օգտից և վնասուց, փորձառիթ բերմանց  
և նոցին հնարիցն: Արդ այս թէպէտ ամենայն մարդոյ է հար-  
կաւոր, որք (զորով բանականք և ենթարկեցեալք պէսպէս հո-  
գաց և փոփոխմանց,) ըստ չափու կարօտին հայելոյ և հնարա-  
ցոյց օրինակաց, սակայն ևս առաւել յառկացելոց և զլիաւորաց՝

և բազմապէս հոգունակաց անձանց: Այլ որքան ևս առաւել հարկաւորագոյն է սրբոյ Աթոռոյս Աջմիածնի նստող Հայրապետաց և նոցին գործակալաց և միաբանիցն սեպհականաց, և մանաւանդ յայսպիսում ժամանակոջ: Քանզի սուրբ Աթոռս է շնորհօքն Աստուծոյ մեծանուն և հռչակեցեալ, լցեալ միաբանիւք և պէսպէս պաշտօնէիւք, պերճացեալ երևելի զարդուք և կահիւք, ճոխ փառօք և անթագուցանելի հանդիսիւք, ունող բազմապիսեաց ելից և մտից: Այլ վերջապէս գորով քաղաք ի վերայ լերին՝ որ ոչ կարէ թագչել ըստ Տեառն բանի: Բայտ անուանն՝ իշխող բազմաց, ըստ գործոյն՝ և ոչ միոյ, ի լեզուս՝ ունող ամենայն բարեաց, և ի յինքն՝ կարօտ յամենայնի: Պատանեցեալ ընդ իշխանութեամբ անիշխան տերանց խստասրտաց և գազանաբարոյից յափշտակողաց, և ինքն անգօր և անսուր: Կատակ՝ բուռն և ամենակերպ պահանջողաց. իւրայնոց և այլայնոց, և ինքն կամաւոր և երկիւղիւ մուրացող: Արդ այսպիսւոյ տան և սորին տանուտեառն՝ և գործակալացն և հարազատ ընտանեացն որքան հարկաւոր է ի հայելիս և ի հնարացոյց խրատս և յօրինակս անցելոցն պարապիլ, գիտութեան փորձառողացդ թողում:


Արդ ես յեաինս ի սպասաւորաց և ստրուկս ի պաշտօնէիցն սրբոյ Աթոռոյս Աջմիածնի՝ Աիմէօն լոկ և եթ անուամբ Աթուղիկոս, որ պատահեցայ ի վերջին և յամենաթշուառ ժամանակոջս, ի ՈՒՄԺԻԹ Թուոջս մերում, տեսի՛ զի յառաջնոց լուսահոգեաց և երանելեաց Հայրապետացն մերոց (որոց բարերարութիւնքն, օգտարարութիւնքն, և արիւնախառն քրտամբք աշխատութիւնքն յոլովք և անգրեկէք են ի վերայ սրբոյ Աթոռոյս, որոց զարդիւնսն վայելեմք մեք ի վաստակս նոցա մտանելով, սակայն) ոչ դքն էր արարեալ զփոյթ ի գիր արկանել և արձանացուցանել զորպիսութիւնսն սրբոյ Աթոռոյս և զպարագայն սորին, գոնէ և զառ ինքեամբք եղեալ պատահմունսն, յորոց ոչ սակաւ օգուտք յառաջանային յեանոցս և յառաջանալոց էին ի ժամանակս ժամանակս: Արդ ես յամենայնի անար-

գիւնս և անպէտ՝ որովհետեւ չունէի զկարօղութիւն և չկարացայ խօսիլ ինձէն յատկապէս զարդիւնաւոր զործ ինչ յառաջացուցանել, զայս գաի ինձ բանեաղ, և իբր զդիմակալ երեսաց իմաց, այս ինքն զարարեցեալ բարերարութիւնսն և զոսկեփայլ զործսն նախնեաց երանելեաց (որք ծածկեցեալք էին և որպէս թէ անհետացեալք խաւարաւ մոռացութեան և անգիտութեան) ի յայ բերեալ փայլեցուցից. որովք ոսկեպէս անուանք նոցին փառաւորեցին մշանջնապէս ի սուրբ Աթոռոջս ի մեջ տաճարիս Մատուծոյ, ընդ որս և ես և իմս այս՝ գոնէ իբրև զխեցեղէն հաշուեցեալ յիշատակիցուք: Այսն որոյ յառաջադրեցի զայս զիբք, որ կոչի (Աշտաակարան, և պարունակօղ բնակից որպիսութեանցն սրբոյ Աթոռոյս: Քանզի զբեցի ի սմա զամենայն որպիսութիւնսն, այս ինքն զորպիսաբար հաստատին, զորպիսաբար կեան և կառավարին սորին և սորին Աթոռակազցն՝ ներքսապէս և արտաքսապէս: Օտքանաբար ասարածուսն իշխանութեանն և պատուոյն և զերբեմնական տկարութիւնն և զվշտակրութիւն, զի սմա՝ նստօղ Աթոռղիկոսունսն, որոց և զբրպէսն, և յորս զառաւել բարերարսն: Այլ և զինչ ունին սորին, զնրպէս և զնրբ ունին, այս ինքն՝ Առերակականն, Առաջնորդականն, և զայլ արդիւնաբեր տեղիսն որպիսութեանքն իւրեանց՝ զմիտառու 1) զեօղորայսն, զմուսն, այս ինքն զայգիս, զջրազացս, զդինկս, զտունս, զնանութս, զերմանելի տեղիսն, զջուրս և զտուս, և զայլս այսպիսիս հանդերձ իւրաքանչիւր Քանկական և Հայկական դաճալցական 2), ինքնական 3), վկայական և վիճունական զրովքն իւրեանց, և թէ նրբ և որոց ձեռքն: Այլ և զթագաւորական՝ զքանակարական և զդասաւորական գրեանսն սորին, հանդերձ պարագայիւքն իւրեանց, և մանաւանդ զմազափութիւն 4) սորին՝ թի մրպէս, սրբան, և նրբ, այլովք պարագայիւքն:

1) Միւս, կալուածք, երկր, արդիւնք, և ընդ. — 2) Առաջնորդ, կալուածագիր. — 3) Առաջնորդ, կալուած, ժառանգութիւն, կտակեալ ինչք բարեպաշտական յուրա հասարակաց և ընդ. — 4) Միւս, ազատ, ազատութիւն, և ընդ.

Ե.Պ. և արձանացուցաբ ի սմա զնշանաւոր և զ' թ' մտի պահելի-  
 իրակութիւնսն և զօգտաբեր և զփնասատու պատահմունսն ան-  
 ցնելոց՝ ի յօրինակ և ի հայելի տպագրոցիցդ, զի զօգտաբերսն առ  
 ձեռն ունելով, ի վնասակարացն խոյս տայցէք: Եւ յԼ և արձա-  
 նացուցաբ ի սմա զամենայն որպիսութիւնսն երկրիս և շրջա-  
 կայիցն վանօրէից մերոց հանգերձ որպագայիւք ի բարեանց. և  
 վերջապէս զիտուսն մեր և ջանք այս էր՝ զի զհրքս այս լիցի  
 հանրակամապէս պարունակօղ, հայելի և ծանուցանօղ ամե-  
 նից որպիսութեանց և ապագայիցն սրբոյ Մթոռոյս և վնաս-  
 րէիցն մերոց, և յաւիտենական և մշտապիտոյ արձան իրակօւ-  
 թեանցն անցելոց ի զգուշութիւն յապտ եկելոց: Այսն որոյ  
 խնդրի ի մերազնէից և ի կարգակցաց եղբարդդ իմոց զկնի մեր  
 յաջորդողաց (որոցդ է հարկաւոր և շատ պիտանի մանուսնորա-  
 պէս՝ որպէս զուրձեղոց էք) նախապէս՝ զի որպէս նուաստութիւնս  
 մեր ի նախնեաց անախ մինչև ջառ մեզք զմեացեալն և ունե-  
 ցեալն, զնոցին ունեցման զրեանսն և զայլ պարագայսն մեծա-  
 տաժանմամբ և բազմաւ աշխատութեամբ (մինչ զրեթէ ի  
 կեանս իմ այս էր մեծ հոգ և ցաւն իմ,) առ ձեռն բերեալ,  
 զանհետացեալ և նսեմացեալն ի լոյս ածեալ և վերածորոգեալ,  
 զանկանոնն ընդ կանանիւք արկեալ, զցան և զջիրսն ի մի ժո-  
 դովեալ, և որպէս թէ՛ ի զանազանից զեղծցիպարունից և յա-  
 նաշահոտունեաց ծաղկանց փնջեալ և եղեալ ի տաժա յայս՝  
 ահա՛ ձեզ ընծայեցաք. նմանապէս և դուք ըստ այսմ՝ կանոնի  
 ամբողջապէս և հաւատարմօրէն պահելով՝ զկնի յաջորդողացդ  
 ձերոց ընծայեցէք, զի մի՛ անհետացին և կորիցեն և այսպիկ  
 մնացեալք որպէս և շատքն անհետացեալք են յամհոգութենէ  
 անցելոցն երանելեաց: Արկորդապէս, զի որպէս մեք՝ եթէ նախ  
 քան զմեզ անցելովքն, և թէ զմեզ պատահեցեալն՝ զիտուոր,  
 և հարկաւոր և զ' ի մտի ունելի դարձսն և զեղելութիւնսն (թէ  
 օգտաւէտ և թէ՛ փնասաբեր,) ի զիր արկեալ արձանացուցաբ ի  
 սմա, նմանապէս և դուք զառ ձեզք եղեալսն ի սմա զրեալ ի  
 յիւրաքանչիւր անգուցն արձանացուալք: Վնանդի անցելոցն

անցք՝ իրատք և վարդապետութիւնք են յետնոց: Արրորդա-  
պէս՝ որք վայելէքդ զսա, օգտիք, և ևս յաւելուք, յիշեցէք ան-  
գամ մի ի մաքուր յաղօթս ձեր զնախկին Հեղինակս սորին. որ-  
պէս զի և դուք յիշեցիք ի յապա եկելոցն ձերոց: Ողջ լե-  
րուք:



ԳԼ. Ա.

Յորտմ հասին սրբաբաններէ սրբայ Ամենայն Էջի-ձնէ ի սկզբանէ յսրբեցմանէ  
անոր ի յամբարներէն և ի վերանորոգութիւնն: Դարչեալ և սոխոս ինչ առաջնո-  
րէն ի ինչ լուս սրբայ Ազոյ Լուսարանին մերոյ:

Սուրբ և Աստուածային՝ Բրիտանական և լուսանկար ամենից Հայոց  
Աթոռս Էջմիածին, առ յոր էջ Միածին Բանն Աստուած Հայրական փառօք,  
Հրաշալի լուսով և բազմութեամբ զօրօք Հրեշտակաց, և ձևակերպեալ յօ-  
րինեաց զսա աստուածային լուսով, ըսա որում և Հրաշակերանաց սուրբն  
Գրիգորիոս Լուսաւորչէն մեր ի յաթոռ յասկապէս ազգիս Հայոց, և մայր  
ամենայն Եկեղեցեաց և շնորհածին ծնող նոցին մանկանց, եղև ի ՅՅ Թուող  
մարդեղութեան Բրիտանոսի Աստուծոյ մերոյ, Բանդի որպէս ի Հունիս եցոյց  
Մովսէսի (որ առաջնորդէր Հնոյն Իսրայէլի) զձև խորանին ի շինել յասուկ  
անդի և բնակարան աստուածութեան իւրոյ, և ի գաստարակ և անդի ապա-  
ւինի Հնոյ ժողովրդեանն, նոյնպէս և ի նորունս եցոյց զձև խորանիս պսակի  
սրբոյն Գրիգորի (որ եղև առաջնորդ նորոյս Իսրայէլի) ի շինել յասուկ ան-  
դի և բնակարան ինքեան՝ ի մայր և գաստարակ՝ և անդի ապաւինի նորոյս  
ժողովրդեան ազգիս Հայոց: Արդ սուրբ Աթոռս պս աստուածակերտ յա-  
ռաջին ժամանակն ի Լուսաւորչէն մերմէ ի յորդին և ի Թուռունն և ի  
մերձաւորն նոցանց էր լուսապէս շէն և պայծառ՝ Հոգևորօք և մարմնաւօ-  
րօք, և պերճ իշխանութեամբ: Բանդի ձգիւր անխոնարհելի և հոգևոր իշ-  
խանութիւն սորին ի յամենայն Հայս, ի Վիրս, և յԱղուանս: Եւ ի սմա  
նսակին Հայրապետքն Ազգիս մերոյ, և ի սմանէ ծաւալիւր յամենայն երկիր  
խորհուրդք եկեղեցւոյ և սրբալոյս Միւռնն օծութեան: Ապա ի ակարանալ  
իշխանութեանն մարմնաւորի Ազգիս մերոյ, և ի զօրանալ Թշնամեաց, և ի յա-  
ճախիլ պէտպէս յարուցմանց Հինից, Թագաւորք և իշխանք մեր ըսա ձեռն-  
առութեան ժամանակին՝ ուր անտանէին պատահաւոր և ձեռնառ ինքեանց  
և յապահովութիւն ի Թշնամեաց՝ անդ ամբացեալ բնակութիւն առնէին՝  
ընդ նոսին և Հայրապետքն: Արպէս և ի ճՀԷ Թուականիս մերում, յա-  
նիշխանութեանն Ազգիս մերոյ (զի ի ճԾԳ Թուողն մերում, պիղծն Արզլայ  
զամենայն իշխանն ի յԵկեղեցին՝ Նախիջևանու պրեաց) Դաւիթ Պաթու-  
ղիկոսն Արամուսելի ի Պուտէ գաւառէ վշտացեալ ի ասճկաց փոխեաց  
զԱթոռն Հայրապետական ի Դվին. ուր մեաց Հայրապետարանն մինչև ի

ՅԿ թուականն մեր. յորում Սեփաթ Յինգերախոյն պարսպաց զքաղաքն յԱնի, և շինեաց զԿաթուղիկէ եկեղեցին. յորում ժամանակի և Գրեգոր Կաթուղիկոսն (որ զկի Մաշաոցի երբորդ Հայրապետ էր) փոխեաց զՀայրապետարանն ի Դշնոց ի քաղաքն յԱնի. Յոր և աւետաց ի ժամանակս ինչ, մինչ ի ՀԴ թիւն մեր, յորում վերջացաւ թագաւորութիւնն Բագրատունաց (. որպ վերջինն էր Գագիկ որդի Աշոտոց). և եկն պիղծն Արքայական և աւերեաց զքաղաքն յԱնի և զեկեղեցիսն ի ՀԺԹ թուոյն մերում ի Հայրապետութեանն Պետրոսի Կաթուղիկոսին. Յոյս միտցիս՝ ի միում ժամանակի՝ ի չորս տեղոջ Հայրապետ նստան ներհակ իրերայն, Պետրոսն ի Յանի, Գրեգոր վկայաւորն ի Մար, Թէոփրոսն ի Հան, և Պարսն ի Մարաշ: Ապա ի թուին ՀԻԵ, յորում հաստատեցաւ թագաւորութիւնն Հայոց ի Վիւլիկէ Յուրբեիւ, յեսաց Կոստանդ, յես որպ Բորս. ի ԺԷ առի թագաւորութեանն սարին. Գրեգոր (Յղոյն)՝ եղբայր ներսիս՝ փոխե զՀայրապետութեան Աթոռն ի Հառնիկոյն ի ՀԿՁ թուոյն մերում. Յորակ զամն աղայութեանն հասակին (զի էր ԺԾ ամաց), և զամն փոխեցն զԱթոռն ի Աիւ, Դաւիթ եղեմեազան Արթուրաւ ապստամբեցաւ և նստաւ Կաթուղիկոս յԱրթուրաւ ի այն թուիւ, և աւետաց Կաթուղիկոսութիւնն ի Հառնիկոյն՝ յրան ճՁԷ մինչև ի Ստեփաննոս ըսա կարգին. զի ունկին զպատիւ Հայրապետական և զԱջ Լուսաւորչին. (թեպէս և սմանք հետակն ի յուլեղ կարգին). Ապա ի չորրորդում առի Հայրապետութեանն սարին, եկն Մարայ Սուլթանն և զերեաց զՎոյն, զԿաթուղիկոսն և զԱջ Լուսաւորչին հանգերձ այլովք սրբութեամբք և եկեղեցական պաշտօնեկիք աարաւ ի Մար, ի ՁԻԴ թուոյն մերում. ուր և մուտ Ստեփաննոս Կաթուղիկոսն. Ապա այնուհետև փոխեցին զԱթոռն ի Աիւ, ուր և նրստաւ Գրեգոր Անուարեղեցին ի նոյն թուոյն. Արդ զգրեղին Ստեփաննոսի և Աջոյն որպայ ի Մար պատմեն ամենայն պատմագիրք. բայց զգարձ ինչ ոչ բնաւ. Թէպէտ և այնուհետև բազմիցս դերի և աւարի տունն Վիւլիկեոց ի Մարայւոյն, բայց միջ ոչ եղբք սաս: Ապա զկի ճԻԹ ամաց ևս զայ Սուլթանն Մարայ ի ՊԼԻ թուոյն մերում՝ ի ժամանակս Լեւոնի թագաւորութեանն, խաբաւ աւերի զՎիւլիկէ, և բոլորովն փրե և աւերե և զԼեւոն իւրայնովքն տանի ի Մար, և բառնայ զԹագաւորութիւնն Յուրբենեաց ըսա ամենից իջմարիտ պատմադրաց, և եղծանէ զՀայրապետութիւնն Վիւլիկեանց. Թէպէտ և այլք զկի այնորիկ որպէս զաշատարակալն ամբարատւանն ընդ Ատատւոց որպէս թէ մաքառիլ ի մտի ունկին. Բանդի որպէս երբեմն բարձմամբ թագաւորութեանն Բագրատունեաց փոխեցաւ Կաթուղիկոսարանն ի յԱնուոյ ի Վիւլիկէ, նոյնպէս և ի բառնիլ թագաւորութեանն Յուրբենեանց՝ փոխեցաւ անտի ի յիւր սեփական յԱթոռ ի Վաղարշապատ անօրինեց-

մանքն Աստուծոյ, Եանգի ի յամբիլ ասնն Վիգիկեանց և ի բառնիլ իշ-  
 քանութեանն Սուրբնեանց, յես ԺԼ ամի, ի ԳՂ. Թուռն մերում՝ ըստ  
 ամենից Զընարապետում՝ պատմազարց, յայտնեցաւ սուրբ Անն Լուսաւոր  
 չին ի յԷջիածնին, որ և ժողովեցան բար իշխանք, ժողովուրդք, և զմեա-  
 կանք աշխարհէս Լոյսոյ ի սուղտփննէն Աստուծոյ, յարարեցեալք ի բազ-  
 մապետեաց հրաշից, հաստատեցին զուրք Էջիածնին վերաքնն Ամնու Լոյս-  
 բապետական Ազգիս Լոյսոյ, և եղին կաթուղիկոս զակբ Կիրակոս, Իսկ առ-  
 ասնոր թեպէտ սանդոյք է կրկարեին զասն վերաարձանն սրբոյ Ազգ Լու-  
 սաւորչին մերոյ ի սուրբ Էջիածնին, սակցն մինչ յամենեցեալքն ի յախտ  
 ինքնահամբանն ոչ զարարն յարացեց ընդդեմ խմանի Զընարա-  
 քեանն, առ նոսա սասայուք զպոքանս ի կարնոյ:

Արդ այնու ժամանակա պատմիչքն և եղեալ գործքն ամենեքեան համա-  
 ձայն վիպնն՝ թէ ի յոյս ժամանակս Ազ Լուսաւորչին վերազարձաւ ի սուրբ  
 Էջիածնին, եթէ զա հախանարտիս, թէ որով և որպէս, ես սասցից՝ թէ  
 որով և որպէս փնտռեալ սուրբ Եշանն Աւրազոյ և Գեղարքն Աստու-  
 ծամեալ եկաւորեցան ի մեզ միջնորդութեամբ հարազատից սանց ծառ-  
 յիցն Աստուծոյ, նմեպպէս և սուրբ Ազ Լուսաւորչին ի յիս անխհական  
 յԱմնու, եթէ յայնս թերահաւատիս, և առ յոյս չէ զարմանք: Իսպ-  
 ձեալ եթէ երկուսոր և ամենեկալ Թագաւորի անարխութեանն ոչ հաւա-  
 աստ, առ բնից քեզ և զարարս երկուսոր և աշխարհակալ Թագաւորաց,  
 որոյ սչինչ կարես բացաւլ մինչ ներկայական եղելութիւնքն վիպնն:

Արդ որպէս ի վերջ սասցար, քանիցս անգամ Կաթուղիկոսարանն և բա-  
 ռըր ասնն Սոսոյ կողպանալ և աւերեալ եղին ի Մարոյ Սուրբանայն, թէ  
 եկեղեցականք և թէ աշխարհականք, և մանաւանդ առ Ստեփաննիոսիս, յա-  
 բում յայտնապէս ընդ կաթուղիկոսին և սուրբ Անն և այլք սրբաթիւնք  
 ասրեալ ասնն պատմիչք՝ և անտի առ ննջ վերադառնալ յոչ արեք ու-  
 նիք զվիպութիւն հաւաստի, թեպէտ հռչակէք որպէս և կամէք: Բայց միք  
 ունիմք զպատմիչն ժամանակին վիպոյ, որք համաձայն ասնն թէ, ի ԶԺ  
 Թուռն մերում մինչ Ջաղարիս կաթուղիկոսն Աղթամարու փոց ի Դաւ-  
 րեժ ի անդութիւն Ջհանդահ Թագաւորին, յոյժ սիրեցեալ ի նմանն՝  
 ընդգնու գիւթուղիկոսութիւնն Էջիածնին՝ ընդ նմին պարզ և զԱզ սուրբ  
 Լուսաւորչին, զԽաչգառն և զՈւրարն, և գոյ յԷջիածնին, եւ յես ժամա-  
 նակաց ի ԶԺԱ Թուռն ասնու զուրք Անն, զԽաչգառն և զՈւրարն, և զը-  
 նայ վերստին ի բնիկ անդին իսր յԱղթամար: Եւ յետոյ նոյն սուրբ Անն և  
 Խաչգառն և Ուրարն՝ ձեռամբ Արքանէս վարդապետին՝ վերադառնայ ի սուրբ  
 Էջիածնին ի ԶԺԶ Թուռն ի հայրապետութեանն Սարգիս և Յովհաննիսի,  
 Իսկ Ջհան - շաճն կը որպի Լարա - Իւսուֆին, որ ի Լենիթեաւորին ի բան-

որ արդիւնքն էր ի Մար ի բազում ժամանակս. ապա ի պակասիչ  
Անկթեմերին, եւեւ ի Մարս բազում զօրօք քոյ ի Դաւիթէ, և անց  
Թագաւորէ: Ասա՛ ինձ, զի՞նչ ինչ փոյթ պլ ազգի և աշխարհակալ Թագաւորս  
միջ սուս Աջ Հնարիչ և կամ խարիչ միջ սևազնեաց: Արց միջ զի-  
տեմբ և Հաւատա՞ք, սակայն զպարանս առայցը՝ զի և զուք Հաւատաւորիք:

ԳԼ. Բ.

Յարում ցոռանին յետ Քրիստոսի Աստուծոյ Կրոյ՝ Աստուծոյ, Հոռոտարիչի՛  
և Հայրաբարտ ազգի Կրոյ, հանրեց) իբրտանչեալ նշանաւոր քորձակն իբրեանց:

Նախկին և Հանրահանապէս Փրկիչն ամենայն մարդկան և շուսուորիչն  
բողբի աշխարհէ Յերն մի Գիտուս Գրիտոսն ընտրեաց իւր զերկատասան  
աշակերտս (զորս և աւարեալս, սիրելիս, բարեկանս, խորհրդականս և Հա-  
ղարադետս անուանեաց, զորս և կոչեաց լոյս և ալ աշխարհի. որոց և  
եւ զիշխանութիւն կապելոյ և արձակելոյ, փակելոյ և բանալոյ, զորս և  
կից և Հրազմեանց Հոգւովն իւրով սրտով, և Հրամայեաց երթալ յաշխարհ  
ամենայն և քարոզել զԱւետարանն իւր սուրբ, և անկ զամենայն ազգս  
և լեզուս ի խաւարէ կուտաշառութեան ի լոյս Աստուածդիտութեան, ըստ  
Էջմարիտ և Հանձնայն փրկչութեանց շարից սրբոց՝ Աւետարանչացն և Նո-  
ցուց սրբազանից առաքելոցն բանից): Որք են այսպիկ. Արմեն, որ և Վե-  
փոս և Պետրոս անուանեցան. որոց են երկոցին Թուղթըն Վաթուղիկեաց-  
և Անդրեաս եղբայր սորին. Յակոբոս և Յոհաննէս՝ որդիքն Ջերեմեայ,  
որք և որդիքն որոմանն անուանեցան. Այս Յոհաննու են. չորրորդ աւետա-  
րանն սուրբ, և երկրեան Թուղթըն կաթուղիկեացց: Փիլիպոս, Բարդուղի-  
մէոս և Բովնոս, որք միջ միջ անուանց Հանդիպեցան. Մատթէոս մարտա-  
ւորն, որ և Ղեփ կոչելիւ. սորս է առաջին աւետարանն. Յակոբոս տրիեայ  
որ է Յեռանդալոյն, որ և արգար կոչեցաւ. և սա նստաւ զհնի Տեառն:  
Պատրիարք Նորուսայէմ և առաջին մատոյց զփրկիտիան պատարագ, և սա  
որեաց զառաջին Թուղթն Վաթուղիկեացց, և առ յորդին Ջերեմեայ նկատ-  
մա՞ք՝ փոքր Յակոբ կոչեցաւ. Հմուտն նախանկարչն, որ Արմեն կոչե-  
ցաւ՝ և ազգական Գրիտոսի անուանեցաւ. որ է եղբայր՝ Յակոբոյ Տեառն-  
կոչոցն. Ղերես, որ նոյն ինքն է Յուզա Յակոբեան և Բարդեոս, և եղբայր  
Յակոբոյ և Հմուտի, վասն որոց և Յուզա Յակոբեան առի վասն եղբայրու-  
թեան նորին, և վասն զառմանն ի Յուզայէ մտանչէն. սա որեաց զՎաթու-  
ղիկեացց յետին Թուղթն, որ Յուզայի առի. Սոցա եղբայր մի և ոգոց Յովնէ,  
որ Յուստոս և Բարսաբայ ևս կոչի. սա յառաջադրեցաւ ընց Մատթէոսի

ի անդի մտանչին, բայց վիճաբն Մաճաթիայի անկաւ. վասն որոյ սա ընդ եօթմանանիցն հաշուեցաւ. Յուդա մտանիչն, զորոյ զտեղին յաջորդեաց Մատթիա:

Արդ վասն վերոյ յիշեցելոց երկց սրբոց առաքելոցդ, այս ինքն Յակոբայ, Հմաւօնի և Քաղէտի հարազատ եղբայրութեան իրերաց, առաքելութեանն Քրիստոսի, և ի թիւս երկոտասանից գլխաւորացն հաշուելոցն, թէպէտ ոչ ինչ գոյ կարծիք, զի է հաւատարի և ճշմարիտ, և ամենից զիսնոց ընդունելի. ոակայն՝ թէ՛ ո՞ր որդիք են, և որպէ՛ս ասին եղբայրք Քրիստոսի՝ գոյ առարկութիւն և ասարձայնութիւն ի մեզ մերոց վարդապետաց և այլայլոց: Գանդի մերս Հայաստանեայց Եկեղեցւոյ վարդապետք ասին թէ՛ սրբա կին որդիք Յօսեփայ աստուածաձօրն ի յայլէ կնոջն հետեկող վանտարակոյս և անստեղի վիպարութեանց սրբոց աւետարանչացն Մատթէոսի և Մարկոսի, որք ի ԺՊ և ի Ջ գրութան միապէս և համեմայն ասին թէ՛ եկեալ Յիսուս ի գաւառ իւր՝ ուսուցանելք զնոսա. և նոքա զարմացեալք ընդ իմաստութիւն նորա՝ ասէին. ուստի՞ իցէ սմա այս իմաստութիւն. ո՞չ սա է հիւանն որդի. ո՞չ մայր սորա կոչի Մարիամ՝, և եղբայրք սորա Յակոբոս, Յովսէի Սիմօն և Յուդաս. որքա ամենեքեան՝ առ մեզ են. և ի՞նչ Իսկ այլոց վարդապետք ասեն՝ թէ՛ ոչ կին որդիք Յօսեփայ, այլ Կրէօպայ, (զոր եղբայր ասին Յօսեփայ) որ Ալփէ ևս կոչիւր. Գանդի աւետարանիչքն մինչ զՅակոբոս՝ Յակոբ Ալփեան կոչեն, նոքա որդի Ալփէի իմանալով՝ այսպէս ասին, որ է թիւր իմացում. Զի Յակոբոս՝ եթէ վասն Յակոբ Ալփեան կոչելոցն՝ Ալփէի որդի լինիցէր, ապա զոչոչոյ Յակոբայ եղբայր Աբրահամ՝ որդի Յակոբայ պարտին իմանալ վասն Յուդայ Յակոբեան անելոցն, որ է յայտնի սուա. զի Յուդաս այս (որ է Աբրահամ և Քաղէտն որպէս ասացաւ,) եղբայր է Յակոբայ և ո՞չ որդի: Եւ մանաւանդ սրբազան Աւետարանիչքն (և առաքեալքն ևս) յամենայն ուրիք զեղբարս Քրիստոսի կոչեն զնոսա ի կողմանէն Յօսեփայ, և ո՞չ ուրիք զորդիս հօրեղբոր. Ասելոց եմք զայսմանէ և ի Ժ գրութն ի ճառքս Գանձասարու Վաթուղիկոսութեանն: Ուրեմն կարճառօտելով զայսմանէ, եկեացո՛ւք ի մեր յառաջադրութիւն:

Արդ վերոյ գրեցեալ երկոտասան սրբազան, գլխաւոր, համակարգ և մտաշունչ առաքեալքն՝ յիս ընկալման Հոգւոյն սրբոյ ի վերնաստանն, նոչոչոյ Հոգւոյն սրբոյ ազգմամբն բաժանեցին վիճակաւ զբոլոր ազգս և զիւրոս ի յիւրեանս. առ յորս և քնացին ի քարոզել ըստ հրամանին Քրիստոսի վարդապետին իւրեանց, նոյնպէս և զեօթանասուն և զերկուս աշակերտս բաժանեցին, առկող ի նոցանէ իւրաքանչիւրքն զերկուս և զերկուս Ազատ ազգս և երկիրս Հայոց անկաւ ի վիճակ վերոյ յիշեցելոյ սրբոյն Քաղէտի:

առաքելոյն որ է մի յերկուսանոց զհաւորաց առաքելոյն և եղբայր Յա-  
 կոբայ, Հմուձի և Յովակի որդւոցն Յուսուածաճօրն, որ Ղերես  
 և Յուրայ ևս կոչի ի սրբազան Աւետարանչացն, որպէս ցուցաւ. Իսկ ոչն  
 առաքելաւ մեր Քաղէս առնաւ ընդ իւր ի յեթմանանոցն զՆդիշէ և զԸՍ-  
 օսմիտ, և ելեալ յԵրուսաղէմ ընդ ծովեզերքն գոյ ի Սիւլիկիտ, ուր և  
 քարոզելով զԱւետարանն Գրիստոսի՝ գոյ մտանէ ի յառաջին Հայս ի Սեսա-  
 րիտ, և յուսուարեալ զերկրն՝ որհանէ զՀիմն Եկեղեցւոյն Գրիստոսի, և ձեռ-  
 նադրէ նոցա եպիսկոպոս զԹեոփիլոս: Եւ անտի ելեալ անցանելով ընդ գեան  
 Եփրատ, գոյ ի յԵփեսոս, ուր և մկրտէ զԱրքայ Թագաւորն Հայոց, ընդ նոին  
 և զքաղաքն և զերկրն ամենայն յուսուարէ Գրիստոսեական Հաւատովն:  
 Հինէ զերկրոցն, կարգէ զքահանայս, և ձեռնադրէ նոցա եպիսկոպոս  
 զԱրքէ կերպասագործն: Եւ անտի ելեալ գոյ ի յԱրտազ գաւառ առ ար-  
 քոյն Սանտարուի. յորմէ և կատարի ի փառս Գրիստոսի ի Թուղ Փըրկի-  
 շին մարց Ի՝ յետ Ե՝ ամբ Համբարձմանն: Յորոյ վերայ յետոյ Հրաշայի և  
 մեծափառ վանք կառուցանի, որ կոչոյ այժմ՝ և կոչի յանուն սրբոյն Քաղէ-  
 սի առաքելոյն: Եւ յետ կատարման ոտրին, Ստաթի աշակերտն սորին ել-  
 եալ ընդ Հիւսիսալ քնոյ ի Սիւնիտ, և անդ կատարի բարի մահաւաճի-  
 յարց վերայ ևս շինեն վանք Հրաշայի, որ կոչոյ մինչև ցայտօր, և կոչի  
 Յաթիւտ վանք: Իսկ միւս աշակերտն Եդիշէ՝ ելեալ գնաց յԵրուսաղէմ  
 առ սուրբ առաքելոյն Յակոբոս, ( որ էր եղբայր Քաղէսի և առաջին  
 Պատրիարք յԵրուսաղէմ, ) և պատմէ զկատարումն Քաղէսի: Վասն որոյ  
 և սուրբն Յակոբոս ձեռնադրէ զՆդիշէ եպիսկոպոս, և վերագործուցանէ  
 զնա ի սեղի Քաղէսի ի փինակ նորին: Որոյ եկեալ ի յԱզուանս, և անդ  
 կատարեցաւ. Յետ այսորիկ դառնաց ազգս մեր ըստ մեծի մասին վերստին ի  
 կառաւարչառութիւն՝ Թագաւորօր և իշխանօր մինչև իսուրբն Գրիգոր Պալ-  
 Հուհան: Արք ի Յայսմաւուրն մեր (որ սխալ է ըստ մեծի մասին և աղճա-  
 սեալ, ) և յարչս սմանս պատմագիրս յորս գրին թէ՛ Քաղէս առաքելոյն  
 մեր էր ի Թուղ եթմանանոցն, կամ ընդ Քովայի առաքելոյն լեալ և ի  
 նմանէ առաքելեալ ի Հայս, և կամ թէ այլ է Յուրայ Յակոբեան, և այլ  
 ոչն Քաղէս, բնաւքն սուտք են, և ի Թիւրամաց ներմուծեցեալք յան-  
 Հագութենէ և ի զանցառութենէ նախնեաց երանելեացն մերոց Թոլլարե-  
 ցեալք՝ և ի խաժամուժս Հասարակեալք, և յապա եկելոցն՝ որպէս թէ ի  
 նախնեաց աւանդեցեալ, վասն որոյ իբրև զՀաւատստի ընկալեալք. և կամ  
 թէ՛ ի Համանուտութենէ Ստաթի աշակերտին առաքելոյս մեծի (որպէս  
 առաջաւ) խարեցեալք: Քանզի առաքելաւ մեր և մեծս Քաղէս էր ի  
 Թուղ երկրաստանիցն, եղբայր Յակոբայ և Հմուձի, զհաւոր և մեծ Ա-  
 աքելեալ և Նուսուարիչ ազգիս Հայոց, որ և նոյնս է Ղերես և Յուրայ

Յանդրեանս... անս պատահի սուրբ առաքեալն Բարդուղիմէոս ի յԹմեաց վանք կոչեցեալ տեղւոյն, որք երկրքեանն ևս քարտղն զՔրիստոս ի ևայտ և կատարին յեղկրս ևայոց, և կոչին առաքեալք և նախկին Լուսաւարէք ևայոց, Եւ ի տեղւոջ կատարեան սոյն Բարդուղիմէոսի սրբոյ առաքելոցս ևս շինի վանք հրաշայլի յանուն սոյնն որ է . . . այս ինքն ի յմերթակ որ կայ Վինգւ ցայտօր, Եւ յետ կատարեան սրբոյ առաքելոցն մերոց՝ զինի մահունն մեծին Աբգարոս՝ Անանկ որդի նորա ի յԹգեախոյ, և քեաւորքի նորին Անանարոսի ի ևայո ի յԱրտազ Կաւառի գորով Թագաւորեալք՝ տքացեալք զՔրիստոս վերաբարձան ի կուսարշաուկիւնն ընդ նոսին և բոլոր ազգ զս ևայոց, Թեպէտ յարեք յարեք քաղնկին ի ծածածկ քրիստոնեայք, Եպտ յետ ՄԿԴ ամաց, ի Թուոյն Փրկչին մերոյ ՅԴ, և ի ժն ամի Թագաւորեալ Թեան Յրդաստայ, պջեկու թեպէտն Աստուծոյ Կանկ սուրբն Գրիգոր ի Ախուրազն և բժշկէ զՏարուածեալն Յրդաս և զգիւսաբաւ ազգս ևայոց, և ան ծէ ք հաւաստ Բրիստոսի, եւ ի ՅՆ ամին Փրկչին մերոյ, ի ժՁ ամին Յրդասայ զնայ ի Վեաքիս առ Աւանդիոս պատրիարքն, (որ ի Բարեոսի և ի Թեոփիլոսի քաւազանն էր յարորդեալ զկարգն) անու ի նմանկ զոճուան քահանայութեան, ընդ նմին և զԵպիսկոպոսութիւն արքիս ևայոց, և քոյ նստի ևայրապետ ևայոց ի ՅԸ Թուոջ Փրկչին մերոյ, ի ժն ամի Թագաւորութեան Յրդասայ, յան Լ, Ի ՅԻԸ Թուոջ Փրկչին մերոյ, ի ԻԳ ամի ևայրապետութեանն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, և ի ԻԳ ամի Թագաւորութեանն Կոստանդիանոսի, և ի ԼԹ ամի Տրդասայ լինի ժողովն նոյնոց, Սուրբն Արիստակես՝ որդի նորա, յան Է, Սուրբն Արիստեոս՝ եղբայր նորա, յան ժԿ, Սուրբն Յուսիկ՝ որդի նորա, յան Զ, Փառնկրանց յան Ե, Սուրբն Ներսէս՝ Թոռն Յուսիան, յան ԼԴ, Ի ՅԶԹ Թուոջն Բրիստոսի ի Դ ամին մեծին Թեոփիլոսի, ի ԻԲ ամին Արշակայ մերոյ Թագաւորին, ի ԽԱ ամին մեծին Ներսէսի, լինի ժողովն Կոստանդիանոսի, և Ապուստակես յան ժԳ, Սուրբն Մահակ սրբութեան յան ԾԱ, Ի ՆԾԷ Թուին Բրիստոսի, ի ԻԱ ամին գորբ Թեոփիլոսին, յետ քարձման Թագաւորութեան մերոյ Է ամի, Ի ԻԲ ամին մեծին Մահակայ լինի ժողովն Եփեսոսի, Ի ՆԿԱ Թուին Բրիստոսի, ի ԻԵ ամին նոյն Թեոփիլոսի յանիշխանութեան մերոյ ժԱ ամին, ի ԻԶ ամին Մահակայ լինի երկրորդ ժողովն Եփեսոսի, Սուրբն Յասիկ՝ որ նահատակի ընդ Ալեան գեանց, յան Բ, Տէր Գիւս՝ աշակերտ սրբոյն Մահակայ յան ժԵ, Սա ի ինչորոց սրբոյն Աւարդանայ և յայոց իշխանացն մերոց՝ զիոնկ զաթոռն ի Գլին, Ի ՆԷԱ ամին Բրիստոսի ի յառաջին ամին Մարկիանոսի պղծոյն, ի Ը ամի իշխանութեանն Աւարդանայ, ի Գ ամի Գիւս Կաթաղիկոսին մերոյ, լինի ժողովն Բագիկոսին, Եւ յաւարտ սորա նա-

Հատակին Լարգանոնք. Քայ անիջիան անգն Լայոց յամ Զ. Ապս  
կարսի Մարզպան Լայոց՝ Պերոզ արքայն պարսից՝ զՄաքնասոնն զկնի պղղ-  
ժցն Յազկերտի ստաակիցոյն. Յէր Յօհան Մանգարոււնի յամ ԺԲ. Աս  
քարդարեաց ժանակարգութիւն Եկեղեցւոյ մերոյ. Յէր Բարգէն յամ  
Ե. Ի մանանակս պոյց երկուց Լայրապետացս և ի յարդրմանէ սոցին՝  
բարեպաշտք թաքնադէն Կոստանդնուպոլսոյ՝ Ջնոն և Անաստաս բոլոր  
Եսաղիպոյիք. Յունք, Ատրք, Լայիք, Աղւանք, և Վրք, երկիցս ան-  
գամ. ժողով արարեալ նորոգելն զժողովն Բաղկերտի. Յէր Սամուէլ ի  
Բիւսանեաց յամ Ե. Ի սորս յառուրս կարգեալ Մարզպան Լայոց  
Վահան Մամիկոնեան, որդի Լմայեկոյ. Յէր Մուշէ ի Կուտիկց, յամ Ը.  
Յէր Աահակ ի Լարբոյ յամ Ե. Յէր Գրիստապիոր ի Բաղրևանոցոյ յամ  
Ե. Յէր Աւանդ յամ Բ. Յէր Ներսէս ի յՆշտարակոյ յամ Բ. Եւ  
սա. արար զժողով ի Ղլին ընդ գեմ երկարմանաց. Յէր Յովհաննէս ի Գա-  
բիւնեանոց. յամ ԺԵ. Յառուրս սորս յես Վահանայ լինի Մարզպան  
Լայոց Վարդ եղբայր նորս. Յես Վարդայ Տանիկք տիրեն Լայոց յամ  
Դ. Արս Մժեմ Գոււնի յամ Լ. Ապս Տանիկք յամ ԼԶ. Յէր Մօսէս  
յԵփուսարոյ յամ Լ. Ի սորս Գամին և ի Գրիստապ ՇՅԲ թաւօն կար-  
գեալս թիւն Լայոց, յորում ասացաւ մէկ. Եւ ի Ժ թնօնն մերում կար-  
գեալս Հնդհարիբեակ չքունին. Յէր Արահամ յՈՆշտանեաց յամ ԻԳ.  
Ի սորս Ժաննանէս փոյղիք քաջն Ամնաս Բաղրատունի, որ զՆՅՅեալ ձին  
իւր երկու. Ենդանին սղծալ՝ և թնքն ի ճից անտաւաց կախեալ բարձրա-  
ցալցանէր յերկրէ. Ի Ը ամի Կաթուղիկոսութեանն Արահամու. և ի ԾԸ  
թաւօնն մերում, լինի Մարզպան Լայոց Դախիմ Սահառունին զկնի Տաճ-  
կաց. Ի Լ թաւօնն մերում, և ի Ի ամին սորս, Մահման թազաւորէ, ուս-  
տի և սխանի թիւն Տանիկաց. Ի ԻԴ ամին սորս, և ի ԼԳ թաւօնն մերում  
Վիգք բաժանին ի Լայոց. Յէր Յօհան ի Կոգոխոյ, որ ընդ գեմ Արահա-  
մու նստաւ ի Կարին, և մնաւ յառաջ քան զԱրահամն. Սա Հեռեկեցաւ  
աղանդոյն քաղկեդոնի. Յէր Կոստաս Արաղածոնն յամ Ը. Յէր Գը-  
րիստապիոր յամ Բ. Յէր Եդր ի Նիգ գաւառէ յամ Բ. Սա գնաց ի Կարին  
Ի Կոչ Լեբակէ արքային Յունաց, և ընդանի զժողովն Բաղկերտի. որո՞  
զկարն աննու յարքայն զՊոգա գիւղն և զպն. Ի սորս Բամին լինի Մարզ-  
պան Լայոց ԲՊոգորոս Ուշտանին. Յէր Ներսէս շինօզն ի Տայ, գաւառէ  
յամ Ի. Սա շինէ գոււրքն Գրիգոր խոչ Երմիաճնի, որ այժմ Հանգրեցեալ  
է. Ի սորս Ժաննանիս լինի մարզպան Լայոց Համազասպ և յետոյ Գրի-  
գոր Մամիկոնեան. Յէր Անաստաս յԱրկուուլոյ՝ յամ Զ. Սա Հարկեաց  
զԱնանեաց. Հիրակացին շինել զքօմարն անշարժապէտ. Յէր Իսրայէլ յամ  
Զ. Յէր Իսահակ ի Արափորոյ յամ ԻԳ. Սա գնաց ի Խաւան ընդդեմ

Մահմաթ՝ յորդորմանք ի շխանացն մերոց, և անդ մեռաւ: Յաւուրս յայտարի կին ի շխանք Քէղորոս, Գրիգոր, Ներսէ՛, Աշոտ Բիրաւանան, Սեբաս Բաղրասունի, և այլք՝ որք յԵփեղեցին նախիջնանու պրկեցան ի Յաճկաց ի սէրն Գրիստոսի: Վասն որոյ յամս բազումն ծնաց անխշեան Ազգաւորաց: Յէր Եղիա յԱղիովաց յամս ԺԴ: Սա երջծ ի սուս կարգին ըզբազուրներսէն Աղուանից, և ձեռնադրեաց նոցա Վաթուղիկոս զակը Սեփան, Յէր Յօհան Օձնեցին յամս ԺԱ: Սա զնաց առ Յուլիանն Յաճկաց, և էառ հրաման, և վարեաց զազգն Յունաց ի յերկրս Հայոց, և արար ժողով ի Մանածկերոս, սրբեաց զազգս մեր ի չար աղանգքն Բաղիերանի, որ ծնացեալ էր ի յԵզրայ Վաթուղիկոսէն: Յէր Դաւիթ յԱրամունեաց յամս ԺԿ: Յէր Տրդատ յամս ԻԳ: Միւս Յէր Տրդատ յամս Գ: Յէր Սիսն ի Բազուանից յամս Ը: Ի սոյն ժամանակս Մուշեղ Մամիկոնեան՝ այլովք ազատագունդ զօրօք կոտորեցան ի սաճկաց: Յէր Եսայի ի Նիգ քաւառէ յամս ԺԿ: Ի սորա Ջ ամին յառաջանայ ի շխանն Սեբասթ: Յէր Ստեփաննոս, Յէր Յովար, Յէր Սողոմն, յամս Գ: Յէր Դէորդ ի Բիրաւանայ յամս Գ: Յէր Յովսէս յԱրագածուքանէ յամս ԺԱ: Ի սորա Թ ամին լինի ի շխան Հայոց Աշոտ որդին Սեբասայ: Յէր Դաւիթ յամս ԻԷ: Յէր Յովհաննէս ի Վուսէից յամս ԻԳ: Ի շխան Հայոց Սեբաս որդին Աշոտայ: Յէր Ջաբարիա ի Վուսէից Չազց Վաթուղիկոսայ յամս ԻԲ: Ի շխանայ ի շխան Աշոտ որդի Սեբասթայ: Յէր Դէորդ Գաւնեցի յամս ԻԲ: Սա գերեցաւ ի Լափիղաց: յետոյ աղատեցեալ ձկնաց զկղակս Վաթուղիկոսացն Աղուանից: Ի սորա Ժ ամին և ի թուականութեան Հայոց ՅԼԵ, վերայ գրեալ Աշոտն թագաւորէ Հայոց, եւ յետ Ե ամի վախճանի: Թագաւորէ որդի սորին Սեբաս Տիեզերակալն, որ յետոյ յանօրէն Յուսիպայ ի Դոյն քաղաքին մարտիրոսանայ: Մնայ անխշեան ազգս Հայոց յամս Ե: Յէր Մաշտոց սուրբըն, Գաւնեցի, յամս Ա: Յէր Տովհաննէս պատմագիր և ազգական Մաշտոցայ և Դէորդայ յամս ԻԸ: Ի սորա ԻԳ ամին թագաւորէ Աշոտ որդին Սրմբատայ: Յէր Ստեփաննոս յամս Ը: Յէր Քէղորոս յամս ԺԱ: Ի սորա Բ ամին թագաւորէ Աբաս որդին Սեբասայ և եղբայր Աշոտայ, որ էր խաղաղարար և վանաշէն: Ես շինեաց զՎաթուղիկէն յԱնուց և զՀառմաթ վանքն և զայլսն: Յէր Եղիսէ յամս Է: Յէր Անանիա Մոկացին յամս ԻԲ: Սա եւ ոչ սակաւ աշխատի և հոգայ վասն Գանձասարու ոմանց Վաթուղիկոսաց լըրութեանն և ազատագրութեանն, փնչէ նուաճէ վերջապէս: Ի սորա Ը ամին թագաւորէ Աշոտ որդին Աբասայ, որ Ողորմածն կոչուր: Յերկրորդ ամի թագաւորութեանն սորա, կին սորայ Խարովանոյ թագուհին շինէ զվանքն Հաղպատու ի ՅԴ թուօրն մերոյ, և յետ Ժ ամի ինքն շինէ զՍանահոյ վանքն: Յէր Վահան հերձուածօղ, (որ) ընկեցեալ եղև, յամս Ա: Յէր Սան

փաննա արդարեւ Մաշտոցին, յամս Բ. Տէր Խաչիկ յամս ԻԱ. Ի սորա Բ ամբ  
 թագաւորէ Լայոց Սմբատ Ըաճնչաճ որդին Աշոտոյ ողորմածին. Սա պա-  
 րարտէ զբազարն յԱնի և ըստ արժանւոյ թագաւորութեան պայծառացու-  
 ցանէ. Եւ սկսածի շինել զուսրն Գրիգոր զարմանալին, և ոչ կարաց կա-  
 տարել. յետոյ կին Գագիկայ թագաւորին կատարէ. Ի սոյն ժամանակս և  
 Վահրամ իշխանն իշխանաց շինէ զուխան Մարմարաշէն. Այս Սմբատ  
 Ըաճնչաճս, (որ և Տիեզերակալ կոչեցաւ) զեղբայր իւր Գեորգին թագաւո-  
 րեցուցանէ ի Վերս ի ՅԼԾ թուօն մերոյ, որ եղև սկիզբն Վրաց թագաւո-  
 րութեան: Տէր Սարգիս յամս ԻԾ. Ի սոյն ամի և թագաւորէ Գագիկ՝ որ-  
 գին Աշոտոյ՝ եղբայր Սմբատայ: Տէր Պետրոս գեառաբարձն, յետ և յառաջ,  
 յամս ԻԳ. Ի սորա Զ ամին թագաւորէ Յովհաննէս որդին Գագիկայ, որ և  
 Սեփան կոչիւր. Ի ժամանակս յոյս ի ՆԷ թուօն մերոյ, Սենկեբրիժ՝  
 արքայն Վասպուրի, նեղեալ ի Յաճկաց՝ ետ զերկիրն իւր Յունաց  
 կայսրն Վապի, և էստ ի նմանէ զՍերաստիա, յոր և եկեալ բնակեցաւ.  
 և անդ մեռաւ: Սա շինեաց զվանքն սուրբ Նշանին անդ. Ի ՆԶԶ թուօլ  
 մերոյ անխա. գտութիւն ի մէջ Պետրոս Վաթուղիկոսին և Յովհաննէս  
 թագաւորին. վասն որոյ գնաց Վաթուղիկոսն ի Վասպուր, յոր եկաց ամս  
 Գ. և թագաւորն բերեալ զԴեոսկորոսն ի Սանահնոյ՝ արար Վաթուղիկոս,  
 և բերեալ զՊետրոսն եր ի բանտի ԺԸ ամիս. Եկեալ Վաթուղիկոսն Աղու-  
 ածից՝ արար Տշառութիւն, զՏէր Պետրոսն եղին յաթառ իւր, և զԴեոս-  
 կորոսն աւաղեցին յիւր անդին. Ի ԻԶ ամի Տէր Պետրոսին թագաւորեցու-  
 ցանն յԱնի զԳագիկ որդին Աշոտոյ որ ոչ կարաց վարել զթագաւորու-  
 թիւնն. Զսա սարան ի Վաստանդուպոլիս Յոյնք ազատագունդ իշխանօք,  
 և անդ արեղին, և ինքեանք արեղին Լայոց յամս ԻԳ. Ապա ի թուօն  
 մերոյ ՇԺԳ եին Ալփալանն անիծեալ՝ էստ զՍԱնի, և ընդ ձեռամբ արար  
 զԼայոց. Եւ բարձաւ աստանօր թագաւորութիւնն Բագրատունեաց իսպառ.  
 Յառաջ քան զայս, թագաւորն Յունաց Վաստանդին լսելով զբարի հաճ  
 բաւ Պետրոս Վաթուղիկոսին, հրաւիրէ ի գնալ առ յինքն. որ և ի ՇԳ  
 թուօն մերոյ օրհնէ զքեռնորդին իւր զտէր Խաչիկն ի տեղի իւր Վաթու-  
 ղիկոս, և ինքն գնաց ի Պօլիս յուր և կեցեալ յամս Գ, դառնայ ի Սե-  
 բաստիա, և անդ վախճանի ի ՇԸ թուօն մերոյ. Տէր Խաչիկ՝ քեռնորդն  
 Տեառն Պետրոսի՝ յամս Ը. Լայոց թագաւոր ոչ գոյ. Վասն որոյ Տուկիժ  
 պիղձ թագաւորն Յունաց տարեալ զսա ի Պօլիս. վասն ի յիւրեանց աղան-  
 դրն դարձուցանելոյ և խափանելոյ զՎաթուղիկոսութիւնն Լայոց, և վասն  
 ընչից Տեառն Պետրոսին, շատ նեղութիւնս հասուցեալ և ի հուր արկեալ,  
 ոչինչ կարաց առնել. զի զերծեալ Աստուծով, դարձաւ ի Սերաստիայ, և  
 անդ վախճանեցաւ. Տէր Գրիգոր Վկայսերն, որ Վահրամ կոչիւր, որդի

Գրիգորիս Մագիստրոսի իշխանին Բջնեցւոյ. Սա ո՛չ եկաց ի յաթուռն, այլ գնաց ի Պօղիս վանն թարգմանութեան գրոց, անտի ի յԵթուսաղեմ՝ և յԵգիպտոս. Վասն որոց եզին յաթուռն յԱնի մնացորդք Հայոց զանէր Բարանզ ազգական նշնոյ վկայաւորին. Արդ ի սոյն ժամանակս նստան չարս Վաթուղիկոսք Հայոց, Տէր Բարսեղն՝ յԱնի, Տէր Գրիգոր Վահրամն ի յԵգիպտոս, Տէր Պօղոսն ի Մարաշ, և Տէր Քորոսն ի Հոնի. Վասն որոց և թիւք սոցա անհաւասարի գողով՝ ոչ ուղղապէս գնին ի պատմագիրս. Այլ և ի սոյն ժամանակս զօրացեալ իշխանքն Հայոց ի Վիւլիկէ, որք ի Բագրատունեաց և ի Սէնեքերեմեանց, սկսան բռնանալ մինչև և թագաւորել ժամանակս ինչ. Որոց առաջինն էր Ռուբէն, ի ԸԻՆ կամ աւելի և պակաս թուօջն մերու՛մ. Տէր Գրիգոր Յրայն, ազգական վերնոյն Վահրամեայ և Բարաղի, եղբայր ներսիս շնորհալոյն, որ ի թուօջն մերոյ ԸՊՁ նստի Վաթուղիկոս յԱնի յամս Ծ. Սա էր հնգետասանանայ (Թեպէտ էր կատարեալ և շընորհալի)՝ մինչ նստաւ, և փոխեաց զաթուռն ի Հռօմկայն առ թագաւորսն մեր ի Վիւլիկէ. Վասն որոց Ախթամարու Առաջնորդ Դաւիթ վարդապետն ապրտամբեալ նստի կաթողիկոս յԱխթամար, որ մնաց մինչև զայսօր. Ձմիթ Յուբէի նստի որդի նորս Վոսանզին. Ձմիթ սորա որդի սորա Քորոս, զինի սորա ԼԼան թագաւորք. Տէր ներսէս շնորհալին՝ եղբայր Գրիգորի՝ յամս Է. Ձմիթ ԼԼանի որդին Քորոս, յես նորս եղբայր նորս Մէհ, յես նորս Ռուբէն, յես նորս ԼԼան, որ յերկուց թագաւորաց բնկալաւ. զթագ, և եղև անուանի. Տէր Գրիգոր սղայն՝ եղբոր որդի ներսէօթն՝ յամս Ի. որ և Քարապէտ ասի. Տէր Գրիգոր Ապիրատն՝ եղբայր վերնոյն՝ յամս Ը. Տէր Յովհաննէս մեծարարոյն յամս Ը. Ընկենուսն զառ և զննն զԴաւիթ յամս Բ. յետոյ զնոյն Յովհաննէս հաստատեն վերսօին յամս Ժ. Տէր Վոսանզին Բարձրաբերեցին յամս ԽԷ. Յես ԼԼանի գնին թագաւոր զԹիլիպ Գուանի. Յետոյ սպանեալ զառ զննն թագաւոր զԼեթօմ. Ի սոյն ժամանակի՝ ի ՌՀ թուօջն ել Քաթարն և աւերեաց զբոլոր աշխարհս. Ձորոյ որսպետութիւնն ասն ի Վիրակոս պատմագիրն. և յայսմ միջոցի սկզբնաւորեցաւ Օսմանցւոց թագաւորութիւնն ի յՕսմանէն՝ ի ՈՂ թուօջն. Ձի ի Մահմեդէն մինչև զայս վայր՝ Սուլթանք և Խալիֆայք կոչէին, այսուհետև թագաւորք անուանեցան՝ ի յՕսմանէն սկսեալ. Տէր Յակոբ Յարսնանցին կեցեալ յամս ԺԲ, յետոյ արքայեցին. Ի 2Ժ թուօջն մերոյ Մարցին քոյ ի վերայ Սոսայ, և շատ աւերս առնէ, զորդիս Հեթօմեայ թագաւորին զԹորոսպանտնն և զԼԷօն գերեն. Յես Բ ամի ազատեցեալ գոյ, և Հեթօմ զառ կարգէ թագաւոր, և ինքն հրօժարեալ կրօնաւորի. Կրկին ի սորա ժամանակին քոյ Մարայ Սուլթանն ի Վիւլիկէ, և աւերի և գերի զպմնեսեան ի 2ԺԲ թուօջն. Տէր Վոսանզին Ախթամարայ, որ Գ ամ, և ապա արքայեցին:

Բազուրէ Հայոց զինի Լեւոնի Հեթում, յետոյ զոյ յերուսաղէմ կրօնաւորի: Տէր Ստեփաննաս յեկեղեաց գաւառէն յամս Գ. Ի 2108 թուօն մերոյ՝ ի յերրորդ ամին սորա զոյ վերտօնն Սուլթանն Մարոց ի Վիլիկի տարէ և գերէ խոպաւ, զՎաթուղիկոսն և զտուրք Աջն Լուսաւորէն և զՅՂ սրբութիւնն ամի ի Մար: Եւ բառնոյ ի Վիլիկիոյ զՎաթուղիկոսարանն: Ենա պտորիկ նստի ի Սիս Գրիգոր Անաւորգեցի յամս ժԳ: Բազուրէ Հայոց Լեւոն՝ որդի Քարտի. յետ սորա թաղաւորնն Քորոս, Սմբատ, Վաստանդին, և Լեւոն, ի սակաւ ժամանակս: Տէր Վաստանդին Հերաշուածոյ յամս ժԵ. Ընդ ամին և թաղաւորէ Օշին եղբայր Հեթմոց. յետ սորա Լեւոն որդին Այս Հերաշուածոյ Վաթուղիկոս և Օշին թաղաւոր զՏաշածանս յարուցին ի վերոյ ուղղափառաց, որպէս զթաղաւորս պղաղբացոյ, յորմէ շատք մեռան: Տէր Վաստանդին Լաճրոննացին յամս Ե: Տէր Յակոբ Սեպին՝ ընտրոյցի վերնոյոյ Գրիգորի՝ յամս ժԴ: Չսա սըստրեցին՝ և եղին զՏէր Միխիթարն յամս ժԴ: Ենա Միխիթարայ դարձեալ նստաւ վերոյ Յակոբն յամս Գ: Չինի Լեւոնի թաղաւորէ Վաստանդին: Եայս միտոցիս էր Յոհան Գոնեցին: Տէր Մեսրոպ յամս ԻԶ, որ երարձ զճուրն ի սուրբ խորհրդոն և Հերքեաց զՎիթարմայութիւնն, որ մուծեալ էր ի Հայս ի Վաստանդին Հերաշուածոյցն և յՕշին թաղաւորէն: Բազուր Հայոց Վաստանդին, յետոյ և միւս Վաստանդին, յետոյ և միւս Վաստանդին, և միւս չորրորդ Վաստանդին, յետոյ Լեւոն որդի յրնձին: Ապա եկն Սուլթանն Մարոց ի ՊԼԹ թուօն մերում, և գերեաց զԼեւոն և զկինն, և զամենայն Վիլիկիա տարաւ ի Մար: ար վերջացաւ թաղաւորութիւնն Վիլիկիեցացոյ, ընդ նմին և Վաթուղիկոսութիւն: զի ի վախճանել Տեառն Մեսրոպայր ի ՊԼԳ թուօն մերոց, նստան թէպէտ ի Սիս ժԲ Վաթուղիկոսուհը ևս, սակայն անշանք և անհաճաւք, որք են՝ Վաստանդին, Պողոս, Բէնդորոս, Վարապետ, Դաւիթ, Վարապետ, Յակոբ Վաստանդին, Գրիգոր, Պողոս, Վաստանդին և Յոսեփ, մինչև ի ՊԼ թիւն մեր, յորում շնորհօքն Աստուծոյ վերանորոգեցաւ սուրբ Էջմիածին, յորում նստաւ Տէր Վերակոս:

ԳԼ. Գ.

Յաղթեալ թէ ոչ ի եղին վերանորոգիչ և բարեբարդ որքոյ Ամուսոյս Էջմիածնի. երկրորդապէս՝ որ ի ասորք Ամուսոյս նստան, յորում և ցոսցանին Վաթուղիկոս ամեն ասոյս վերջեւ ի Էջմիածնի մինչև ի Մեծոս Սիւնեցին:

Արդ յարջան միտոցումն՝ յորս Վաթուղիկոսուհըն ի ԳՎԵՆ և ի յԱՅԻ նստան, երբեմն ի յԱՎՅԱՍՏԱՅ Էջմիածնի գտանեկին վանականք և կրօնաւորք

Թէ և կարի սակաւութիւնը և գծուծք: Իսկ խմբոցին ի յամս ՅԻԴ՝ յորս նըզտան ի Սիս, իսպառ մնաց ի յամայութեան մինչև ի ԳՂ Թիւն մեր. յորում վերստին գծացաւ Տէր ի յիւրակերտ Աթոռն, և նորոգեաց. յորում սկզբունն նստաւ Վիրակոս ճգնազգեաց Հայրապետն: Ուրեմն նախ և յառաջ անհուն և անհամար է բարերարութիւն սրբոյ Լուսաւորչին մերոց յորոյ ձեռն հրաշակերտեցաւ նախապէս սուրբ Աթոռս Էջմիածին, և լուսաւորեցաւ ազգ մեր հաւաստով Աստուածապաշտութեան, և նորին որդաց և Թոռանցն, և նմանեաց նոցին, որովք սնաւ և զարգացաւ և պայծառացաւ պէս պէս շնորհք և հոգևորական կարգօք, նոյնպէս և բարեպաշտ և Քրիստոսասէր Թագաւորացն մերոց և իշխանացն, որովք մնաց հաստատուն և պահեցաւ ապահով յամենից Թշնամեաց և ապականչաց. քան զորս ոչ ունիմք բաց յԱստուծոյ բարերար ազգս Հայոց, երկրորդապէս ոչ սակաւք են բարերարութիւնք և այնց Հայրապետացն մերոց, որք զինի ամայութեան սրբոյ Աթոռոյս՝ և անտիրանաղոյ Ազգիս մերոյ՝ վերտօրն նոր նորոգեցին զսա՝ և պայծառացուցին քան զոր էին, և զԱզգս մեր ջրուեալ և անիշխանացեալ վերաժողովելով ընդ Թևօք սորին պահպանեցին ի հոգևոր և ի մարմնաւոր Թշնամեաց, որք որպէս Զօրաբարեղ եղին մեզ յիւրաբանչիւր ժամանակս զինի Սողոմոնի, Եւ մանաւանդ ի Դովին, յԱնի, և ի Սիս նստողք Հայրապետքն ի ժամանակս իշխանութեան մերոյնց Թագաւորաց և իշխանացն էին, որովք նստէին, և որոց օգնականութեամբն կառավարէին զգործս, և վարէին զՀայրապետական իշխանութիւնն, որք որպէս Թէ՛ ի վարդէ և ի մանուշակէ կազմէին զզեղս առաջարարս: Իսկ յետինքս՝ որք վերանորոգելով զուրբ Աթոռս ի սմա եզին զՀայրապետականն Աթոռ՝ ի ժամանակս իշխանութեան սառնկաց, և օտարաց, և բարբարոս Թշնամեաց էին, որք որպէս Թէ՛ ի մահացուցչաց առնուին զզեղս կենաց անձնամասն վշտակութեամբս: Վասն պստրիկ և առաջինքն որովհետև առ յինքեանս ունէին առ ձեռն պատրաստ զմարմնաւոր զհրամանատուան և դիւրութեամբս առնուին զոր ինչ և կամէին, ոչինչ արարին զփոյթ զարձանագրութեանց վասն ապագայիցս, յորոց ոչինչ ունիմք ահա յետինքս զգիր մի օգտարար և որպիսածանոյց (ո՞ գիտէ, Թերևս լեալք ևս իցեն, անհետացեալք իցեն, որք Թէ լինէին ևս, ոչինչ օգնէին այժմ, որովհետև պղտղեցաւ իշխանութիւնն): Իսկ յետինքս որովհետև զժուարտ և բազմաւ նեղութեամբս, և ի հազարից խնդրեաց զմին հազիւ առ ձեռն բերէին ի հեռի, յօտար, և ի բարբարոս տերանց, բազմաւ հոգունակութեամբս ի գիր արձանացուցին՝ և մեզ պապապիս թողին, որք ահա՛ որպէս Թէ նոցին արձանագիր Թևանգութեամբքն վարեմք զժամանակս մեր որքան և իցէ: Որոց ամենից յիշտ-

առին օրհնութեամբ եղիցի: Արդ որպէս ստացար ի ՊՂ թուին մերոյ վերտօնն հաստատեցաւ սուրբ Աթոռս Եղեփածին ի յիշխանութեան Յաճկաց (Պարսից) Զհան—չաճ թագաւորին Դարիժու, յորում Վաթուղիկոս նախ Կիրակոս, ապա Գրիգոր Մակուեցին ի ՊՂԹ թուոյն: Արդ՝ մինչև ի յոս ժամանակ՝ ի սուրբ Աթոռոջս ամենեկին ո՛չ էր մնացեալ յիշատակագիր մի, կամ արքունական, և կամ դատաւարական, կամ շահաւոյ հիշոյ 1) և պոսց պայտօնաց, և կամ Հեփոփոսոյ 2) Հայերէն, և կամ Յաճկերէն, Այսուհետև սկսան Վաթուղիկոսունքն յիւրաքանչիւր ժամանակս նորոգել զհին աւուրքքն ունեցեալն, և կամ նորապէս ստանալով առաւելու զայլոց, զանոց, զվճարաւ գեղորոյս, և զայլ պայտօնս, արքունական և դատաւարական գրովք տաճկաց, զորս ունի ահա՛ սուրբ աթոռս. զորս յիւրաքանչիւր տեղւոյն արձանացուցար գրելով յառակ յատուկ՝ թըւովք, ժամանակք, գիտաւարութեամբք և որոց ձեռամբք և ժամանակօքքն: Վասն պարզիկ ասար կարճաւօտիք խօսելով՝ դարձուցուր զքանս մեր ի յառաջակց մնացեալ պատմութիւնս՝ կարգաւ ի մեզ հասուցանելով:

Նախապէս Գրիգոր Վաթուղիկոսն Մակուեցի, որոյ յաւուրս նախար ի Դարիժ թագաւոր Զհանչաճն: Եւ ի պատն ամի Հայրապետութեան սորին, ի ԶԹ թուոյն մերում էաւ և զՎաստանգնուպոլիս Սուլթան Մահմէան ի Յունաց: Այնուհետև տիրեցին իսպառ Յաճկեր Յունաց՝ Հայոց և Պարսից երկրաց միտքամոցն, և բարձաւ իշխանութիւն քրիստոնէից: Վասն որոյ այնուհետև ամենայն գործակալք և գործք քրիստոնէից, թէ հոգևորք և թէ մարմաւորք, սկսան հրամանաւ և հրամանադրովք Յաճկաց կարգիլ և կատարիլ: Արդ որպէս ստացար, Գրիգոր Վաթուղիկոսս պո ունի զաշխատանս ի սուրբ Աթոռոջս. քանզի նախապէս սա նորոգեաց զշինուածս սրբոյ Աթոռոյս ի ներքուստ և արասքուստ, զվճարաւ գեղորոյս առնելով հաստատուն գիշտական 3) և դատաւարական գրովք տաճկականօք, որք ահա՛ կան արդէն, զորս յիւրաքանչիւր տեղւոյն տեսցուք: Իսկ զինի սորին մինչև ի Մօսէս Վաթուղիկոսն Սիւնեցի՝ նսաօղ Վաթուղիկոսունքն ի զանաշունչ բերմանց ժամանակացն ո՛չ դր ունի արարեալ զնշանաւոր բարեբարութիւնս ինչ գրելի: Եւ յայտքան միջոցս գրեթէ սուրբ Աթոռս ի վաս անգր ընկնանայր օր աւուր՝ և յանչքութիւն: Ապա զինի Յեառն Գրիգորի՝ Յէր Արիստակէս ի ԶԹ թուոյն, Յէր Զաքարիա ի ԶԹ թուոյն, Սա նախ Վաթուղիկոսս գոյով Ախթամարու, յետոյ ի գալն Զհանչաճ թագաւորին ի Դալիժ, զնայ սա առ նա ընծայիք, յորմէ և առնու զՎաթուղիկոսութիւն Եղեփածինի, ընդ նմին և զԱջ սուրբ Լուսաւորչին, ըզ-

1) Կալուածագիր: 2) Սեփականագիր կամ ստացուածագիր: 3) Դատարանական:

Խաչուած 1) և զՈւրարն, և զայ յԵղիսիմն նստի Կաթուղիկոս: յեսց ի ԶԺՆ Թուօն առեալ զսուրբ Ան զնայ վերասին յԱթմանար: Յես Զաքարիայի՝ Յէր Սարգիս ի ԶԺԵ Թուօն: Յէր Յովհաննէս ի ԶԻԳ Թուօն, Ի Ժամանակս սորա սուրբ Աջ Լուսաւորչին յԱթմանարս եկն ի սուրբ Էջմիածին՝ ձեռաքն Վրթանէս եպիսկոպոսին Լաչպունեցոյ ի ԶԻԶ Թուօն: Յէր Սարգիս ի նոյն Թուօն ի ԶԻԵ: Ի սորա ԺԶ ամին, ի ԶԻ Թուօն սկիզբն առնու թաղաւորութիւն Պարսից ի Էթովաղէն, որց առաջինն է Լաչ-Ինժոյղէն, որ թաղաւորեաց յամն ԼԶ: Սա էր որդի Էթուհէ տարին՝ որդոյ Էթուհէն ի հօր կողմանէն, և ի մօր կողմանէ՝ քեռորդի Սաղաւ թաղաւորին՝ թուան Զհանշահին Գարիժու: Զկնի որց թաղաւորեաց որդին սորա Լաչ-Թահմազն, յամն ԾԱ: Յէր Արիստակէս ի ԶԻՆ թղուօն: Յէր Բագեոս ի ԶԻԷ Թուօն: Յէր Եղիսէ ի ԶԾԳ Թուօն: Յէր Ներսէս ի ԶԾԵ Թուօն: Յէր Զաքարիա ի ԶԿԴ Թուօն: Յէր Սարգիս ի ԶԿԲ Թուօն: Յէր Գրիգոր ի ԶԶԵ: Յէր Ստեփաննոս ի ԶԶԼ Թուօն: Յէր Միքայէլ ի ՌԶ Թուօն: Այս Միքայէս նախադէս ձկնաց զկղզիս Աղուանից և Աթմանարս Կաթուղիկոսացն, որք կամէին սանածել յԱթաս սուրբ Էջմիածին: Զի Աղուանիցն կամէին զՆախիջևան, զՆախաքանի, զԼաիրան, զԱխսան, և զԼոսի: Իսկ Աթմանարայն զԽոյ և զՍալմաս, զՎան, զՅաւիթ, զԱրձնէլ, զԽլաթ, զՄուշ և զԲաղէլ յինքանս որաւել ի վիճակ: Արց աղաքաւ եհան զհաստատուն (Խաչուած 2) ի Լաչ-Թահմազէն, զի այս յԷջմիածն վիճակբո՝ զԿենձե, զԲարգոյ և զԶակամներն և ս յԷջմիածնի են, որց ամի որ իշխեսցե ձեռնադնել: Ար ահա՝ զայ նոյն Ռադամն ի սուրբ Աթոսոս, որպէս անցես յիւրում անզոնն ի Ժզլուի: Զկնի Յետան Միքայէլ՝ Յէր Բարսեղ, Յէր Գրիգոր, և Յէր Ստեփաննոս ի ՌԺԶ Թուօն: Յէր Բագեոս և Յէր Ասաղէլ ի ՌԻԵ Թուօն: Յէր Գալիթ ի ՌԼԵ Թուօն: Յէր Մեղքիսէթ ի ՌԻԲ Թուօն: Յէր Սրապիոն ի ՌԾԲ Թուօն: Յէր Սահակ ի ՌԼԴ Թուօն: Յէր Մուսէս Սիւնեցին ի ՌԼԸ Թուօն: Արդ ի վերազրկոցդ՝ և մանաւանդ զթի եղևոցս Կաթուղիկոսացս՝ մինչև ի Յակոբ Զուրայեցին, ամս զամանս որպիսութիւնս ի Յաւարէլ պատմագիրն, և ի Յակոբայ մինչև ի յԱղեքանոց Զուրայեցին ի Զաքարիա Գառնաղիցն:

1) Խաչուած: 2) Հրամանագիր, կամ Թաղաւորական Իրովարուկ:

Յարժ ցուցանին խոյ՝ ժոցեալ, կոթուղիտացն որոյ Ախուսոյ է Մտնոս  
Քիչէ ցառ ժոլ, և բարեբարութիւնն նոցն խոյնուորապէս:

Արա ի Հասանիլ Թուականի մերոյ է ՌՀԸ, յարժ ժամանակի եր-  
կիրս արևելեան և սուրբ Աթուս էր ընդ իշխանութեամբ արքայն Պարսեց  
Շահ - Ազաթն մեծի, որոյ Հասանուան և մանուանդ Աստուծոյ նախա-  
սահմանութեամբն և Հոգւոյն որոյ սուրբութեամբն առնու զլուարարու-  
թիւն որոյ Աթուսոյ՝ է ՌՀԸ Թուին Մուսն Միւնեցին նախապէս: Եւ ի  
ժուանիլ Շահ - Ազաթն առաջնոյ, ի նստիլ Թուան նորին Շահ - Սէֆուս;  
սանու զՊարսեցիկութեամբն ևս ի ՌՀԸ Թուսն մերում, և ի Թագա-  
ւորութեան Օսմանցոց Սուլթան Մուրատն: Աս էր պր. Հոգեբնկալ, ա-  
ռարկմազարդ, և բնակարան շորհազ Հոգւոյն որոյ, սիրեցեալ Սասունոց  
և ի մարդեան, որ ի նստիլն Սթուս սուրբ, որպէս թի նոր ինորոյ ի Հե-  
մանն նորոցոց զուրբ Աթուս՝ և որոյժառացոց Հոգևորական կարգոց, և  
մարմնական պետոյր: Ար դրկի՞ն զկիւ Լուսուարին մերոյ և Թուանոց նո-  
րին և Թարգմանչոցն մերոց, յորոց Հոգրապետացն ոչ գրն եղև երախտա-  
ւոր և բարեբար որոյ Աթուսոյ և Ազգես մերոյ նման սարին, և զկիւ սարին  
յարբարոլ Հոգրապետացն Փիլիպպոսի և Յակոբոյ, զորոց ի սեղաւն իւ-  
րեանց աւեցաւք:

Արք այս երանելիս Մուսն նախապէս երարն Սթուսոյ զՀարիւր խոսան  
հախոյն՝ 1) որ յառաջնոց իր Հարկ էր մնացեալ ի վերոյ որոյ Աթու-  
սոյ՝ յամբ յամբ սող արքունեաց: Զայս մի՛ թեթև և փոքր ինչ կար-  
ծեցեա, զի ըստ անուանն թեղեա Հարիւր յիշխար, սակայն ի սալն Հա-  
զարիւր ոչ վնարիւր, և մանուանդ նորն զՏնովն անցեալ գոյով՝ զիդացեալ  
կոյր ի վերոյ որոյ Աթուսոյ: Այլ և պատեաց զպարիսպն որոյ Աթուսոյ  
շորհմամբի ի Հոգր, և յորինեաց ի Հեւեհակոզն որոյ Աթուսոյ ըզ-  
խուցան միտարանից գեղեցիկ և թրանեալ աղիւսոց, և ի յարևմտեան կողմ  
դեմամեծ Թանապիան քարեայ կամարով և զայլ շինուածն: Ի Հարա-  
ւաթն կողմ զանտեսասունն, զսեղանտասունն երկուս, բայց Ամուսն՝ փոյ-  
սեայ, զփուսան և զայլ ամարան ցարնեայ և այլոց իրաց, և զխուցան ա-  
րևելեան ըստ մտնն: Կարգեաց և զորոցս մանկանց, յորմէ ելին բազում  
խնամուան և շորհալի վարդապետք: Զարդարեաց և պղովք բազմոց եղա-  
նափոք զուրբ Աթուս՝ որպէս ասացաւք: Սա շինեաց և զԵկեղեցին Ամա-

1) Մուրատ. նորն կարծ. ելին

յայտնաց ամենեցուն հաստատուն յուսովն և Աստուածահաճոց վարուքն՝  
 Եւ ինչ աւարտան զանգիտանն, նորոքաց և պայծառացոց զվան-  
 րայս և զեկեղեցիս. որ և զվանս սրբոյն Սահիանձօսի՝ որ ի Լաթու-  
 ձորն՝ ի հիմանէ նորոքաց զեկեղեցին և գիւղցն ի վարքապետութեան  
 իւրում: Եւ ապա քնաց ի Սապահան առ փոքր Լահ-ապտանս Եսթէ և  
 յոյժ սիրեցեալ՝ ետա զմեր գեղջ վեց դանկ մուլքն վերստին ստասիկ հրա-  
 մանագրովք, և դարձաւ յԱթուս Եւ յեւ պարտիկ քնեաց և քնուլքս պոչոց  
 գեոդօրեկց և յաւել զքերն սրբոց ամուսոյս հաստատուն Ղապուշի-տ և  
 զխմեական գրովք- որք քան ի սուրբ Աթուսդու և զպոչ բաղաւձս պսակ-  
 փս բարերարութիւնս, զորս յիւրաքանչիւր անգղոյն տեսցաւ: Այլ և Եհան  
 զջուրս երկուս (որ Կանթան ասի) ի ներքոյ երկրի, ի միջոյ արևմտեցե և հե-  
 փսոյ ի գետոյն կուսն, զմին հանեալ ի վայր կոչս գեղջ միջոյ, որով ուս-  
 օքն արտարայք բաղումք, ուր և շինեաց զփոքր ծովակո, ընդ արով և  
 կազմեաց զջրաղացս և զղինկո: Իսկ զմիւսն Եհան ի մէջ սրբոց Աթուսոյ  
 ի վայելչութիւն սորին: Յր ելանէ ի հարաւակոյս ի ներքոյ գրաննն, յորոյ  
 վերայ շինեաց և զջրաղաց մի բաղմագուս, որ ոչ կրէիք խափանի: Այլ  
 և շինեաց զերիս ծովակո ևս, զմին ի վեր կոչս հանդեզ Մոլա-Յուրտան  
 քեղջն՝ մեծ և բազմախոյժ 1), զերկրորդն ի յարևելակոյս Ղաթիպիփոչեցե-  
 լոյ՝ փոքրագոյն. և զերրորդն՝ քան զառ մեծագոյն՝ ի վայր կոչս ի դուրս  
 Մանկասարի պղւոյն, որք ոչ սակաւ անին զօգտութիւնս պոչեաց և ար-  
 տորեկց:

Ապա ի ժամանակս սորին յառաջացաւ սեւազուլիս մի յերկրէն Երևա-  
 նու՝ Ռնսփրիոս անուն, որը լիրք և անարորոյն, որ որքան ընկալնոր  
 ի Պատմողիկոսէն զսեր և զներողութիւն, այնքան կատաղիւր և յաւելոյր  
 զչարութիւն բաղմաղնաս: Մինչ զի միանգամ և երկիցս և երկոց խրատա-  
 կան պատժօք ոչ զպատացեալ, յետոյ ի պատիժս մնաւ իրաւամբ: Այս  
 Ռնսփրիոս եղիս իւրեան համախոհ և զամանս սեւազուլիս (որք վասն նոյ-  
 նապէս անկարգութեանց իւրեանց քանիցս յանդիմանեցեալք կին ի Պա-  
 թողիկոսէն) որք գրին առ Սղիազար վարդապետն Լուսնայեցին (որ Պաա-  
 րիարզ էր Սրուսաղէմի) թի, եկ ի սուրբ Աթուս, մեր զքեզ Պատմողիկոս  
 նստուցանենք ասա, զրկուլ և զրպարտանս բազումս (ի Յափիւրայ Պատմողի-  
 կոսէ): Եւ ինքն Ռնսփրիոսն ևս զկնի թղթոյն կէտլ քնաց առ Սղիազարն:  
 Եւ Սղիազարն ևս յօժար գրով՝ ժողովէ զամանս սեւազուլիս աստի և անտի՝  
 ի Բերիս քաղաքն, և օժանի Պատմողիկոս. որք ընդ Ռնսփրիոսին խոտանան  
 սալ յարքունիս Օսմանցոյն յամէ յամ ԲՃ դուսուշ. և հրաման

1) Խորհ, ծախ:

Հանեն՝ զի ի Պարսից կուսէ ամենեին սեպղուխ մի ոչ անցցէ ի Հոռն Օսմանցոց. Ապա զԿաթայիցի Մարտիրոս վարդապետն՝ (որ էր Պարսիարք Կոստանդնուպօղոյ և ի նոյնոյ Յակոբայ Կաթողիկոսէն լեալ Եպիսկոպոս. բարեբարոյ, առաջնորդք. իշխանք, և ժողովուրդք երկրին ի մի եկեղև առաքելին ի Եջմիածին՝ ի Հրաւիրել զՅակոբ կաթողիկոսն ի Կոստանդնուպօղիս՝ առ հոգալ վասն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի. Որ և առեալ ընդ իւր զԹագաւորական նորէ յերէթն 1) Փիղիճպոս Կաթողիկոսին՝ (զի գեռիւքն շունէր) եղեալ գնաց ի մեծն Պօղիս, և արդ արարեալ Սուլթան Մահմատ Թագաւորին, Ետուժող ամօթայից արար զներհակն իւր. զի Թագաւորն ետ սմա զհրաման Կաթողիկոսութեան արքունական գրով, և զներհակն պատել Տրամայեաց. առ յոր եկեալ Եղիազարն միջնորդք՝ Մեղայ գոչեաց և հնազանդեաց. Ըպա եղեալ փառաւորապէս Յակոբ Կաթողիկոսն գործաւ ի սուրբ Աթոռս. Եւ յետ այնորիկ հարկեցեալ ի բազմաց պակասութեանց և մանաւանդ ի պարտատեարցն Սնոփրիսոսի (զորս արարեալ էր նենգութեամբ յանուն սրբոյ Աթոռոյս յաթոռակալութեան իւրում,) զգուեցեալ Կաթողիկոսին՝ ել և գնաց յերկիրն Յունաց, զի թերևս զօրնութիւնս գացէ. և հասեալ ի Կոստանդնուպօղիս քաղաքն, և անդ փոխի առ Բրիտանս ի Ռէճիթ Թոնին. Որ և թաղեցաւ ի գերեզմանատանն Բէկօղլի կոչեցեալ. Ունի հոգացեալ և զգրեանս արքունականս և դատաւորականս օգտարարս, զորս յետոյ ի տեղոջն տեսցուք:

Վասն եպիսկոպոս Կաթողիկոսի

Տէր Եղիազար Հոռովայեցի (որ նախապէս օծեցեալ գողով լուսալ կայր) նստի ի ՌէճԼԱ Թոնոջն ի սուրբ Էջմիածին, ի Թագաւորութեանն Պարսից Շահ Սուլթանի, և Օսմանցոց Սուլթան Ահմատին. Սա էր այր ճարտարաբան և ճոռուախօս, յաջողակ և ահաւոր, յորմէ ամենեքիտն երկնչեին թէ մարտիւք և լիկ այրիւք. Մինչ զի զբազում պարտս սրբոյ Աթոռոյս՝ որք մեացեալք եին յառաջնոց, սա զամենայնսն անհետ արար՝ առնլով զմարհակն ի պարտատեարցն, և ազատեաց զսուրբ Աթոռս ի նոցանէ. Սա շինեաց զբազում եկեղեցիս և արար զնորագութիւնս բազմաց վանօրեից. Նոյնպէս արար և ի սուրբն Հոփսիսի. և Գայիանէի զպարիսպն պատեաց. զգաւթթան շինեաց ի հիմանէ, և զիտուցս բազումս ի բնակութիւն միաբանից տեղոյն. Ի սուրբ Աթոռոջ, զԿաթողիկէ ի վերայ սրբոյ Խման տեղոցն կանգնեաց չորիւք սեամիք Իմ 2) քարիւք, և հաստատեաց սեղան՝ զի

1) Հարսը — շիրիք, զիր, հրովարտակ Թագաւորական: 2) Անտաշ, հասարակ. ելի:

Պատարագ մատչիցի: Զերկուս կողմունս ի միջոյ տաճարին Հիւսիսոյ և հարաւոյ՝ բարձրացոյց յերկրէ: (որք յառաջ հաւատարք էին յատակի տաճարին) և արար սեղան ի պատարագ մատչիչ, որք են սրբոյն Ստեփաննոսի և սրբոյն Կարապետի խորանքն: Կորեաց զմէջ եկեղեցւոյս հաստատուն վիմաքարիւք, զի մի՛ յառաջ մատչիցին խառնիճաղանճքն: ուր յեցեալք Միաբանքն կանգնին այժմ: Ըինեաց և զերիս զանգակատունս ի տանիս տաճարին, Զարեհյս, ի հիւսիս, և ի հարաւ: գեղեցիկ յօրինուածովք: որովք եղեն հինգ կամոդիկէ ի տանիս տաճարին: Եւ զայլ բազում բարութիւնս արար: Եւ այսպէս խորիս կենօք մնացեալ՝ փոխի ի քրիստոս ի ՌՃԼԹ թուոյն մերում: և զնի ի յաջ կողմն գաւթի սուրբ Գայիանէին՝ զոր ինքն էր շինեալ: Ունի և զգրեանս արքունական և դատաւորական հոգացեալ ի յօգուտ սրբոյ Աթոռոցոս, զորս յետոյ յիւրում տեղւոյն գրեսցուք:

Վասն նաճապետ կարողիտիս:

Նստի ի սուրբ Էջմիածին Կամոդիկոս Տէր նահապետ Ուրհայեցին ի ՌՃԼ թուոյն մերում, ի ժամանակս թագաւորացն Պարսից Հազ-Սուլէյմանին և Հազ-Հիւսէինին, և Օսմանցւոց Սուլթան Ահմետին և Մուստաֆային: Եւ սա էր նման Եղիազարու, (որոյ էր աշակերտ,) այր ճոռամախօս և փառապարծ, իշխան և ահարկու, յորմէ կասկածէին ամենքեան: Սա շինեաց զՅաճարն Ըողակամ կոչեցելոյ ի հիմանէ գեղեցկաշար վիմօք ընդ զանգակատանն և ընդ ամենայն շինուածոց նորին՝ արդեամբք Ըսոթեմեցի Աղամալ իշխանին: Սա ի յԵրևան ի ներքնակողմն բերթին հուպ Սարվանդար կոչեցեալ գեղջն՝ ծակեաց զլեռն ձորակին, ուր ընթանայ գետն Հրազդան, և ջաղխելով զվէմն, բանալով զխորափոր առուս մեծաւ աշխարութեամբ և անհամար դրամածախութեամբ՝ երբք զջուր ի գետոյն Հրազդանի ի գեղս մեր ի յօգուտ պղեստանացն: Ըինեաց և զգեղեցիկ և զմեծածախ կամուրջն Օշականայ գեղջ ի վերայ Բասախ գետոյն խարտեալ քարիւ: Ըինեաց զՉորագեղջ՝ անապատն, զեկեղեցին և զխուցարն: գնեաց և զչրջակայ առնան, և զներքոյ ձորոյն անապատի վարսն ամենայն, որք արդէն են սրբոյ Աթոռոցոս: Ըինեաց զԵրևանու երկու Եկեղեցիսն, Բանաքեռու, զՎոնտին, և զայլոց բազմաց գեղօրէկց եկեղեցիս խարտեալ քարիւ ի հիմանէ: Գրէթէ յերկիրս Երևանու որբան քարաշէն Եկեղեցիք կան ըստ մեծի մասին ի սմանէ են շինեցեալք: Արար և զայլ շինութիւնս և զօգտակար գործս յԱթոռոջս և յերկրոջս: Ունի հոգացեալ և զգրեանս արքունական և դատաւորական ի յօգուտ սրբոյ Աթոռոցոս, զորս յիւրում տեղւոյն տեսցուք:

Եպա ի ՌՃԽԳ Թուօնն ի շորորդում՝ ամի Կաթողիկոսութեան սորին՝ Զուղայու Առաջնորդ Սահփաննոս վարդապետն թագաւորական գրով ելեալ ի Զուղայէ՝ գայ յԵջմիածին և նստի Կաթողիկոս, և զՆահապետն բնիկու յԱթոռոյն: Իսկ Նահապետն ևս զն այցեալ նստի ի Դավրէժ քաղաքն, և անդուսա վերափն բերէ զհրամանագիր Կաթողիկոսութեան իւրոյ ի Հաչէն և յՕսմանցւոց թագաւորէն, և գայ նստի յԵջմիածին ի ՌՃԽԶ Թուօնն, և զՍահփաննոս զնէ ի կալանս, ուր և վախճանի իսկ ի ՌՃԽԷ Թուօնն, զոր տարեալ թաղեն ի Խորվիրապայ վանքն: Վասն որոյ ոչ սակաւ լինի խռովութիւն ի մէջ Զուղայի սեպղիացն և Կաթողիկոսին մինչև ի ՌՃԾԳ Թիւն մեր, յորում վախճանի Նահապետն և թաղի յաջակողմն գաւթին սուրբ Հոգակաթի, զոր ինքն էր շինեալ: Եւ նստի Աղէքսանդր Զուղայեցի ի ՌՃԾԸ Թուօնն մերում:

Վասն Աղերանեցի Կարողիկոսի:

Նստի Տէր Աղերանդր Զուղայեցի Կաթողիկոս ի յԵջմիածին, ի ՌՃԾԶ Թուօնն մերում, ի թագաւորութեան Պարսից Հաչ-Էփեսէինին, և Օսմանցւոց Սուլթան Ահմատին: Սա էր այր վանական, և տեղեակ Աստուածաշունչ գրոց, հանձարեղ և շինարար: Ար զբազում հասցեալ շինուածս սրբոյ Աթոռոյս նորոգեաց. զձմեան Սեղանատունն վերանորոգեաց կամարով և խարտեալ քարամբ: Զրնիկ այդին սրբոյ Աթոռոյս՝ որ է հանդէպ սրբոյն Հոխիսիմեայ՝ մեծացոց ի կողմանցն և պարսպեաց, Հարստացոց բազմադիմի եղանակօք զսուրբ Աթոռս եկեղեցական զարդուք և արտաքին կահուք և անասնօք: Ծաւել ևս մուքս և զարդինս արքունական և դատաւորական գրովք ի սուրբ Աթոռս, զորս յետոյ գրեցուք: Եւ կեցեալ բարւոք քաղաքավարութեամբ՝ վախճանի ի ՌՃԿԳ Թուօնն մերում: Եւ թաղի ի սուրբ Աթոռս ի ներքոյ մեծի զանգակատանն, յաջակողմն դրան սրբոյ տաճարիս:

Վասն Աստուածատուր Կարողիկոսի:

Նստի Տէր Աստուածատուր Համատանցի Կաթողիկոս ի յԵջմիածին ի ՌՃԿԳ Թուօնն մերում, ի ժամանակս թագաւորացն Պարսից Հաչ-Էփեսէինին, և Օսմանցւոց Սուլթան Ահմատին: Սա էր այր հեղաբարոյ և հոգեկի, շնորհաշատ և գեղեցկատես, ջերմեռանդ և արտասուեղ. որ ի նստինն՝ արար զբազում բարեբարութիւնս սրբոյ Աթոռոյս և երկրիս. կրեաց և զբազում նեղութիւնս և զտառապանս: Զի յաւուրս սորա վրդովեցաւ թագաւորու-

Թիւնն Պարսից, և փոխեցաւ ի յԵղուանս: Սա զարգարեաց զմէջն մեծի տաճարիս. զի շինեաց և զսուրբ Իջման տեղն մարմարեայ քարիւ ի վերայ չորից մարմարեայ սեանց, և ծաղկեցոյց ոսկւով և պէս պէս երանգօք, և արար զարմանալիս տեսողաց, նմանապէս և զճակատ մեծի սեղանոյն ա-րար մարմարեանայ. սպիտակացոյց բաամբ և ծաղկեաց զրոզր տաճարս ի միջոյ կողմանէ: Եւ զեկեղեցւոյ առաջնոյ Աւագ դասի մին սիւնն (և ըստ ոմանց զչորեոին սիւնն ևս) ի Հիմանէ նորոգեաց, նորոգեաց սա-լիւ և զյատակս մեծի տաճարիս: Եինեաց և զտնտեսատունն քարիւ և կամարով, և եհան ջրհոր ի մէջն: Եւ ըստ ոմանց՝ Հիւսիսոյ կողման գեղջս մերոյ զվերին մեծ ծովակն ի Բարաքիթն կոչեցեալ, մերձ Մոլլադուր-տուն գեղջն, սա շինեալ է վանն սահման լինեոյ և սիւն-1) անպաստանայն գեղջս մերոյ, Հոգացեալ ունի և օգտարար գրեանս աքրունական և դատա-ւորական, զորս յետոյ գրեցուք: Եւ ապա ի ՌՃՀԻ Թուոյ մերում փո-խի առ Տէր, և Թաղի ի գաւիթն արդոյն Հոխիսիմէի՝ ի յաջ կողմն Կոյս Ծանիւր, թէպէտ գրեցաք թէ վերին մեծ ծովակն նա է շինեցեալ, բայց յետոյ հաստատեցաք, որ Զուղպեցի Յակոբ Ասթուղիկոսն է շինեալ ընդ պոյց չորից ծովակացն, որպէս ասացաւ լիովին ի ԺԸ զլուին ի ճառօ գրոցն:

Վասն կարպետ կարգիպիսի:

Նստի Ասթուղիկոս ի սուրբ Իջմանին Տէր Արապետ Զէյթունցին ի ՌՃՀԵ Թուոյն մերում, ի ժամանակս Թագաւորացն Պարսից Աղուան Մահմաւին, և Օսմանցւոց Սուլթանն Ահմետին: Սա էր այր ծեր և անձ-նեայ, մեծաշուք և առատաձեռն: Երոյ ժամանակն Օսմանցիք սիրէին երկրիս մերում մինչև ի Սուլթանիայ, որք ի ՌՃՀԿ Թուին առին ի Պար-սից մինչ Աղուանն էտո զԱսպահան ի ՌՃՀԸ Թուին, և Ռուսուն էտո զԳիլան: Սա ետ նկարել զպատկերս երկոտասան Առաքեցոցն ի ճակատ Աւագ խորանին և ետ ծաղկել ոսկեզօծ և գեղեցիկ պուճօք: Աւելի հոգա-ցեալ և զգրեանս օգտարարս, զորս յետոյ գրեցուք: Եւ մինչ ի ժամա-նակս սորա երկիրս մեր ընդ իշխանութեամբ Օսմանցւոց էր, ուստի և սա կարի յառաջողէմ և յաջողակ էր ի բանս և սիրիւր ի նոցանց, զԵրևա-նու մէջք Յակոբճանն ի կախողանէն իջուցեալ ապրեցոյց ի մահուա-նէն: Եւ ըստ ոմանց, շնորհաշատի և պերճիմաստի, Տեսան Սիմեօն Առ-տուածարանի վարդապետն Երևանցւոց զմեծ և զարժանի արձանագրեցման

1) Սահման, եզր:

գործն ոչ է զանց առնելի, որ է ի ՌՃՀԳ Թուօն. մինչ Օսմանցին ի մերս կոյս գիտնաց և էառ զերկիրս մեր, յիշեալ Յիսկան փորձապետն ի Գոսաանդ-նուպոլիս նուիրակ եր սրբոց Աթոռոյս, մեծաւ հոգունակութեամբ զյոս-մանագիրս եհան ի Թագաւորէն ի վերայ Կրէ-կերէն<sup>1)</sup> իւրոյ, զի ի յաթոսս ամենին ոչ մերձեացին և մի շնաս ինչ ասացին, որպէս և եղևն. Ար ասա նոյն հարի շերիֆս գոյ ի սուրբ Աթոռու: Ապա ի ՌՃՀԸ Թուօն փոխի Կարապետ Կաթողիկոսն առ Յեր, և դնի ի գաւիթ սրբոյն Հոսիսիսեալ ի ձախակողմն կոյս: Սա ի հրաւիրէն ի մեծ Պպիս օժեցաւ Կաթողիկոս խելա-գրու Թեամբ և չար զհաւարութեամբ Բաղիշեցի Յովհաննէս վարդապե-տին (որ յայնմ ժամանակի Պատրիարք էր նոյնոյ քաղաքին Պոլսոյ): Քան-զի ես օժանել զառ ի Կաթողիկոս՝ որպէս ասացաք, և ինքն և իւրքն ձեռ-նադրեցան անդ Եպիսկոպոս: Եւ մինչ ետես զի ամենայն ըղձից իւրոց ասա ժամանակ է լնանցանն, (զի տեսանէր զԿարապետ Կաթողիկոսն փառիտ և անտեղեակ որպիսութեանց սրբոց Աթոռոյս,) յաւել և զայս չարու-թիւնս. զի զարդա տալն Կաթողիկոսաց Թագաւորացն Օսմանցաց ընդ ձեռ-առաք իւրով արար: Յայնմ որէ սովորութիւն եղև՝ զի զոր ինչ խնդիրս անիլին Կաթողիկոսքն ի յՕսմանցաց Թագաւորէն, Պատրիարքն Պոլսոյ ասոյցէ զարդաքն և ո՛չ այլ զք. որպէս ասացաւ լիապէս ի ԻԲ զը-լուին ի ճառս Օսմանցաց գրեանցն:

Վաս Մշեցի Արքեպիսկոպոս:

Նստի ի յԱթոսս Երջիսեմին Կաթողիկոս Յեր Արքեպիսկոպոս Մշեցին ի ՌՃՀԳ Թուօն մերում, ի ժամանակս Թագաւորացն Պարսից ՀաՏ-ԹաՏմազին, և Օսմանցաց Սուլթան Մահմուտին: Քանզի ի ՌՃՀԸ Թը-ւին, Նասր անուն մի զզրացեալ, կանէ ի Խորասանոյ բազմօք զօրօք պարսկականօք գոյ ի վերայ Աղուանից ի յԱսպահան, և յաղթեալ փա-խուցանէ զնսա յերկրէն Պարսից, և զՀաՏ-ԹաՏմազն՝ որ էր փախստական ի Խորասան, բերեալ նստուցանէ ի բնիկ աթոռան իւրեանց յԱսպահան: Որ և յետոյ զԱրարատեան և զյայսկուսի երկրացս ևս ի ձեռաց Օս-մանցոցն էառ, և արար զնսա փախստական: Եւ զերկիրն Գիլանու իւրա-նոյքն ի յԱւուստաց էառ, և հաստատեաց վերստին զՊարսից Թագաւո-րութիւնն Այս Արքեպիսկոպոսն Կաթողիկոսիս է ժամանակն երկիրս մեր և սուրբ Աթոռս զեռ ևս ընդ ի շխանութեամբ Օսմանցոց էր: Եւ սա էր սր առ-քնի և ճգնազգեաց, հեղ և բարեբարոյ, աղօթասէր և տօնակատար: Որ ի

1) Սերապիեր. սպարապետ:

մէջ մեծի Յաճարիս զտաջնոյ գատի երկուս սիղանն կառոցց և անուանեաց սուրբ Յակոբ և սուրբ Լուսաւորիչ: Զորս և զարգարեաց ծաղկօք և մարգարեական պատկերովք: Եւ զամենայն պատկերսն՝ որք գոն ի յորմունսն և ի սիւնսն տաճարին՝ սա եա նկարել: Շինեաց և զփունատունն քարիւ տաշեցե ովք: Կանանպէս և զերկոսին արտագնաց տեղիսն միարանից ի հիւսիսակոյս երկու անկիւնսն պարսպին սա շինեաց հաստատուն քարամբ: Արար և զայլ բազում բարութիւնս: Եւ ունի հոգացեալ զգրեանս օրտարարս զորս յետոյ գրեսցուք: Ապա ի ՌՃՁԳ թուին վախճանի, և զնի ի գաւիթ սրբոյն Գայիանեայ ի ձախակողմն կոյս:

Վասն Կրեւացի Աբրահամ Կաթողիկոսի՝

Նստի ի սուրբ Էջմիածին Կաթողիկոս Տէր Աբրահամ Կրեւացին ի ՌՃՁԳ թուոյն մերում, ի ժամանակս թագաւորացն Պարսից Նատր շահին, և Օսմանցւոց սուլթան Մահմուտին. քանզի ի սոյն ամիս վերոյ յիշեալ Նատր խանն Խորասանցի եկն բազմօք զօրօք, և էառ զաղօր երկիրս մեր ի յՕսմանցւոց և արար զնոսս փախստական յերկիրն իւրեանց: Եւ յետոյ զՇահ-թաճմազն կաշեալ եղ ի դ-ֆէ-1) զոր և սպան. և զնորին որոյի Շահ Ապաս մանուկն յօրօրոցի հոշակեաց գոլ շահ, և ի գալ ամին զնա ևս կորոյս, և ինք թագաւորեաց ի ՌՃՁԵ թուոյն մերում. որ եղև կարի ահաւոր և անուանի ի վերայ ամենայն թագաւորաց, յորմէ ամենեքեան սարսեփն զանուան միայն լսելով: Եւ զԱբրահամ Կաթողիկոսն կարի սիրեաց և միշտ առ յինքն պահէր, զոր և հպր կոչէր: Եւ Աբրահամ Կաթողիկոսն ևս էր ահարկու և շքեղատես, մեծանձն և խեղօք, ճարտարաբնօղ և հանճարեղ: Աւտի Նատր-շահն ի յինքն պահէր և շատ խորհուրդ և առնելիս իւր ընդ սմա անօրինէր և սմա հարցանէր: Եւ ինքն Աբրահամ Կաթողիկոսն էր թէպէտ ժիր և արժասիրտ յամենայն բանս և յաջողակ ի գործս, սակայն էր ծեր և լցեալ աւուրքք և ցաւազար իսկ. որ և թէպէտ շինուածս ինչ ոչ կարաց առնել յԱթոռօրս, (զի ժամանակ ևս ոչ ունեցաւ, միշտ ընդ Շահին լինէր) սակայն քան զամենեսեան առաւել արար զրաբերարութիւնս և զօգուտս սրբոյ Աթոռոյս և ազգիս և բոլոր երկրիս մերոյ: Քանզի Նատր-շահ կոչեցեալն այնքան էր ահեղ և զարհուրելի, մինչ քաղինքն հալէին յահն յանուանէն. սակայն ողորմածն Աստուած այնքան քաղցրացոյց յաչս նորա զսրբազան Լայրազեան մեր որպէս զՅովսէփ առ Քարաւօծ, և զԵսթէր առ Արտաշէս, որոյ բան և խնդիր մի ո՛չ անկանէր

1) Գ-ֆէ, վանգակ, բան, ճապի:

յերկիր առաջի այնպիսոյ բռնաւորին վասն որոյ զբազումս ազատեաց ի մահուանէ. զչաստ իջոյց ի կախաղանէ. զբազմաց աշնն և զականջան և զպլանդանն ազատեաց ի հատանելոյ և ի բրելոյ: Չանհամար գերիս ազատեաց ի գերչաց: Եւ զբազումս զորս տաճկացուցիալ էին կամաւ և թէ յրուծուիմամբ, յետս զարձոյց և առ ի ձեռաց պլազղեաց: Եւ զպլանհամար բարերարութիւնս արար Յաճկաց, և Հայոց, Պարսից և Օսմանցուց: Բազում մեծամեծ խանք և արքունի զրան մարդիք առ սա գային և միջնորդս արկանէին առ շահն, զի զհոգալիս իւրեանց հոգասցէ. զորս և հոգայր իսկ: Լպա ի ՌճՁԾ թուին հանգեաւ ի Յէր և սուգ մեծ էած ի վերայ բոլոր երկրիս արևելեան. և թաղեցաւ ի Ըողակաթի ի ձախակողմն գաւթին. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի: Ունի և զգրեանս օգտարարս արքունական և դատաւորական հոգացեալ. զորս յետոյ գրեսցուք: Սա թէ իւր և նոյն ժամանակի անցից պատմութիւնն ինքնին՝ յատուկ ունի գրեալ:

Վասն Ղազար, կարդիկոսի

Նստի ի սուրբ Էջմիածին Վաթուղիկոս Տէր Ղազար ճահկեցին ի ՌճՁԷ թուին, յամս թագաւորացն Պարսից Նասր շահին, և Օսմանցուց Սուլթան Մահմուտին: Սա էր այր գիտնական և ճարտարալեզու, հանձարեղ և փառապերճ: Ըինեաց ի սուրբ Աթոռոջս ի Հայրապետարանումս զգնեցիկ պարպասս, երկրեսի հայեցուածովք, մինն ի մեծ աաճարն հայի, և միւս երեսն յարևմուտս ի ներս կոյս, որ կոչի Աւհարան: Ըինեաց և զպլան շինուածս ի Հայրապետարանումս գեանանխասս ի հարաւակոյս և ի հիւսիսակոյս: Ըինեաց և ի հարաւակողմն պարսպի Աթոռոյս յատուկ ներքնատամբ և վերնատամբ յաղագս հիւրոց, որ կոչի Ղազարապատ: Այս Ղազարապատիս արտաքոյ կուսէ շինեաց զպարիսպն տաշեալ քարիք և թրծեալ աղււտովք: Ղազարապատի զրանէն ի յարևելս կոյս մինչև ի մեծ գուռն որ ի ջուր Բանքանին հայի: Սակայն երկիցս անգամ ընկեցեալ եղև սա ի յԱթոռոյն, մինն ի ՌճՂԻ թուոցն ի Նասր Շահէն, որ մնաց ընկեցեալ վեց ամիս, և յետոյ նստաւ վերստին: Եւ երկրորդ ի յՕսմանցուց երկրի սևապիտաց և միարանից սրբոյ Աթոռոյս: Եւ նստաւ յաթոռն Տէր Պարոս Բիւթիւր կոչեցեալն Հոռմկայեցի յամիսս տասն: Ըպա վերստին նստաւ Ղազարն ի ՌճՂԷ թուոցն՝ և զՊարոսն ի բանտի մեռոյց: Որ և կեցեալ ևս յամս Գ, ի ՌՄ թուոցն վախճանի. և դնի ի սուրբ Գայիանէի ի յաջակողմն գաւթին: Ունի սա և հոգացեալ զգրեանս օգտարարս արքունական և դատաւորական, զորս յետոյ գրեսցուք: Ըպա ի ՌճՂԷ թուին և Նասր Շահն սպանաւ, և մնացորդքն ընդ միմեամբք անկան:

և բարձաւ իսպառ թագաւորութիւնն Պարսից, և երկիրս մատնեցաւ ի ձեռս ինքնագլուխ և աներկիւղ բռնաւորաց. և անկաւ ի մեծ թշուառութիւնս, և այսպէս է մինչև ցայսօր, որում Տէր այց արասցէ:

Վասն Միեռս կարողութե:

Դստի յԱթոռն սուրբ Էջմիածին Տէր Մինաս Ահնջի ի թուոցն մերում ՌՄ, ի թագաւորութեանն Օսմանցւոց Սուլթան Մահմուտին, և յանիշխանութեանն Պարսից, Եւ կեցեալ յամս երկուս մեռանի ի թուոցն ՌՄԲ, և լծաղի ի վանքն սուրբ Գաբիանեայ ի ձախակողմն գաւթին: Ունի և զգրեանս գասաւորականս հոգացեալ, զորս յետոյ տեսցուք:

Վասն Աղեքսանդր կարողութե:

Դստի յԱթոռն սուրբ Էջմիածին Վաթողիկոս Տէր Ըղէքսանդր Կոստանդնուպօլսեցին ի ՌՄԳ թուոցն մերում, և ի թագաւորութեանն Օսմանցւոց Սուլթան Օսմանին՝ որ էր այր հեղարարոյ, և պարզամիտ, և բաշմաշխատ, որդի և ընկ միարան սրբոյ Աթոռոցս: Եւ ունի զբարերարութիւնս բազումս ի սուրբ Աթոռս ի մանկութենէ: Որ և կեցեալ ամս Բ, մեռանի ի թուին ՌՄԴ, և լծաղի ի ներքոյ զանգակատան մեծի, ի ձախակողմն դրան մեծի Տաճարիս: Ունի և զգրեանս հոգացեալ ի յօգուս սրբոյ Աթոռոցս, զորս յետոյ գրեսցուք:

Ի ՌՄԵ թուոցն մերում, և ի թագաւորութեանն Օսմանցւոց Սուլթան Մուստաֆային, ի Կոստանդնուպօլիս կոչի ի Հայրապետութիւն Սահակ վարդապետն Կեղեցի, որ Ահագին կոչիւր. և թնայ յամս Գ և կէս առանց օճման և ո՛չ զայ ի սուրբ Աթոռս. վասն որոյ հանեն զնա ի ՌՄԸ թուոցն ի Հայրապետութենէն և մեռանի ի Կարին քաղաք:

Վասն Կակոբայ կարողութե Շամախեցւոյ:

Եպս նստի ի սուրբ Էջմիածին Վաթողիկոս Տէր Յակոբ Շամախեցին ի ՌՄԸ թուոցն, ի թագաւորութեանն Օսմանցւոց Սուլթան Մուստաֆային: Սա էր այր պիտանի և խորհրդական, խելօք և հանձարեղ յամենայն գործրս, և գիտուն և շնորհաշատ: Ի մանկութենէ ի սուրբ Աթոռս զորով՝ ո՛չ է կեցեալ անգործ. զի ասէր զսա միարանից զինչ և խորհրէին: Շարադրէր զՆաստաֆայիս 1) և տայր զրազրացն՝ զոր ինչ և գրէին. որոյ տեսարուցն:

1) Միւսուլման. սեւազիբ, օրինակագիր:

զան ի սուրբ Աթոս, յորոց և նարգեանս գրազդիլն առնուն զգրինախ գրեղեաց իրեանց: Կաթողիկոսք ժամանակին զսա ունէին խորհրդակից և վճատու: Եւ էր տեղեակ աքունական և դատաւորական սքզդոյնց 1): Եւ սա գրէր և հոգարս զգրոց արքունականաց և դատաւորականաց, և պահէր ի գտարաստի: Աւել և զանհամար բարերարութիւնս ի սուրբ Աթոսոջ և զգրեանս հոգացեալս, զորս յետոյ գրեացուք: Ըփնեաց և ի յերեան ի Ձորաքղջ անապատոջն զտունս Հայրապետանիասո, և պատեաց բարձրաբերձ պարսպոք և բրգոք՝ որպէս՝ այժմ՝ նստին հայրապետք ի գնալն իրեանց յերևան: Եւ յայս բարոք կառավարմամբ, ի Տէր փոխի ի ՌՄԺԻ թըւոյն, և գնի ի յաջոկողն գաւթի սրբոյն Կախանեաց, Արոյ յիշատակն արշաւթեամբ եղիցի:

Կարողեաց Հայոց սգրիս սխեալ ի սրբոյն Գրիգորէ ցառ ճեգ:

Ի սրբոյն Գրիգորէ մինչև ի Բարսեղ, որք նստան ի Վաղարշապատ, ի Դուին, և յԱնի, Կաթողիկոսք ԿԱ. և ամբ նոցա ութ հարիւր տասն և երկու: Ի սրբոյն Գրիգորէ եղբորէ ներսիսի Հնորհաբոյն, մինչև ի Յովսէփ, որք նստան ի Հոօմկոյն և ի Սիս, Կաթողիկոսք ԻՆ. աւելի և պակաս ընդ միմեանք նստեղով, և ամբ նոցա երեք հարիւր քսան և հինգ: Ի Պիրակոսէ մինչև ի Գալոք Համախեցին, որք վերստին նստան ի սուրբ Աթոսս Էջմիածին (չորոց որպիսութիւնսն ի Պ գլուխն տեցես.) Կաթողիկոսք ԼԻ, և ամբ նոցա երեք հարիւր քսան և երկու: Արք միանդամայն ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորէն մինչև ի Յակոբ Համախեցին, են հարիւր քսան և եօթն. և ամբ նոցա հազար չորս հարիւր յիսուն և ինն:

Վասն Սիմեոն Կարողիկոսի:

Նստի ի սուրբ Աթոսս Էջմիածին Կաթողիկոս Տէր Սիմեոն Երևանցի: Ար է նախապետական հեղինակ գրքոյս, ի ՌՄԺԻ թիւ ոչն մերում: Եւ ի թագաւորութեանն Օսմանցոյ Սուլթան Մուստաֆային: Սա էր այր շնորհընկալ, առատամիտ, զիանաչատ, և լի իմաստութեամբ, լուսապէս տեղեակ հին և նոր կաակարանաց, և վարժ նրբից և արասքին զրոյց, անեաղ և վարժեալ ի մանկութենէ ի ծոց սրբոյ Աթոսոյս: Սա ի սարկաւապութենէ անտի որքան յԱթոսս գտանիւր՝ ոչ զաղարիւր ի դաս ասեղոյ, մինչև ի Կաթողիկոսութեանն և ս: Անձարձիր և անորտունջ, և մանաւանդ

1) Հարցմունց, օրէք: 6

ցարգորդ և հրաւիրող ի յուսումնասիրութիւն Ե.Ղ և էր վարժ բա-  
 նաստեղծութեան արհեստից, և համելլաւան ի շարադրութիւնս. որ և ի  
 սարկաւազութենէ անտի սա տայր գրապրոց սրբոյ Աթոռոյս վճռաւա-  
 ւայս և կարգաւորէր զարհեստ նոցին որպէս յատկապէս հայր և մա-  
 տակարար նոցին ի Պատրիարքութեանն ևս: Ար և ի տետերս մուսաւա-  
 տայից գոն բազում շարադրութիւնք շարադիրք ի ամանէ գրեցեալք: Ե.Ղ  
 և արար սա ի վարդապետութեանն, զլուծմունս բոլոր արտաքին գրոց քեղի-  
 ցիկ և պարզ ոճով ի պիւրութիւն յաստուղաց և զաստուից, յորս գր-  
 րեմէ ոչ քիչ է ինդիող պատրակուսիս և զանհոսկանալիս: Երոք և  
 զգիրս քարոզից ի յերկուս հատորս, զիին երկապարան, ճառակերպ և  
 ներրողեան ի վիցօրեայ արարչապործութիւնան Աստուծոյ, ի սուրբն Քրի-  
 ցոր Լուսաւորիչն մեր, և ի սուրբ Աթոռս Եջմեանն, և յայս հարկաւոր  
 նիւթս և ի խորհրդալի բնութանս: Եւ զերկրորդ հատորն տարկեան քարոզ,  
 ըստ աւարց պատշաճաւորութեանն՝ կարճաւատ և զարաւոր բանիւք: Այք  
 երկուք հատորն ևս օգնիչք՝ ձեռնաւորք և յարմարք են վարդապետաց  
 և մանաւանդ նուիրակացն սրբոյ Աթոռոյս Եկար նա և զլրկնապէս լուծ-  
 մունս դժուարիմաց բանիցն Պրովիտ, որք ելցեալք են զինի լուծմանցն  
 առաջոյ լուծողի Սիմէոն վարդապետին խաչաձե նշանիւք: Երոր և զիդը-  
 րիկ դիրք մի աղթից, որ կուի Զբարձրան նոգուր, գեղեցիկ և պարզ ոճով:  
 Այլ և վերանորոգմամբ կանոնաւորեաց զՅունացոցս մեր երկրորդքը հա-  
 տորքը ի վերայ ԼԶ գրոցն մերոց՝ անշարժ և մշտնջենաւոր ընկնացմամբ:

Ե.Ղ և էր սա բարուրն հեզ, պարզամիտ և համբերօզ, ներող և  
 անխիշտար կակղասիրա և զթնշլաս, ողորմած և առատաձեռն առ յա-  
 մենեանանն, անընշաւեր և պատարարոյ, առ յոր գրիմէ՝ ամենայն քիչք  
 աշխարհի որպէս կղկղանք էին համարեցեալք: Վասն որոյ և Աստ. ան  
 զսա բարուցն յաջողէր և տայր առատապէս: Երբմ ժամանակի էր  
 սուրբ Աթոռս շնորհքն Աստուծոյ լի ամենայնիւք հոգեւորք և մարմնա-  
 ւորք, ներքականօք և արտաքականօք, բնունակրօք և լծկանօք, և կթե-  
 լի անանօք բազմազատիկ քան զառաջինն: Միաբանքն շատ համգիստ և  
 ազահով յամենայնի: Ի յաւուրս սորա ոչ պակասեցան կերպակերպ ար-  
 հեստաւորք և շինարարք ի յաթոռոցս:

Քանզի ի կաթողիկոսանայն իւրում արար սա զբազում շինուածս և  
 զբազմազիմք բարերարութիւնս արբոյ Աթոռոյս: Նախապէս՝ զի սուրբ Ա-  
 թոռս ի յարտաքուստ կուսէ էր անպարիսպ, և զոմք և ամենայն անանա-  
 տունք և այլ համբարք հարկաւոր և արտաքին իրաց՝ էին հնացեալք,  
 անվայիլք և անյարմարք, մանունք և գծուծք, և մնեաւանդ ցան և ցիլք,  
 կրկուղալիք և կասկածաւորք ի զորոյ և յոտոյատակաց: Բաղում՝ անգամ

զծիս և զայ անուսունա Տիւրոց, և սրբոց Աթոռոյս իսկ, տանէին զորք, և ի յերկուղէ բախիկաց և յաղբոց արհկոյից, յամենայնում անուան Պատմողիկոսն Հանգելիճ միարամիք՝ որպէս թէ դատարկեալ զուրբ Աթոռոց՝ քնար յերևան, և անոց մարք յաճես քանիս. և այսպէս ի զնպէն Պատմողիկոսն և միարամից ի յերևան, և ի գառարկեցն զուրբ Աթոռու տնս դա զԹշուառութիւնս սոցա և զհոգնութիւնսն, և զմտախն և ի վրաստեալարիցն սրբոց Աթոռոցս՝ զորս կարճեմ ես. Գրեթէ՝ ի բունիկ թագաորութեանն Պարսից, ի ՌՃՂԶ. Թուէն. մինչև ի ՌՄԺԲ. թիւս մեր. սրասուհիւր յամենայնում ամբ սրբոց Աթոռոցս և Աթոռայնոցս թշուառութիւնս էյս. Բարս արհաւիրաւ Լարրուպիտս այս սկիզբն արար ի նստիչն իւրում ի շինել զբոլոր արհաւիր սրբոց Աթոռոցս շուրջամակի (որպէս տեսանես)՝ ախար և հաստատուն բրբոք և դիտանոցք: Ապա և ի մէջ տանալ զամենայն անասնատուն և զսոյն ամենայն պարաբայիքն իւրեանց, շինեաց նորապէս ի կորնն արևելից ներ պարսպին համաճորթի և միւշ իրեբայ, և արար յամենից կուսէ անաս և արահոյ՛: Ընենաց ընոց նմին. և զամեան Սերանատունն վկասոնն տաշիալ քարիւ և կամարոք փայն շարդին քան զտառայինն, որ մերձ էր ի սկանկի: Ընենաց զնմանտունն. և զզրպրատունն ձեռան և անան, յատուկ յատուկ պարապոք ի հիւստակողմն յետ կորս խցից միարամիցն, յարմար բառ տեղոյն և բառ շինուածոցն որպէս տեսանես. Զի յառաջ դպրատունն ներ պարսպի միապամիցն էր անարմար բառ տեղոյն և բառ կացութեանն դպրացն, նեղ և նսեմ. նոյնպէս և մեծատունն անկանոն՝ աստ և անոց հետ ի լուսարարի յԾոպնն ՝) և անժպիկ: Ընենաց և ի ներս ի վնհարանոցն զերկիցիկ պարապս մի կրկասուսիք ի հարուակոյնն. զի բաց ի յամեանն եղանակին հոգանոց լինելոյն, լինելոցի նա և միջնորմն և արկնող տեսութեանց տաճկաց և աղոց հիւրասպանաց, որք ի Ղազարապատն նստեալ բացարձակ դիտէին և զննէին ի յերկրութիւնս Լարրուպիտարանին. Ե. ղ և նա հանել զՔանքանըս ի մէջ ներսի պարսպիս, զչիճպայից սրբոց Եկիկիւրոյն և դասաճոք միարամից թցիցն և այլոց շինուածոցն, և տարեալ խառնեաց ի Քանքան Փիղիպպոս Վաթողիկոսին ի ՌՄԺԷ. թուոյն մերում. Արով եղին երկուք օգտութիւնք զլիսա որսպէս, մի՛ զի ջուր Քանքանին յաւելու, որ յամենայնի շահարար է. երկրորդ՝ զի յատակ Եկիկիւրոյն և բոլոր շիտուածք և միարամից խուցքն ցամաքեցան ի գիշութեանէ, Քանգի երանեալ Փիղիպպոս Վաթողիկոսի հանեալ Քանքանի գլուխն՝ էր Աթոռոցս միջի գրանն զանապանի խցի՛ յառաջն, զի անտի սկսեալ զնայր ընդ յատակա

1) Օրս, իւրց, սենակ:

արտաքին պարսպին և ի վայրն սրբոյ Գայիանէի վանիցն կաներ, և ո՛չ ինչ օգտեր միջոյ պարսպիս գիջութեանն: Այլ և Զուղայիցի Յակոբը Վաթուղիկոսի Հանեալ Քանքանն, որ բնոյ մէջ գեղջս մերոյ և Աթոռոյս անցանէ, վերստին որպէս թէ նոր ի նորոյ նորոգեաց և ի լոյս էած՝ որպէս ասացեալ է ի զլուինն ի ճառս ջրոցն: Ահրանորոգեալ շինեաց նոր ի նորոյ նա և զբոլոր տանիան սրբոյ և Աստուածակերտի Տաճարիս, գեղեցիկ և տաշեալ քարիւք: Եւ բացեալ զսաստաղ երկուց խորանայն, նոր ի նորոյ շինեցոյց երկուսն ի պիտանաւորութիւնս յամենայնի, ի ԱՄԺԹ թուոյն մերում: Ընենաց ի ներս Հայրապետարանիս ի յարեմտակողմն ի վերայ մեծ բոքոյն զգարպսս մի գեղեցիկ ի հովանոց ամեան, և ի դիտանոց բոլոր ի գաշտիս: Ի ներս Հայրապետարանիս ի հիւսիսայ կողակ ի տեղովն սրբոյն 1) զվեց գաղաշափ անդիս էարկ ի ներս՝ և շինեաց զսասն տունս ի լայնութիւն և յարձակութիւն ձմեռատանցն և ի պիտանաւորութիւնն այլոց իրաց: Եւ յետ կռակ պարսպեալ ամրացոյց հաստամուտոյն պարսպու՝ որպէս տեսանես: Նոյնպէս և գիւղարձանսարայն (որ յամենայնի վրիչեալ և աւերեալ է, և կարի անվայել և ազեղ) շինեալ զամենայն յօտայս վերանորոգեաց յամենայնի պարագոյիք գեղեցիկ և պատշաճաւոր ձևով: Ընենաց ի Ղափ պարոյն զհնձանն գեղեցիկ հանգիրձ կից շինուածովք իւրովք: Նոյնպէս և մինչ էտա գլխոնցնց կոչեցեալ բաժին պոյն, և խառնեաց ի վերն պոյնն Աթոռոյս, ապա և զայգեշափ անդի մի ևս ի յարեմտան կռակ ի ներս էարկ, և պարսպեալ արար զմեծ պոյն մի՝ որպէս գլխով պոյնն նորապէս մեծ Գորգալայն 2):

Դարձեալ բարեմիս և ազատարարոյ Հայրապետոս ոյս, օրպէս էր յամենեցունց ի մերտօքնեաց և յայլազնեաց սիրեցեալ և պատուեցեալ նոյնպէս և էր առ յամեննեանն ահարկու և անուածի, յորևէ ամենեքեան երկնչէին և ակնածէին: Յաւուրս սորա միարանք սրբոյ Աթոռոյս էին որպէս յաւուրս Մօրկար յորս ո՛չ ոք ի տաճկաց կարող էր հրպել և կամ զրանս ինչ ծանուես խօսիլ, որպէս սուրբ էին ի յառաջիննն ի մէջ Աթոռոյս հայհոյի և դանել, և տանել յերևան բանտել և սուղանել: Ասան օրոյ և արար սա զբազում գործս արժանի զարմացման և արձանագրեցման փանն ապագայից: Յորոց զհասարակ և զանուանարն թողեալ, զոմանս գիտաւ որս և զնշանաւորսն գրեմք ասա՝ Նախապէս ի շինելն զպարիսպ սրբոյ Աթոռոյս, զմերձ գետս մեր (որ կից և անմիջոց վայրօք և խառնիխուռն շինուածովք չբժարակեալ էր զսուրբ Աթոռոսիս) քակեալ հեռացոյց ի պարսպէս և Աթոռոյս և իւրով արդեանիքն վե-

1) Իրևան, օրեան ջրեպանաց զամ կարաւորց: 2) Քառն:

բարին շինեաց զտունսն և զԵկեղեցին ի Հիւսիսակողմ, միաժողով և բընակակից իրերաց՝ որպէս տեսանես Պարձեալ զՅօշական գետին (որ մուլք է սրբոյ Աթոռոյ) յամսքանս չափեալ 1) և՛ն Մուղանլու կոչեցեալ ազգն Յաճկաց, զընակիչ Հայն աստ և անդ ատրազիր արարեալ, իւրեանք էին նստեալ որպէս զընիկ և զՀայրենական մուլք Համարելով ինքեանց սրոյ զայնքան սոյգան և զպարսէզսն և զչատ տունս անապատ արարեալ, և զցանկեցելոցն իւրեանց զմուլք ևս ո՛չ ապին Աթոռոյս, և զեռ ևս զինասս բազումն Հասուցանէին, արիասիրտ Հայրապետս պս յոսին կացեալ ի յամս քանիտ, այնքան քանաց մինչև զնոսս արժատախիլ արարեալ ի բաց Հարածեաց անտի և զընիկ գեօղական Հայն և զալս աստի և անտի բերեալ բնակեցոյց ի նմտ, ի ՌՄԺԷ թուոցն մերում:

Պարձեալ զգեօղօրայսս զայստիկ, այսինքն է զԱշտարակ, զՆոյաբար, և Աղունաատն, զորոց մուլք գոլ սրբոյ Աթոռոյս, ո՛չ որ գիտեր երբէք. զի ի Քրիզոր Կաթողիկոսէն մինչև ցայս վայր ՅՆԷ տարի էր անցեալ, զորս զաթեալ էին Յաճիկք յայնքան միջոցի և իւրացուցեալ յազգէ յազգ Հաստատուն զարայպիւք զնելով յիրերաց: Իսկ սրբալան Հայրապետս պս Հանեալ զվախճանմայն, և Հաւաստեալ գոլ սրբոյ Աթոռոյս, յետս էառ ի Յաճկաց, և արար մուլք սրբոյ Աթոռոյս, և Հաստատուն գրով և կնքով Հիւսէլին-Ալի-խանին, Հիփոլամին և այլոց մեծամեծ Յաճկաց ի ՌՃԶԹ թուոցն տաճկաց գրեցեալ. զոր գտցես ցուցական. Խոյնակե զՄուղին գեօղն, և զՓռանկանոց գեօղն, զորս ի ժամանակս Յակոբ Կաթողիկոսին Համախեցուց յափշտակեալ էին Յաճիկք և իւրացուցեալք, այն Հարապետս յետս առեալ ի Յաճկաց, արար վերտօն մուլք սրբոյ Աթոռոյս: Բայց յետոյ զՓռանկանոց գեօղն Հիւսէլին-Ալի-խանն Երևանու էառ, և զԳիւլիստիպ կոչեցեալ գեղջ վեց դանկ մուլքն ետ սրբոյ Աթոռոյս, Հաստատուն գրովք՝ զորոց զրոպէսն տես ի ճառս սոյն զհեղօրէիցս: Պարձեալ ի բառելի միահեծան տերութեանն Պարսից, և ի մուս և ել առնելն անիծեալ ազգին Լակլիզաց յերկիրս մեր ի գերեկ և յաւերեկ, ընդ նոսին և հրկրարնակ Պարսիկքն իսկ եղեալ կուզակք և սրիկայք, վասն որոյ բազում գեօղք և վանօրայք իսկ ամայացան և աւեր դարձան որպէս և են մինչև ցայսօր: Իսկ Բայատ կոչեցեալ Յաճիկ ազգ մի եկեալ բնակեալ էին ի ներքոյ Խորվիրապայ սրբոյ վանիցն ի Քաղապետ (2) նորին, և զվանքն և զեկեղեցիսն արարեալ էին տեղիք անասնոց և ամբարք գարշեկեաց իւրեանց: Իսկ բարենախանձ Հայրապետս պս զԲայատ կոչեցեալ Յաճիկն ի սրբոյն Վիրապայ վանիցն ի բաց մերժեաց՝ և էհան զտես նո-

1) Գրանի, տիրել: 2) Գարսեղասեղ:

ցա ի փանկց անտի: Եւ եզ զՂեւոնդարդս, և Տագայեայ զամենայն սրահասու ինխնան՝ արար փանբ միտրանակեցայ՝ որպէս յառաջն: Ար և է ի ներկայումս շէն և Տաստատուն ի փասս Կոստանդ և ի պատիս սրբոց նորա, որպէս ասացեալ է ի ճոռս սոյն փանկց: Բարձեալ ի Հարաւախոյան զեղջս ի վայրն Բիւթտարայ անուն փոքր Բլուր քոյ, որ սահմանն է գեղջս Տերուժ ի Հարաւախուսէ: Ելլորմու կոչեցեալ ազգ մի տաճիկք եկեալ յայնկոյս յերեսն սոյն լլբիս կամեցան զեղ շինել ի բնակութիւն ինքեանց: Եդոնպէս և աստի ի յարեւելակողմն կից Աստուղ կոչեցեալ տեղոյն աւեր քեդասեղ մի գոր, որ Ելիսէն կոչի (քանզի յառաջին ժամանակն խնն է ի Զէպէն) որք են գրատատարներն՝ յամնան երանակին ի յերեսն մնային՝ և ի ճոռան եղանակին եկեալ աստ բնակէին փասն արօտից անամնոց, որք զքանի մի տուն շինեալ բնակէին ի նոսա: Ասան այնորիկ կոչեցաւ տեղին այն Ելիորձի քեանս): Եւ յայս զեղս ևս եկեալ ազգ մի տաճկաց Բեռլանի կոչեցեալ՝ կամեցան բնակութիւն տանել ինքեանց՝ հրամանաւ Հիւսէլին Ելի խանին Երեւանու: Արք երկուքն ևս թէ փան ջրոց և թէ անամնոց արօտատեղից, որքան իյշին ցաւեցուցանելոց զսթոռայինն և զգեօղսկանն մեր, փորձողացն է յայտնի: Իսկ յազմերախտ Հարապետս այս ընդդէմ կացեալ երկոցունցն ևս վարեաց զնոսա և ո՛չ կթող զեւտեղի անդ:

Բարձեալ՝ սոյն Հոյրապետս բազմահանձար ի վերայ Եւաջնորդին Կարսայ բարկացեալ փասն ոմանց պատճառաց, բանիս արար զնա և ի Պոյոյ յատուկ զճարան բերել հո ի թագաւորէն յիս անուն (որ գոյ ի սուրբ Եթոռոյս) և զՂեւոնդարդն այն հանեալ անտի, երկր ի սուրբ Եթոռոս, և զԿարս քաղաքն հանցեթ իւրովք շրջակայիւրն զաւթեալ տերունի միճակ արար սրբոյ Եթոռոյս, և զվանքն Աջալանից (որ քան ամառ յառաջ անայի կայր) ի շինութիւն բերեալ՝ զՂեւոնդարդ կարգեաց և Տաստատանաց միաբանիք և ամենայնիք սրբազայիւրն, տալով և զՏին պատան՝ որք զիղացեալք կային ի վերայ փանքին ի Ղեւոնդարդաց սրովք և ևս փոռատորեցաւ և Տաջակեցաւ անուն սրբազան Հայրապետիս ի յայլ ազգիս և ի մերազնայս: Եւ Տաստատանաց ի փանքն զյատուկ գովման մի յանուն սրբոյ Եթոռոյս սմենիք սրբազայիւրն, յորմն ո՛չ սակաւ արգասիք մտանէին ի սուրբ Եթոռոս: Ելև այս ի ՌՄԺԴ թմուջն մերում:

Բարձեալ ի Հաչտարխան և ի բոլոր երկիրն Ռուսաց, բնակեալ Հայրքն Տերունի գղով, ի սրբոյ Եթոռոյս զնայր նոցա Եւաջնորդ և Ե-

1) Գրատատարներ խանի, կամ նահանգապետին քրեանայ.

պիտեւոյս, որ ընդ Առաջնորդութեանն, և զՆուիրական դործն ես կատարէր: Եպս ի ժամանակս Ազգար Ասթուղիկոսին ճաշկեց որ ի ՌՃՂԲ, թմածն մերում, արատամբեցան յԱթուոյս և եկին ի բնանց յատուկ Առաջնորդ հրամանաւ թագաւորին Ռուսաց զՍտեփաննոս Կախկոպոս ոմն ի վիճակէն Վանձասարու վան զԺենայ բարդութեան Բարսեղ Կախկոպոսին Փառակեցոյ, որ յայնմ միջոցի առաջնորդ էր տեղոյն ի Ազգար Ասթուղիկոսէն կարգեցեալ: Եւ յայնմ հետ ի յԱթուոյս Կախկոպոս ո՛չ եմուտ յայն երկիրն, զի հրամանաւ թագաւորին արգելեցաւ, այլ մասնաւոր վարդապետ մի գնայր Նուիրակ անուամբ միայն, և ընդ բուամբ Առաջնորդին լինելով՝ որպէս զԺողովարար մի՝ կամաւորապէս ժողովէր զՆուիրակութիւնն ի բոլորէն զմասն հազիւ անկող զայր յԱթուոս: Յայրուտ Կախկոպոսը ստանեկն յերկիրն անարգել, և յաթուոյս միայն ոչ կորէր ստանել: Աւան որոյ և Վանձասարու: Ներսէս Ասթուղիկոսն ժամ գտեալ (և մանուանդ զի տեղոյ Առաջնորդին յեր վիճակէն էր, և յինքնն Կախկոպոս ձեռնադրեցեալ) և յերկիրն ես դիտար իշխանք ոմանք ի Համահու և ի յայլ վիճակէ նորին էին. սկսաւ յամ անել յայն յերկիրն, Կախկոպոս և Նուիրակ սուաքել, և զգանձանակ հաստատել, և զանաւն իւր յիշեցուցանել յԵկեղեցոյն, նոյնպէս և Նուիրակն նորին ևս իրաւտաղ ի վերայ Նուիրակացն սրբոյ Աթուոյս, և համարձակ վատարանել և դաս քարչիկ զԱթուոյսինս ասկով թէ մեր է այս վիճակի դուք զի՛ մտանք յայտ, և զայս պայտիս: Տեւեաց այս զիպուած ի ժամանակս Ազգարու, Մինասայ, Էղէքսանկրին, և Յակոբայ Ասթուղիկոսացն, մինչև ի Սիւեօն կաթուղիկոսս յայս յամս քանս: Եպս ի ժամանակս սոյնոյ Հայրապետիս, մինչ մեռաւ Վանձասարու: Ներսէս Ասթուղիկոսն, և անկաւ երկձոյի Ասթուղիկոսութիւնն ի յԱզուանս, (որպէս ասացեալ է երկարապէս ի ճասս, և ի ճնշին սորա զլրբութիւնս Իորայէլին և նորայնոցն, ևս սկսան շարանալ և ի սիրել երկրին այնմիկ և Վանձասարու վիճակ անել զնա իտպաւ, և զՆուիրակն սրբոյ Աթուոյս (որ էր Քանաքեցի Յովհաննէս վարդապետն ի սոյնոյ Հայրապետէս սուաքեցեալ,) ի յանարգանս և յանպատիւս ունիլ, և զայս պայտիս: Եպս բարենախանձ Հայրապետս այս գրեաց առ Ակատարինէ թագաւորն Էղէքսանկոյս Ռուսաց երկարապէս զըրպիտութենէ Աթուոյս, և զՆազանկութենէ յամենայն յիշխանութիւնս եղիլոց Հայոց՝ Ամա, և զաստատմութիւնն միայն յայն յերկիրն եղեալ Հայոցն, և զայս պայտիս (որոյ մուսաւատայն գոյ ի սոյնոյ Հայրապետէն արարեցեալ,) ընդ գրոյն նա և զմատունս ի նոյնան Տապանէն, ի սրբոյն Յօհաննու Արարականէն, ի սրբոյն Գեորգեայ, և ի սրբոյ Հովիտիւնանց նշխարացն, միով քառաչեալ

արծաթեայ ոսկեղնեայ արծաթ կրեցելով ձեռամբ Քրիստոսի Դատիք վարդապետին առաքեաց ի ՌՄԺԸ թուոյն մերում: Իսկ ողորմութեամբն Լատուծոյ (որ ունի ի ձեռին զսիրտ թագաւորաց) սիրով ընկալնու թագաւորն զպիրն և զընծայն, և լիովին և քան զինգրեանն առաւել կատարէ զինգիրն: Զի հրամայէ գրել զհովարտակ առ յամենայն տէրութիւնս իւր և առ յամենայն յազգս Հայոց, ծանուցանելով զմիտ գրոյն և զլրապիսութիւնս ընծայից սրբազան Հայրապետիս մերոյ, և զընկունումն իւր մեծաւ սիրով և շնորհակալութեամբ, և տայն զկատարումն խնդրանացն, և զգճիւն իմէ՝ թարց հրամանի Հայրապետին Էջմիածնի՝ Եպիսկոպոս և կարգաւոր դք մի՛ մտցէ յերկիրս յայտ, և զպիս սիրացոց բռնաւ: Զորս գրեցուցանէ ի վերայ մագաղսմի ոսկեայ գրով, և զնորն հրամայէ թարգմանել ի Հայ լեզուս, և նշնպէս գրել ի վերայ մագաղսմի Եւ ապա զերկոսեանն այս ինքն զՌուսերէնն և զՀայերէնն ի մի յարկեցեալ, և կապեալ թելիւ՝ ուր վերջանայ մանն, և ի վերայ կապին դնէ զմեծագոյն կնիկքն Վասերական ի վերայ զմեջ՝ որպէս տեսանես, որ պիտ յԵթովոս ի միում յատուկ արկող ի ներքոյ փականաց: Եւ ընդ սոյնոյ հրովորաւորն զիսէ մի ոսկեհուռն գիւղայ նորագործ և գեղեցիկ, և զերկուս թուփքս ոսկեայ գործ հաշիպոս (իբր յատկապէս ընծայ Հայրապետին) առաքէ ձեռամբ նշնոյ Քառիթ վարդապետին ի սուրբ Աթոռս ի ՌՂԿԸ: Թուող փրկէն, և ի մերում ՌՄԺԸ թուոյն, Եւ այսպէս արար գրուոր երկիրն զպն հաստատապէս զիճակ Տէրունի սրբոյ Աթոռոյս՝ արքունական հրամանադրով: Ըստ ի սոյն թուոյն՝ սոյն Հայրապետս զՄինաս Եպիսկոպոսն Նաւիրակ և Եռաջնորդ կարգեալ առաքէ յերկիրն յայն փառաւորապէս որպէս յիշեցաւ ի Զ, զլուխն ի ճառս սոյնոյ երկրիս: Իսկ զվերոյիշեցեալ գիւղայն՝ սոյն Հայրապետս կտրէ, և տայ կտրել զՇուրջառ մի Հայրապետաւայել, (որոց ուրառն է կապտագոյն բէլի՛ն ծաղկեայ, և Կիւսոյն՝ կարմիր -նլու) և զվարագոր մի սրբոյ Իջման տեղւոյն՝ կարմիր աստառով կնրպասեայ: Իսկ զվերոյիշեալ ոսկեհուռն հաշիպոս դնէ ի վերայ երկուցն ևս Շուրջառին և վարագուրին, յերեսոյ կուսէ ի քղանցսն շուրջանակի: Որք երկուքն ևս են ազնիւք յատկացեալք և աննմանք փոյոց, յարոյ վերայ գրեալք գոն և յիշատակարանքն՝ որպէս տեսանես: Եւ յայնմ հետե երկ ընտանութիւն և մեծ սէր թաղաւորին Ռուսաց և նախարարաց նորին՝ և Եպիսկոպոսացն, առ սուրբ Աթոռս, և առ յազգս մեր որպէս տեսանես զգրեանն նոցին:

Դարձեալ ի Վարնոյ Վարմիր վանք կուեցիլումն սեւազուխ մի կայր Թութաթցի՝ Գէորգ անուն. այս չի՛ք Գէորգ ոչ վարդապետս, միջնորդութեամբ նոյնոյ վանից Եռաջնորդ Մշեցի Թակալ վարդապետին զայ Աթոռս և

նգիսկոզոս ձեռնադրի ի Համախոհի Յակոբ Ապժողիկոսէն ի փարա-  
 նուժիւննոցնոյ Կարմիր վանքնն, ի ԲՄԻ Թուօքս մերուժ: Աւ յետոյ ի  
 ԲՄԺԳ Թուօքս մերուժ, ի Ժամանակս սոյն Սիւնն Կաթուղիկոսիս՝  
 նոյն շրջանոց վարդապետն նոցնոյ Յակոբ վարդապետ Առաջնորդի Հրա-  
 ժանան գնոյ յԱխղցիտա քաղաքն ասիս պողի և իրաւանց նոցնոյ վանքն  
 (զի յառաջ Ախղցիտա վիճակ էր այն վանքն): Ապա ի գնալն շրջորդին  
 յայն քաղաքն, սկսանի յարանել զչարութեան խմորն՝ զոր ունէր յառաջ-  
 մէ Երարեսայ ի յինքն, այս ինքն զազանքն Ախթարմարմեան: Բանդի  
 և Ախղցիտա քաղաքն ևս յիսուն ամառ յառաջ ապականեցեալ էր նոյն ա-  
 դանդաղն ըստ մեծի մտան: Աւստի և շրջորդն այն այնքան համարձա-  
 կութիւն գտանէ անդ, մինչև զհայոց ազգն և զեկեղեցիս դաս քարչէ  
 յԵսեանն և վառաքանէ, զանուն փափին յիշէ յեկեղեցիս, և զզոյս  
 պոպոխիս: Արդ քաղաքն հասանի ի Կարին, և Կարնեցիքն ևս բազմակերթ  
 թղթով ծանուցանեն Սիւնն Կաթուղիկոսիս: Եղաւ արիասիրտ Հայրա-  
 պետս այս (որ մանաւանդ նախանձախնդիր էր վասն ուղղափառի հաւա-  
 սոյս Հայրասանեայ) զրէ ի Պօլիս և զերիս Փարմանս բերել այս ի Սուլ-  
 թան Մուստաֆայէն ի ԲՃՁԹ և ի ԲՃՁԱ Թուօքս տաճկաց, երկուքն  
 յոտուկ ի վերոյ Ախղցիտայու, և մինն ի վերոյ ամենայն տեղեաց՝ սաստիկ  
 հրամանաւ և պէտպէս սպառնալով: Իբր (զի) ուր ուրեք Փռանկ փաթ-  
 րիք իցնն՝ վարեցնեն յերկիրն իւրեանց, և ուր ուրեք Հայ Փռանկացեալ  
 իցէ՝ կրեցնեն մեծամեծ սուրբանք, սանջանք, և այլ բնայտիւք, զի հր-  
 նազանդեցին ի բռնոց օրինոց՝ և մի՛ ևս արասցին զՓռանկութիւն:  
 Զայս պատուէրս փաշայից՝ պատասրաց՝ և պղոց մեծամեծաց իւրոց զրէ:  
 Իսկ յերկուս Փարմանն Ախղցիտայու՝ յետ պոպոխ սպառնական պատուիրա-  
 նացնն՝ զրէ թէ՛ Պօլոս, Սանկիսն և Յովհաննէս սեւալուիքն (որք էին  
 Ախթարմայք բնակեալք յԱխղցիտայ հրակոյտիւք երկիրն,) և Յակոբ  
 շրէքն, ի յԱջմիածին պրոտրեցին, և Գ. եկեղեցիքն՝ Հայոց յանձնեցին:  
 Աւ զի մինչ այս Փարմանաց գալն՝ վերոյ յիշեալ Հայրապետս մեր զէթ  
 Դեորդն բանապրեաց, և նա յսկիով մանաւանդ զՓարմանաց հանելն, փախեալ:  
 Գողտ յԱխղցիտու ի Պօլիս ի Բեկեղլին առ Փռանկսն և անդ սաստակցաւ ի  
 նոցն ամին: Իսկ ի գալ Փարմանացն՝ Հայրապետս մեր զմին առաքէ յԱխղցիտա  
 առ Նաման փաշայն, (որ փաշայ էր նոցնոյ երկիրն,) և ինքն ևս զրէ փաշա-  
 յին զորպիսութիւնս Ախթարմարմեան, ապա փաշայն ի տեսանելն զՓար-  
 ման Թապաւորին իւրոյ, կատարէ զհրամանն, զի զեօթն փաթրիք Փռանկսն  
 (որք յորժացեալ էին անդ) պրոտրէ յերկիրն իւրեանց, և զեկեղեցիսն  
 յանձնէ Հայոց ժողովրդեանն, զթիւրեալսն բազմաւ տանջանոք և առգա-  
 նոք խոշտանքի, և զվերոյիշեալ շորեսին շկարդաւորան՝ կատարեք ընդ

միայ զլեաւոր մարդոյն իւրոյ առաքել յԱթոս ի ՌԿԺԸ թուողն մերում։ Որք մնացին յԱթոս յամն երիս, կրեցին զշաք նեղութիւնս, ի բանսոս, ի կապանս, ի դանս և յարս պատիժս՝ մինչև երկիցս անգամ՝ Լայերէն գիր հասուն դաւանութեան մերոց վճռապէս և նզովիւք, զի մի՛ ևս դարձցին ի նոյն աղանջն։ Յետոյ Ախոյեանցիքն անկան առ մեծ Մուրմաֆայ փաշայն (որ յայնմ՝ ժամանակի ի Կարօ Սարապետար նստիւք վասն պատեւրազ ֆին ընդ Ռուսաց ազգին, որ յայնմ՝ միջոցին գոյր սատկեապէս), և նա գրեաց առ Լուրապետս մեր, զի արձակեցցէ շէտակալն։ Ս։ Լայրապետս մեր ևս գրեաց Սարապետարին զորպէսն. և նորին ձեռամբն ի Կարօ պատաւարօք և մեծամեծ իշխօղօքն Կարսայ վերստին էօռ գիր ի բերանոց Տեսակոցն տաճկիւլար, զի մի՛ ևս երեւցուցեն ի յինքեանս զնշան արթարմարմարութեան։ Ապա գրեաց վերստին ի Պօղիս, և ետ բերել զարձակման Փարմանն, և դարձոց զնոսա յԱխոյեան ի ՌԿԺԸ թուողն մերում։ Սոյնպէս և զհիւս հասարակ Փարմանն առաքեաց սոյն Լայրապետս մեր ի Բայազիտ և յԱլաշկերտ առ Սպարի փաշայն Բայազիտու, և առ այլ իշխօղան երկրին, զըրելով և ինքն զորպետութենէ Տեսակոցն, (զի և ի յԱլաշկերտ ուրիշ ուրիշ գոյին), և խնդրեաց զպիտաւորսն նոցա։ Իսկ փաշայն և այլ իշխօղք երկրին նոյնպէս առաքեցին հոսպանօք ըստ ոճոյ Ֆերմանին, և ըստ խնդրոց Լայրապետիս մերոց, յԱլաշկերտու յերկրէ զեթմն անձինս շարադուխտ, զհինգ շքահանօքս, և զմի շտրաբու՛ զոր Բրնձիք կոչէին, որ էր ի Գարսան գեղջէն, և զմի աշխարհական Մամոյ անուամբ ի . . . գեղջէն, և շքահանօքսն՝ Յէր Պօղոսն ի Լարսուու գեղջէն, Յէր Գրիգորն ի Նուկայ գեղջէն, Յէր Խաչատուրն ի Մղչատուլէ յման գեղջէն, Յէր Յարութիւնն ի Միւրածն գեղջէն, և Յէր Աղապրն ևս ի Գարսան գեղջէն. որք էին գլխաւորք Տեսակոցն, զորս և Լայրապետս մեր նոյնպէս և զանազան կերպիւ խոշտանգեաց զանիւ, բանիւ, և բանիւք, վերջապէս ի բերանոցն էստ գիր Լայերէն՝ նզովիւք և հաստատունս օւխտիւք, և ի Բայազիտ ևս ի գատարանուան Տաճկաց էստ զգիր հաստատուն կիրով և վկայութեամբ բաղմաց, զի մի՛ ևս երեւցուցեն յինքեանս զնշան արթարմարմարութեան, և զզոս ապականեալն ևս յինքեանց՝ վերադարձուցեն ի մերս յեկեղեցին։ Եւ յայն աւրարեալ և զսոսա առաքեաց ի անդիս իւրեանց։ Արդ Ախոյեանու անուամբ Ֆերմանն երկու էր, մինն առ նոճան փաշայն մեաց, և միւսն յԱթոս Եւսոյնպէս և միւս հասարակ Ֆերմանն իւրեանց քանեօք ուրբանօք 1)։ Նոյնպէս և ի Նիւի 2) Ֆերմանն զոր վերստին ետ բերել վասն արձակմանն Ախոյեանացիոցն։ Եւ յլ. և Տեսակոց տուեալ Լայերէն և Տաճկերէն ձեռա-

1) Պատճեն, օրինակ։ — 2) Ի յալաշի Քուզբ սպասութեան, արձակելիք։

գիրքն, փառաբանից և պարզ մեծամեծաց գրեանքն, և որք թոռ զԹք վասն ան-  
 ջնցս պատշիկ, բողոքքն համաժողով քան յԱթոռս Զարս գացևս յերեսն  
 գրեցեալ ցուցաբերն, որք պահելիք են ի պիտանաւորութիւն ըստ ժամանա-  
 կին, և ևս այս ևս ոչ է վանոց տանելի, զի Հերակլ աղբոյն Վրաց երկնցս  
 անպա՛ բազմնք զորք եկն ի վերայ Երևանու, և Նրևանցի Հիւսէին և  
 լի-խանն ինքն իւրայնոքն՝ բերգափակ եղեալ ամրացաւ, և գերկրայինսն  
 բորբ Կոնստանտնուպոլիս (1) Նրևան՝ եկից գեանդ—(2) բերդին, և ապա ինքն իւրովք  
 մեծամեծոքն գրեալ աղաչանք Հայրապետաւ մերոյ՝ զի միջնորդեացէ ի խա-  
 դողութիւնս, և ևս Հայրապետս մեր գնացեալ առ Հերակլ աղբան, յորմէ  
 և սիրով ընդունեցեալ մեծարի, և հրատարեց զնա յաթոռս ի յուխա և ի  
 պատիւ. և ապա համազեալ զնա ի սէր և ի խաղաղութիւն ընդ Երևանցւոցն,  
 առանց յամենայնի մեաստատութեան ուղարկէ զնա խաղաղութեամբ յեր-  
 կիրն իւր, Քանպի կարի սիրով էին ընդ միմեանս Հայրապետն մեր և Հե-  
 րակի արքայն, Լինին այս եղևութիւնք ի ՌՄԺԴ և ի ՌՄԺԸ թիւ-  
 սըն մեր:

Մարմնալ՝ յառաջ քան զբանի ամս, մեծարմանի ի մէջ հետեանք  
 լոթերականքն՝ (որք կոչին Երրայեանք.) հարեցին զտեսարակ մի Օրացոյց  
 անուռ զոր շինէին յամի յամի ի վերայ Զարեգրոյն, յորում զնէին ըզ-  
 տարուց տօնսն, տեղաւորելով զշարժակա՛ն միջոցից տօնսն, ցուցանելով  
 և զաւուր ձայնն. զամսաթիւնն, զլուսնաթիւնն, և զայլս պայտիսիս. ընդ սո-  
 ցին զնէին նա և զտօնսն Յունաց և Լատինացւոց ըստ մերոց խառնն: Եւ  
 պոպէս յամենայն ամի ապեալ յազգս մեր սփռէին, իրր մեծ երախտաւոր  
 իմէ ցուցանելով զինքեանս՝ աղղիս մերոյ, և ևս ազգս մեր ևս առնոյր ամենայն  
 որ (մանաւանդ յերկիրն Օսմանցւոց) և կրէր ի ծոցի իւրում իրրև զհա-  
 գուպիս և պիտանի գիրք մի: Եւ զայս տեսանելով բարենախանձ Հայ-  
 րապետիս մերոյ՝ ոչ սակաւ ցաւիւր և յոգոց հաներ, իրր զի ազգն Հայոց  
 ոչնչքան իցէ սկարացեալ՝ մինչ զի այնպիսեաց լոթրանացն կարօտե-  
 ցի և նորք կարգաւորիցէ զտօնս նկեղեցւոյ իւրոյ: Աւստի ի խափանել  
 և ի ջրել զթիւնալի օրացոյցն նոցին, վերանորոգեաց զտօնացոյցս մեր  
 երկրումիք հատորք՝ (որպէս ի վերն ասացաւ.) որ քան զՕրացոյցն նո-  
 ցին գեղեցիկ ոճով և մշտադէպ ճանապարհաւ ցուցանէ զամենայն վերոյ-  
 գրեցեալն որպէս տեսանես ի Յօնացոյցն և պոպէս ի կարողութիւն ըզ-  
 Յօնացոյցս մեր որպէս ասացաք, ապա ետես թէ՛ զբնագրովք ոչ էր հնար  
 տարածել յամենայն Եկեղեցիս, վասն որոյ գու՛ն գործեաց խնդրելով զհնար  
 զի և զապագրատուն ևս հաստատիցէ յԱթոռոցս. զոր և հաստատեաց

(1) Կեօլ. յու. տեղա իրութիւն:—(2) Խանգաք. փոս, իրամ. սկան.

իսկ յաջողմամբն Աստուծոյ ի ՌՄԺԺ թուողն մերում: Յորում և ես տպել նախապէս զՍաղմոսս, զիւրակերտ տաղարանս, և զգիրքն ազգմիջ ԶՔօւրան, կոչեցեալն ի փորձել զամենայն պարագայս գործոյն, ի ՌՄԻ և ի ՌՄԻԱ թիւնն: Եւ ապա ի ՌՄԻԳ թուողն ես տպել զիւրակերտ Յօնացոյցն. զոր և սիռեաց յամենայն ազգս մեր բառ մեծի մասին նրիապէս, գրելով և զպատուիրական կոնյակունս յամենայն երկիր, զի ըզթմայնացոյցն լոթրանաց խոտիցն և զիւր Յօնացոյցն ի գործ անդիցն: ի ՌՄԻԳ թուողն մերում: Եւ փնչ զտպագրատունն ևս Հաստատանց Ըստուածով, ապա ետես թէ՛ ի Հետուստ և բեռամբ, և մանաւանդ մեծու ծախիւք բերելով զթուղթն՝ կարի դժուարու լինիւր և անձեռնտու ասով գործոյ: Աւան որոյ Հետամուտ լեալ այնուհետե, զի և զթղթաշինութեան արհեստն և ս մուծցէ յՌՄԻԿ, զի յաջողակ լիցի գործն տպագրութեան. զոր և եմք իսկ և Հաստատանց յաջողմամբն Աստուծոյ:

Գ. Ե.

Յորում ցասցանքն Նախնայն զճնախ Երբոյ Ամուսյա. յորոց ասնոս ի յետն հոգիւն ի յերէս աս իսկում զնախնայն, զհոնայնայն, զհոնայնայն, զհոնայնայն, զհոնայնայն զհոնայնայն զհոնայնայն, և զհոնայնայն յիւրոսին:

Արդ բառ կանանի ճշմարտութեան և բառ պահանջման իրաւանց՝ բոլոր ազգս Հայոց՝ ուր և իրեն զեանգեալք, թէպէտ էին և են ընդ իշխանութեանք արոյ Աթոռոյս Էջմիածնի, որոյ են շնորհածին և հոգևոր զուսկըք բառ հաւատոյ, և հաղանդ սրբոյն Գրիգորի Առաւորչին մերոյ և նորին Յաջորդացն, որպէս ասացաւ լիովին ի Է զբախն, սակայն ի բառնի թագաւորութեանս մերոյ, և յանկանիլն ազգիս մերոյ ընդ իշխանութեանք պղազգեաց, և ի իրուիլն ընդ ծագս արեգեաց, ակարացաւ և իշխանութիւն սոբին:

Աւան որոյ զովանս մասնաւոր վիճակս ի Ռիս նստողքն զաթմեցին, և զովանս յՌՄԻԿ մար նստողքն՝ Տաճկական իշխանութեանք: Իսկ որք մնացին սեփական վիճակք արոյ Աթոռոյս, և են այժմ ի նշնութեան, գայնասիկ յատկացուցից ի յիշատակ ասպարայից յախտնականապէս: Երբ են ներքոյ գրեցեալք:

Ի յերկրն Արեւմտեան, որք գոն ընդ իշխանարեանք Օսմանցոց:

Առաջին՝ մեծ մարաբաղարն Կոստանդնուպոլիս: Ընդ որով են և ի ներքոյ գրեցեալք:

Ղառվալ, Ղառի գեղ, Իւսիւտեր, Սպանորդ, Բեկրոզ, Ղանտիլի,  
Հիւար Ենկիւրեց, Ղառուչէշե, Լոնուուարեց, Օրթապիւղ, Պեշիկաւաշ,  
Խաս գիւղ, Էյիւպ, Թափղաթաւ:

Երկրորդ՝ Էտրեկ քաղաքն, Դիւմուրմինե, Քէքիրաւոյ քաղաքն,  
Մաղարա, Ռիզուքեարթաւ, Չաթու, Պէլիպոլի, Պողազ՛խար, Էյ-  
նա, Սիլիվերի. այլ և Պրուսա քաղաքն, Ճառա՛ճ գիւղ, Էնկի՛ճե գիւղ,  
Մուհալի՛ճ, Էտրեմիկ, Գիրմուսա, Պողո՛լա, Պանարմայ, Պափքեասար. այլ  
և Քեօթա՛ճիւպ քաղաքն, Մուրաշար, Գեօլտաղ, Ասո՛ճըղ, Մալղարայ,  
Քուրքմանյու, Յուշանյու, Պրանուի. այլ և Սպոփա, որք են, Կիսլե,  
Գեակէք, Սեօլեօղ, Դեափշ, Մասմա՛ճուք, Չինիդնիք, Ենկիշա՛ճար, Քեա-  
րատաթ, Անարձաթ, Նորգիւղ, Գարձախ, Ղալչըլար, Էտիշախ, Սա-  
լաիդարայ, Մերտիզեօղ, Դանքեալ, Բաղձանճըղ, Օզանճըղ, Ղլի՛ճ գիւղ,  
Լոյան ռէկ, Ղառվապեղանք, Օրթապիւղ, Լուարաղար, Արձաշ, Խասիկալ,  
Էրմուլու, Քէ՛ճրիղյու, Թափի, Նար գիւղ, Քնարիղյու, Սապանճայ և  
Իզնի՛ճիա քաղաքն:

Լյո վերջ գրեցեալ Երկրորդ Վիճակ նուիրակութեան պս ինքն՝ Էտ-  
րեկ քաղաքն և այլ ճեակեալքն զինի նորին մինչև ըստ՛մ՝ էին ընդ  
Պոստանդուարոյ մի վիճակ նուիրակութեան, Իսկ միք ի Պոստանդու-  
արոյ որոշեալ արարաք ուրոյն վիճակ նուիրակութեան. և ասպիցաք  
ի յուրաքանչիւրան զիւրոյն ուրոյն նուիրակունս: Զի մի նուիրակն ի ճինպ  
և ի վեղ աճ Տաղիւ աւարտէր զերկոսեանն: Աւստի միք որոշեցաք զի ի  
յիբիս ասո աւարտեցին երկուցն ևս նուիրակունքն: Եւ այսպէս կանո-  
նեցաք լինել այսու՛ճեակ:

Երրորդ, Ռուսմէլու երկիրն:

Պափա, Ղարասու, Բաղչասարայ, Աղմէլիթ, Գեօղլու, Օր, Սալանք,  
Թոփթի, Օրթալանք, Հին Ղաթ, Պերշ, Ենկիղուլպ, Թաման, Թօփուք,  
Ղափուլու, Օզու, Ըղքիրման, Բանդար, Խանղըշլպ, Գիլի, Խամպիլ,  
Սուլթանղալայ, Դապիղ, Սաթճայ, Բարասաղ, Բուքուէշ, Քոզջան, Օր-  
մանի, Բոթիշան, Սիշով, Սաշ, Գիշնով, Հոթին, Մեղով, Իպրայի,  
Սիլիարա, Հանթօղլի Բաղարճըղ, Գեօտաէնճե, Վառնայ, Փրուատի,  
Շուսփա, Ռաղղաւ, Արուշճուղ, Քանովայ, Հիլլալ, Թաթար Բաղար-  
ճըղ, Իզնիլայ, Այիասու, Պուրղաղ:

Չորրորդ՝ Քօխաթ քաղաքն, ընդ որով են և ի ներքոյ գրեցեալքդ՝  
Սիլիփ՛ճխար, Զիլայ, Հէյրակ, Ենկիշա՛ճար, Պիճափ, Գեակփ, Գը-  
րիգորիս:

Երուսղիկի քաղաքն, Կարմամուտան, Հեֆիկ, Ըօֆկան, Ճկրմակձաղ, Աաղէն, Բոչնայ, Հաղկնի, Կաանի Մալլար, Խորաշ, Էհնե Կաղ, Մաշ'երա, Ընջրիք, Ըհնա քաղաքն, Ապուշեղ, Կամիկաղ, Կարիչաղ Խաւկաղ, Չարակ Յաղազ, Լիճ, Կարբեր, Բննկան, Սերաստիա քաղաքն, Զառա, Ֆեօզար, Ըլաքիլեօե, Բարհատ, Բօզրիկ, Ճանձին, Փամնաղ Շխզնի, Բրարերդ, Չարբերդ, Գաբմբու, օզբան, Գնարաւի, Կամիա, Աշկուտամ, Սարհամ, Բաղնայ, Բօթնի, Ընտանաղ, Քրնկեղ, Ընկիճա, Կօֆտին, Ըղա, Կառուայ, Խանգար, Խորանայ, Ըխանի, Բաղաուղ, Կամնճ, Կաւրա, Ըաւաաղ, Բօթա, Փրկին, Խորթաօօն, Խօղատամ, Ըլալուր, Կնաստիա քաղաքն, Ախաշար, Կաւաղա, Բոմարդաղ, Էրակիլ, Բօն, Կիկաւայ, Բեօհնա ցիղ, Եօզղաա, Բաթա, Աանք ցիղն, Բաւուտուն, Կնարմիր, Գելագաա, Ըրաաայ, Կիզայ, Տարսեղ, Ըսպանն, Կնասի, Մունճուտուն, Մանճուտուն, Էրրիլաա, Ըմնտիա քաղաքն, Մարսիան, Բեօփրի, Հանձիքեջ, Ընկի գեղ, Աանքի գիւղն, Ճանիկնի, Փաթաղ, Բունիար, Բեքրաղ, Չարչանկաղ, Մամսն, Բառայ, Սնաղ, Կաղտաման, Աղլաա, Տաշքեօրփու, և Բերաղաղ:

Հինգերորդ՝ Ընկիւտիայ քաղաք, ընդ որով են ինըքոյ գրեցեալք:

Աաղաթղղ, Չանղրա, Բօսիայ, Ըաշխար, Չարբեաղ, Գէռաղայ, Բալիայ, Կօլիկ, Ընկիլան, Գամին, Էրեքիլ, Ըռոնափայ, Զափանալի, Խաաննղ, Եաշ, Բէկրաղար, Կալլուխան, Սիլիքիխար, Ըսկիշահար, Ընկիշար, Ըֆիօնղարախար, Բօլափաւին, Էրղուն, Ըխաշահար, Բեկիշահար, Գանիար, Ըարաման, Մուհն, Ըրմանիկ, Զիլիփկաղ, Ըլսիայ, Ըզայիա, Սէլիտիշահար, Ըլմալու, Մանթաղ, Ըաշ, Էգիրտիր, Միաղայ, Բօրղուր, Սղարթայ, Գեօլիար, Սանկիլու, Էշղու, Աշաղ:

Աեցերորդ՝ Էրզրում քաղաք, ընդ որով են և ի ներքոյ գրեցեալք:

Եօթներորդ՝ Ըարս քաղաք, ընդ որով են և գրեցեալք ի ներքոյ:

Ութերորդ՝ Բայազիտ քաղաքն, ընդ որով են և ի ներքոյ գրեցեալք:

Զանկաղա, Սուրբ Յօհան, Գիւրճիրուլախ, Ըալաճ, Մէլիքէն, Կաշաա, Բաղրկան, Կարմիրկան, Արճափ, Բօրուն, Մուտուն, Բաճաղի գեղ, Բուխաղ, Գիւլաւն, Խաշղա, Բարախանի գեղ, Սարուքեղ, Բաղրկանշայ, Տանիկնալղուղ, Բնաստակ, Կիզայաա, Բափաախ, Ըարաքեանդ, Տիզայ, Խաղք, Ըամարղղ, Բուխաղ, Եաշմանղուլի, Ընըքին Բուխաղ, Բէրէքեախի գեղ, Ալաշղուլի գեղ, Բօթիս, Կիաղին, Աաքբնա, Գրրուփ գեղ, Տաշքեան, Ճանախղ, Գօրանի գեղ, Մողլաղաղայ, Ըաշվիէա, Ուլուքեանղ, Միրղիքեանղ, Մայեայ, Սօրան, Բօխլուճաղ, Բու-

ապղի գեղ, Ճուճանց, Սեղաթի գեղ, Վարարաղար, Լղրազա, Ըրք-  
 րջի գեղ, Դամուրաղան, Բազլույ, Կաշիկերու Նաճիան ), Նարուզի  
 գեղ, Փոթի գեղ, Ելիկոր, Լաշկոյի գեղ, Գարսլուր, Ղաւմուպուճար,  
 Ղաւմուճոյ, Գումբէթ, Իլֆոյի գեղ, Բեպաւօշ, Մարտիկ, Կիրգ, Ի  
 Իանաշիկ, Կրեգեղ, Պիկան, Սոֆիեան, Յիւան, Կոլաւօր, Կոտալազի  
 գեղ, Սիրախան, Խօծի գեղ, Մասղեցիկ, Կեարգեառ, Էզմալ, Ջիրջի  
 գեղ, Ղազի գեղ, Սօնձալու, Եղաթի գեղ, Ճիկան, Բիւփղրան, Չա-  
 մուղու, Նաւիկ, Խորի գեղ, Մանկասար, Վերին Բիւփղրան, Փոսանցիկ,  
 Էլիեազի գեղ, Տօթիան, Սաղըճուգեղ, Արապաղայի գեղ, Ալի ալայի  
 գեղ, Տօթի գեղ, Մարախան, Ալեքսան, Վերին Դարափի, Ներքին  
 Դարափի, Երանոս, Ղարաբլիկոյ, Ներքին Մարախան, Բաղկրաշին,  
 Տաշին, Ուտաղլեն, Կշտալեն, Լաճիսաֆար, Վերանցիկ, Ամսթ, Խոր-  
 գոճեր, Խալց, Մալաուլէյան, Բախրախալայ, Խոշեան, Հափեան,  
 Մարջիք, Խասաուր, Կեարասան, Դաւոյի գեղ, Չլաճանի, Չուսուկի գեղ,  
 Վերին Մարաթի գեղ, Ներքին Լաղու գեղ, Բեօլու գեղ, Սահնիթէփեն,  
 Բարաւձոր, Ղայեարէկ, Սեիրիցուգեղ, Լարասու, Պօշէի Էկմալ, Դա-  
 մուրաղան, Դաւօն, Չաւօն, Յամկաս, Հօրվերան, Մախտաթի գեղ, Ղա-  
 զարի գեղ, Պաճուճանուր, Խամուր:

Իններորդ՝ Վան քաղաք ընդ որով են և գրեցեալքս ի ներքոյ

Տասներորդ՝ Դիարպէքիւր քաղաք. ընդ որով են և ներքոյ գրեցեալքդ.

Ի յերկրս Արեւիկան, որք գտե այժմ ընդ իլիսանսքեամբ Գարսից:

Ետ ափին մոլորաքաղաքն Ասպաճան որ է նոր Չուղայ, ընդ որով են և սոքա:

Երկրորդ՝ քաղաքն Դաւրէժ. ընդ որով են և սոքա.

Ներքոյ՝ քաղաքն Նախիջևան. ընդ որով են և սոքա.

Չորրորդ՝ քաղաքն Երևան. ընդ որով են և սոքա.

4) Եւհէ. նախնց. գաւառ:

Յորում ցոյցանին նախնական և Ռաւջնորդական ժեռախ որքայ Որնուայ, որք և ճերանիտ անսանին: Յորայ ի յամենուն զվերբ քրեյեաւ նախնական ազգանսն սոքք Որնուայ ըստ երկն աճան, առնու նա և զՌաւջնորդական որդանան ի յեան նախնական, որք նախնականն Ռաւջնորդ ևս իսին նոցա:

Ի յերկրն Արեւմտեան ևս ընդ իշխանութեամբ Օսմանցոց:

Ա. Զմիւսին քաղաք, ընդ որով են և սոքա: Կեօղալ - Տիւսար, Մանիսայ, Մանաման, Կիրիզ, Սախլալ, Միտիլու, Այազնոյ, Բանար, Բերդամոյ, Ղընդիս, Սոփմոյ, Արտաղաձ, Աղասար, Կեօր յաստ, Ատաղիայ, Մառմառայ, Այոջար, Կուրդուձ, Բաքիտուր, Խիրայ, Օտամիշ, Մնկիւսաղար, Կաղու Տենկիղու, Բերդի, Հոնաս, Ռոսոսձ, Իստիանքոյ, Բողբուձ, Մուղլա, Մալաս, Մանդալիսձ, Ղուշասոյ, Սոքա, Բեռլք, Մարտամ, Կեալամիս, Սոպուղայ, Բողբուղան:

Բ. Պաղտատ և Բարսա քաղաքք, ընդ որով է և երկիրն Հնգկաց որք են սոքա: Ի յերկիրն Բանկալայու՝ Կալիսմոյ քաղաքն, Զիլբայ, Սէյտասպատ, Կարայ, այլ և Մարաս քաղաքն, և Մշիլրանդար: Այլ և ի յերկրոն Փէկուայ՝ Մանկուձ Ղասապան, այլ և Սուրսձ քաղաքն, և Պուսրայի: Այլ և Հաջջանասպատ, Փէյղասպատ և Փաձան: Այլ և ի յերկրոն Զինու՝ Կանդուձ Ղասապան, (որ և Մարաս, յորս գտանին զաճառականք Հայոց երբեմն, նա և ի Բձախայ և ի Մանկոյ ևս գտանին):

Ի յերկրն Արեւելեան ևս ընդ Գարսիցն իշխանութեամբ:

Գ. Կիլանու երկիրն, որք են, Ռոնշու, Անկուլու Բիսմոյ, Սալիան, Մազանասարան, Լանգարուա:

Ի յերկրն Վրաց:

Դ. Թիֆլիզ քաղաքն, ընդ որով են և սոքա: Ի Թիֆլիզ քաղաքն՝ եօթն Եկեղեցիքն, այս ինքն, Վանքի, Սուրբ Նշանի, Զրկրաշինու, Սահակաշինու, և Բամոյնից երկու Եկեղեցիքն, և Բարափի Եկեղեցին՝ իւրեանց ժողովրդովքն, թող զայլ ևս մանր եկեղեցիան, որք ընդ սոքք են, և ընդ սոսին Տէրունիք սրբոյ Աթոռոյս: Եւ մի Եկեղեցի ևս զոյ ի մէջ բերդին՝ որ ասի Վաթուղիկէ, նա ևս է լեալ սրբոյ Աթոռոյս ի բնէ, սակայն ի ժամանակս Հահ. Ապասին՝ որ բերդն թուրքաբնակ լինի, զԵկեղեցին այն ևս

1) Վերջին երեք քաղաքն փակագծեալ յետոյ գրեալ երեւին յայլոց:

առանկէք զաթեն Ե յնուհետէ լինի առջիկ, և ժողովուրդ և անուն Լժնոսոյ և անհետանայ ի նմանէ մինչև ցայսօր, Իսկ զիւ երեք եկեղեցիքն՝ այս ինքն՝ Մուղնի, Բիկղէճէմ և Նորաշէն են Հաղպատու վանքն վիճակք, Իսկ և ի շրջակայս նորին պապիկի զեօզօրայք, այս ինքն՝ Կուսիտ, Ծարաշորիք, Յարախ-ձեղք, Գորգեխ, Սաղորիտ, Աօբան, Յարնախօղ, Կիպպէ, Կիկէթի, Ասուրէթ, Նախերուտն, (Բաց ի վերնոցն ի Վանքի Կանգախն նշմարեցեալ զեւղորայքն են, Մխախանայն, Օրաթաշուեն, Կիմանցի գիւղն, Ասու գիւղն, Մուխաթն, Բօլբալէն, Էրդիսն, Յարնապիղն, Աօպանն, Կիզեպէն, Սնիղօրիսն, Գուտիլիսն, Աերի-Թէլէթն, Ծղնէթն, Ծաւկանն, Ի ձեռն Կաթիմ կաթուղիկոսիս օրինակի.) Յորոց ընդ նուիրակութեանն զԼաւորորդական արքիւնն և անու Լժնոսո:

Ե յլ և ընդ սովա նուիրակականն միայն, որք են, Կախիթու և Քիսեղու երկրայքն, Կորի և բորբ Լրացաանու Երկիրն, Ե յլ և Ապախ, Բոնչալու, և Բամբկանորու և ուրիշն բորբ շրջակայիքն իւրեանց:

Ի յերկրն Բոսայ:

Ե. Հաշարիան քաղաքն, ընդ որով են և սորա. Գեարբուք, Մուկոզ, Ազար, Ասապիտ, Բոսաղան, Աերկիզ, Մոզղոկ և նորոց շինեալ նոր նախիչեան, և Կրիդարիապօլ. և նարոյ օտացեալ ի յՕսմանցոց՝ Աթիմ կուլցեալն իւրով ամենայն սահմանքն, այս ինքն է՝ Քէֆե, Էսի-դիմ, Աարասու, Էղձեխ, Կեօզլով, Բազաասայ, և Օրբաղար:

Կիսեա, զի Փառակեցի Բարնեղ վարդապետ ոմն միջ նուիրակ և Եօսմնորդ էր սչնոյ երկիրս ի Ճահկեցի Ապար Կաթուղիկոսէն կարպեցեալ, ժողովուրդ տեղոյն զգուցեալք ի զմեկեկոն բարուց նորին, գրեն զբողոք առ Ապար Կաթուղիկոսն, զի Հանցէ զնա անախ, Իսկ ի յապուր լինեն Կաթուղիկոսն, ժողովուրդքն խոտեալ զԲարսեղն, Հանեն ի յառաջնորդութենն, և Հրամանու Բազաւորին Ռուսոց՝ գնեն Եօսմնորդ իւրեանց զՍանգիաննոս եպիսկոպոս սմն ի վիճակն Գանձասարու ի ՌՃՂԸ Թուոնն մարտ: Եւ յայնմ հետէ Հատու Առաջնորդական իշխանութիւն երկիրն պնտրիկ ի սրբոյ Աթոսոյ յամն քան: Եւ յայսքան միջոցումս եպիսկոպոս ոչ նմուտ յերկիրն յայն ի սրբոյ Աթոսոյ, և ոչ մտանել իսկ կարեք. զի արգիւցեալ էր արքունական Հրամանաւ, Իսկ Սիւմօն Կաթուղիկոսն Երեւանցի գրեաց առ Բազաւորն Ռուսոց զապրատմութիւն երկիրն, և ինդրեաց զի վերապարձուսցէ ի Հնազանդութիւն սրբոյ Աթոսոյ: Եւ Բազաւորն ի խնդիր Հայրապետին խննարհեալ կատարեաց իսկ արքունա-

կան հերոզ և հանունսուն հրանձնայրով Զոր ցոցեն գրեցեալ ի վերայ  
մարտախմբի Ռուսներն սահեկարգեալ ընդ Հայերէն Թարգմանեցերչն ի  
ՌեճԱԸ Թուրք Փրկչին Եպա ի նոյն Թուրք նոյն Զարդակապն զ . . . Մի-  
նաս եգիսեպոսն նախրակ և Առանձնորդ կերգեալ մտաքէ ի յերկրս  
յայն փանուարապէն ի ՌՄՓԷ Թուրքն մերուս Զարդ զլիտփն տրպէն  
ի ( . . . ) և ի ( . . . ) զլուսն անցեալ

Զ. Ի յերկրորդ երևանոյ գիւղորայ քանակը որք են սորա Եւս մը  
Էջմիածնի դեղաւոր և կից սրբոյ Ավետոյս Կղկարց Թաշկան Ելիւէկու  
Դոզս Գարաբար Գեօկցու մեկն Կուսկերա Կրպար Բեպարայ յայն-  
կոյս Երասիի մեծի գետոյ՝ Սուրմարի Կոյր Ելիւէկու :

ԳԼ Է.

Թրոս՝ ցոցանին այն ինչից, յորոց ի յանունն զհաւերակն աբղիւնն որքոյ  
Աթոս ըստ երէց անցն, սանուս և ի արքին փանդոս զիւր զգանէրս, զս-  
տաղոսս զբոսանիս, և զայս այսպէնս որքիւս և ինչիւնս :

Ա. Բայազիտ քաղաքն, Դիստին, Կասիան, Ելաշիերա Թախրախ քա-  
ղաքն, Բաթմոց, Մանածկերս՝ իւրեանց չորակայ գիւղորեկերն :

Բ. Անն քաղաք, Թերկի, Մահմուտան, Արմէշ, Արծկէ, Լաղրակ.  
Լաղրու երկիրն, իւրեանց չորակայ նահանգք և կիւղորեկերն :

Գ. Կարայ երկիրն, Կաղզան իւրեանց գիւղորեկերն :

Դ. Գեղարբունի Արիսուլան, Շիրակ, Եպարան, Ծաղկունեանց ձոր՝  
իւրեանց չորակայ գիւղորեկերն Ծորոց անոյք զցորեան, զբարի, զտայ, և  
զայս այսպիսիս ի ժամանակ շնուձմանն :

Ե. Լոսի, Ապախ, և Բանդակաձորն՝ իւրեանց չորակայ գիւղորեկերն.  
յորոց անու. զփայտեղէն թիս, զլանաղս, զտախտակս, զերկաթեղէնս և  
զայս այսպիսիս :

Զ. Թիֆլիզ քաղաքն՝ իւրեան չորակայիքն յորոց անու. զմեղրեայ ման  
և զայս այսպիսիս՝ որպէս և ինքեանք արձանապրեալ են ի սուրբ Աթոս-  
ղոս ի ձախակողման կոյս մեծի դրան արոց Յաճարիս ի ՌճԼԱ Թաւա-  
նոյն մերուս :

Է. Նախիջևանու երկիրն, և սունն Գողթնեանց՝ իւրեանց նահանգքն.  
Ծորոց անու. զչոր ծիրանս, զնուշ, զբակլայս, զբանջարս, զընկուզս, և  
զայս այսպիսիս :

Ը. Գարեթ քաղաքն, իրեան շրջակայքին, յորոց անուս զըր խաղաքս, դուշո, և զայս պատկերս:

Թ. Կեանքոց քաղաքն, Համախի, Հիրվան, Բաղու, Գարբանդ Կուխի, Պարբու, Կաշնու երկին, և բոլոր տունն Եղուանից: Յորոց անուս գերկամս, զերկամեղէնս զարգեղէնս և զայս պատկերս: Յորս և Գանձանակ ևս ունի: Արք ձեպէս են Գանձասարու թեմք, սակայն են Տնազանդք սրբոց Եփեսոսոյ և Եփեսոսակոյ սրբն: Արոյ և զանունն յիշին Եկեղեցիս իւրեանց նախ քան զանունն Կաթուղիկոսին իւրեանց: Արոց զլիակն սրբաւաթիւնն յայլում տեղոյ գրեցուց:

ԳԼ. Ը.

Յորում շնորհակալն արդեսնինն արքայ Ամուսոյ և արքն Կաթուղիկոսոյն է իւզանն իշխանութեանն — յայտն Լոյոց, ի թիւն Ե՛ր յի. և արդէ: Եւ լուսն այլոց Կաթուղիկոսոց, և զարդիւրիւց, և տառապարհաց, և որպիսեանցց Կանխանն:

Երդ որպէս մի է միջնորդն Լոր Եսաուծոյ, և ամենայն մարցիւն, մարցն Յիսուս Գրիստոս (յսա սրբոյն Պօղոսի) որ ևս զանձն փրկանս ընդ ամեննչուն, նորապէս և երկրորդապէս յես Գրիստոսի մի է միջնորդն Եսաուծոյ Տեառն մերոց Յիսուսի Գրիստոսի և յսաուկ ազգիս Լոյոց մարցն Եսաուծոյ սուրբն Գրիգորիոս Լուչաւորիւն մեր, որ ևս զանձն փրկանս ընդ ամենայն ազգիս Լոյոց, որ սնորհնեցմալն Եսաուծոյ, և աջօթիւք սրբազանից Կոստանդնուսի մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի, յորոց շատախոյանք արարեցեցաւ, մեզ Փրկիչ, և Կաթուղիկոս որպէս Մօսէս Տառն Եսաուղիի Արիմն որպէս Գրիստոս ըստ ամենատեսակ յարկարարութեանն իշխանութիւն ունի ի վերայ Տասարակ մարդկայինս յեսութեան, նորապէս և երկրորդապէս և յես Գրիստոսի սուրբն Գրիգոր ըստ բազմատեսակ յարկարարութեանն իշխանութիւն ունի ի վերայ յսաուկ ազգիս Լոյոց, զորմէ ըսցաստեղ պարտի նախապէս զայլակայնէութեանն և զԳրիստոսական Տառնոյն իբրմէ ըսցաստեղ: Բանցի որ Լայկածին է և Տառնացեալ Գրիստոսի սովա և ի ձեռն սորա ունի զՏառնան զայն: Եւ կարճատօտապէս առանց ամենայն Տառնակութեան և անընդդիմաճառութեան, ըստ Տոբոց և յոս Տառնացոյ, Փրկիչ, լուսաւորիչ, Տոբիւ, առաջնորդ, վերակացու և իշխան Լայրապետ և ծաղկազոյն Պատրիարք բոլորի ազգիս Լոյոց յես Գրիստոսի է սուրբն Գրիգորիոս: Բանցի ըստ իմաստասիրաց իւրարանկիւր սի-

րայի մի է սկիզբն. ապա և մերումն սիրայի ըստ հաւատոյ՝ և ուրիշն. Քրիստոսը. որ ընծիւղեցաւ ի բուն սկզբէն և ի ճշմարիտ արմատոյն Քրիստոսէ, միջնորդութեամբ և յօղաւորութեամբ արդոյն Քաջեռօրի առաքելոյն՝ հարազատի և մերձաւորի նորին. Իսկ և սորին առաջնորդարանն, Հայրապետարանն, պատրիարքարանն, Աթոռ և զահն իշխանութեան է սուրբ Էջմիածին. որ խնդրուածովք և միջնորդութեամբ նոյնոյ արդոյն Քրիստոսի և իջմամբն Քրիստոսի Աստուծոյն մերոյ յօրինեցաւ լուսաձև և սքանչեղակերտեցաւ. Աստուածային փառօր յերկիրս Հայոց ի դաշտս Երարատեան, և ի Աղարշապատ քաղաքոյս. Ապա ուրեմն ձյի և տարածի հոգեօր իշխանութիւն արդոյ Աթոռոյս ի յամենայն տեղիս և ընդ ամենայն ճագս երկրի՝ ուր կան և գաւանին Հայկածին և Լուսաւորակիւրօն ժողովորդք և հոգեօր ժողովարան. Քանզի ուր և գտանին յազգէս Հայոց թէ եկեղեցիք և թէ եկեղեցիակաւք. կարգաւորք և պաշարհակաւք, ի յինչ կողմն և իցն՝ ընդ վանկաւքն պարուանդեցեալք և փակեցեալք են ընդ իշխանութեամբ արքայ Աթոռոյս Էջմիածնի, և ի սմա նստող Հայրապետացն՝ որք են յաջորդք և փոխանորդք արդոյն Քրիստոսի Լուսաւորչին Հայրապետեաց, և ի սմա նստող Հայրապետին է յատուկ իշխանութիւն զրոյր եկեղեցիս Հայոց հաստատել, բարեկարգել, և ի կանօնի պահել, զաւելորդան բառնալ և զթերին լցուցանել, զեկեղեցիոցս ձեռնապրել, զառաջնորդ կարգել, զհաստատելու ուղղել, զանարժանան և զանուղղելին հանել ի յեկեղեցոյն և լուծանել ի կարգէն, անարգել և բացարձակ իշխանութեամբն հրամայել զհոգեւորան և զօգտակարան, փակել և բանալ, փակել և արձակել. Եւ ըստ ժամանակին զՆուիրակունս առաքել առ յամենեանս իրր փոխանորդ ինքեան, ի քննել և վերահասու լինել զորպիսարար կացութեանց եկեղեցեաց և եկեղեցականաց, զիւղն Աստուածագործ բաշխել ի յօճուան օճկոց և ի արագնադործել զորագործելին. Եւ միանգամայն որք փոխարեւին ի յեկեղեցիս և ի հաւատոս, ի արդոյ Աթոռոյս և ի սմա նստող Հայրապետացն վերառաքին, արին, և կարգին ի յազգս Հայոց որպէս ի միոյ մշտութուղիս ազբերէն. Ասան որոյ և ազգս Հայոց փոխաբերաբար ի ցուցանել զհաղանդութիւն շնորհակալութեամբ հանգերծ, յիշն զանուն Հայրապետին յամենայնուժ՝ յաւուր յեկեղեցիս իւրեանց և փան յօճարութեամբ զհաստ Նուիրակականս, զգանձանակս, զհոգեւածինս, զյիշատակիս, և զայլս արդեանս ի ձեռս Նուիրակացն սորին ըստ պայմանեալ ժամանակին.

Եւ Նուիրակն սորին որքան ի յեկեղեցիս իւրեանց կացցէ, հնազանդութեամբ և անարատեղ ընդունին հոգալով զպիտոյան կերակրոց և ընկելեաց. յիշն և զանունն ի յեկեղեցին նախ քան զանուն Առաջնորդին

ի բեանց, նախագահ անուով քան զնա տեղեալ, և պատուով: Արդ ի սրբոյն Պրիգորէ Լուսաւորէն մերմէ մինչեւ ի սուրբն Պրիգոր Յայլ կոտեցեալն Հարապետ (որ էր եղբարս սրբոյն Ներսիսի Ընորհալոյն) յամս ՊԹԿ մինչեւ ի ԸՊՁ թուականն մեր, այսպիսիք կանոնիք վարեցաւ և տեսաց անորդապէս և անարատարս օուրը Ամոռս: Քանզի յայսքան միջոց ազգ մեր գոյր անառարագիր, անցանկիր և համաժողով յերկիրս Հայոց, և Հոգեպետն իշխանութեանք վարիւր ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ (թէ պէտ էր բերնն պոչտաւ և երբնն նուազ) և Պաթուղիկոսն ի յերկիրս իւր նափր' և զազն ընդ ձեռամբ ունէր: Եւ թեպէտ երբնն արտաքոյ սրբոյ Ամոռոց յողոր նաեկն Պաթուղիկոսն, ի Պփն, յԱնի և յայլուր սահայն յանուն սրբոյ Ամոռոց կոչիւր և սովաւ փաղիւր և իշխելոյ քահակալ և փոխանորդ սրբոյն Պրիգորի անուանիւր, որպէս զմիապետական պիտ բարի ազգիս հացոց: Թորում էր ճշմարիտ մի հօտ և մի հօգիւ մ'՛, աւազ մեզ, որք յայնպիսոյ երջանիկ ժամանակն գրկեցաք: Եւ յայն ժամանակն թեպէտ գոյր և Եղուանից Պաթուղիկոսութիւնն ի քնէ անտի ի Լուսաւորէն հետէ, սահայն շէր ինքնաղլուխ և անհնապանդ սրբոյ Եջփածնի և սորին Պաթուղիկոսացն: Քանզի պատմեալմաք և հըրամանաւ սորին ընտրիւր և նախիւր, և ի անանէ օժանիւր, և էր հնազանդ յամենայնք, որոյ և զանունն յնկեղեցիս՝ նախ քան զանուն իւր յիշէր, որպէս, և է մինչև ցարգ, յորոց թէ և ոմանք երբնն ընդվզեալ ներհակէին և կամ հնաեկն ի յուզիլ պողոտայէն, ի յիշմամշի նստող Պաթուղիկոսէն պատկեայ թանիւ յիննին և յԱմրոնն ձա ընկեցեալ թիւնն՝ որպէս և պատմն պատմչքն Եղուանից և Արեւնաց: Թոյնպէս է և մինչև ցայս փայր ի ժամանակս մեր, որ գրեթէ անուամբ և օժանիւր միայն էին Պաթուղիկոս, և ո՛չ ըստարձակ և ինքնաղլուխ իշխանութեանն: Եպս ի ԸՊՁ թուոյն մերում՝ ի զօրանալ առնիական իշխանութեանն, և ի տկարանալ զօրացն Հայոց, մինչ փոխեաց զԱմոռ Հարապետութեանն ի Հոռակոյն վերայդրեցեալ Պրիգոր Պաթուղիկոսն, և անշքացոյց զԱմոռս Եջփածնն, Պատիթ վարդապետ ոմն (որ ի նոյն ժամանակն առաջնորդ էր կզգոյն Արեւմամարոյ) ապստամբեցաւ ի Պրիգոր Պաթուղիկոսէն և նստաւ ինքնաղլուխ Պաթուղիկոս ի նոյն կղզոյն, որ և տեսաց նոյն ապստամբութեան ընձիւղն մինչև ցայսօր: Թորմէ հետէ եղն երկուք Պաթուղիկոսութիւնք Հայոց՝ ի Հոռակոյն և ի յԱրեւմամար, յոր ոչ սեր գոյր և ո՛չ նախագահութիւն, եւ ոչ միայն Պաթուղիկոսութիւնն բաժանեցաւ, այլ և գրեթէ բոլոր ազգս Հայոց յերկուս բաժանեցան յանմ հետէ: Զի ըստ վճռոյ իմաստասիրաց, որպէս քուան է ժամանակն՝ որ հարկիս հետեցուցանէ ինքեան զնոյ ին-

քեանք եղևալն, նոյնպէս և յաղթող է ահդին՝ որ հարկիւ փոխոխէ զառ ինքն յեցեալսն: Բանդի ի փոխիլ Վաթուղիկոսութիանն ի յերկրէս Հայոց ի Հոռմկայն, ընդ ն կն և ազգս մեր դիմեցին որ ըստ օրէ յայն կոյս, կարգաւորք և աշխարհակոնք, մինչև ժամանակ ինչ լմպաւորութիւնսն և ս փաղեցան: Բայց որով իսե Երկիրն Յունաստան էր և յունսնսակ, և մեյրն և ս ընդ նոսա յարեցեալք, սկսան և նոցայն սովորութիւնսն վարել, բարւք, լիցուք, հանդերձիք, ուտելիք, և բնակելիք, և այլովք՝ որ ըստ աշխարհի, և այս այնքան՝ մինչ գրեթէ Հայ անուամբ, և յուսաւորադաւան կրօնիք (և այս և ս ոչ բողոքովին) միայն էին ի մեզ, իսկ այլովք ամենիք զատեալք և որոշեալք ի մնացորդաց յերկրոջս Հայոց: Վասն որոյ անկաւ յայնմ հետէ պղաղութիւն և մեծ խարութիւն ի մեզ Եունաստանարնակաց և Հայաստանարնակաց, թէ՛ փոսականաց և թէ՛ աշխարհականաց, որ տեէ իսկ հաստատուպէս մինչև ցայսօր, Երգ տեւեաց Վաթուղիկոսութիւնն ի սուսնն Վուլիկեցոց յամս ՅԻՄ, որքան և տեւեաց մամաւոր իշխանութիւնն Ռուբենեանց ի նոյն, յիս այնորիկ մինչ հասարակեաց բունութիւնն տաճկական և գրաւեաց զբոլոր երկիրս Յունաց, Հայոց, և Պարսից, և իսպառ վերջացաւ իշխանութիւնն Հայոց և Յունաց, և աւերեցաւ Վաթուղիկոսութիւնն Սասն, և գերեցաւ Վաթուղիկոս իւրոյնովքն ի յնգիւրտս, (որպէս ասացաւ ի վերն), ապա որորմութեամբն Ըստուծոյ վիշաւարդեցաւ ինիկ Եւթոսս Հայոց սուրբ Էջմիածին և վերադարձաւ Վաթուղիկոսութիւնն ի Սա ի ՊՂ, թուոյն մերում՝ հաւանութեամբ բոլոր երկրիս Հայոց, Բայց որք ի Յունաստան մնացին և ի սուսնն Սասն որովհետեւ յարեալք էին ընդ Յոյնս և ուսեալք զբոլորս նոցա ոչ վերադարձան ի Հայս և ոչ հնադարեցեան Վաթուղիկոսին Էջմիածնի, այլ ի նոյն յամսուեալք նստուցին և նոցա ինքնացուի զՎաթուղիկոս ինքեանց որով եղև երկք Վաթուղիկոսութիւնք Հայոց բաց ի յնդուանից Վաթուղիկոսութիւնն, որք և չորհրհունքն և սկսան նստել հրամանաւ և գրով տաճկական տիրանց՝ որպէս և է մինչև ցայսօր, Երգ եթէ ճշմարտութեան աշակերտք էին և իրաւանց հետեողք վարդապետք Սասն և Եսթամուրաւ, ի վերանարողի Եթոսոյս Հայոց Էջմիածնի, պարտէին բառնալ զանհինն, զհամարացս և զպատահանիս Վաթուղիկոսութիւնս իւրեանց և հետեիլ և հնազանդիլ արմատոյ, հիննահաստպա և ինիկ Եթոսոյս իւրեանց և սմա նստող Վաթուղիկոսին, որպէս հետեւեցան Էջմիածնայինքս նոցա՝ և ըրիցին այնքան ժամանակս նե թէպէտ Վաթուղիկոսութիւնն Հայոց այսպէս ի բազումս բաժանեցաւ՝ որպէս ասացաք, սակայն Էջմիածնայինս Վաթուղիկոսն յատաջ և յետոյ և մինչև ցարդ շնորհքն Ըստուծոյ է նախապատիւ, զերապահ, հոշակաւոր և անուանի քան զայլսն ի յամս-

Նախ ազգս և է սիրելի և ահարկու և վերայ ամենեցուն. որ եթէ հարկն պահանջիցէ և զերաւունս ունիցի, կարէ և բանիւ ատնել զմիւս Պաժուղիկոսն և լուծանել ի կարգէն. նմանապէս և զկախկոպտունան և զաչր կարգաւորան նոցին: Բայց նոքա ոչ բնաւ և ոչ կայան իսկ ձեռն անել ի Պաժուղիկոսն Եջմիածնի, և ոչ ի կարգաւորս և յաշխարհահանս նորին վիճակի. այս ոչ եթէ ըստ բնիկ՝ սեպուհ և իսկականի նախագահական և հոգևորական իշխանութեանն միայն, այլ և ըստ վճռոց այլազնեաց և մերազնեաց հասարակութեանց և ըստ հրամանատարութեանց մարմնաւոր թագաւորաց և աչոյ իշխողաց. որոց վճիռք և հրամանագիրք ահա՜ գոն ի սարբ Լեթոսս արդէն: Զորոց յետո՛ ի տեղ ոչն տեսցուց: Ասան զանազանից Պաժուղիկոսացն Հայոց այսբան:

Իսկ և վստն Պատրիարզացն և Եռաջնորդացն ազգիս Հայոց պիտէս գրեան՝ զի ի բաժանել Պաժուղիկոսացն իւրեանց մասնաւոր վիճակբն, մնաց մեծ մասն վիճակ սրբոյ Եջմիածնի, զորս ցուցնալ եմք ի վերն ի գրութն նախորդական և Եռաջնորդական տեղեանցն: Եւ որ ի մէջ այնց վիճակացն որքան վաճ օրայք, եկեղեցիք և նոցին առաջնորդք գոն իւրեանց վիճակօքն և ժողովրդովքն՝ կարգաւորօք և աշխարհականօք՝ էին և են հնազանդք օրբոյ Լեթոսոս Եջմիածնի. որոց և ամենից առաջնորդքն ի յԵջմիածնանիստ Պաժուղիկոսացն լինէին կարգեցնալք և լուծեցեալք օրպէս ի վերն ասացաւ:

Սև ի մէջ նոցին նախապատիւ և գերյարգելի զկնի Պաժուղիկոսին՝ էին և են օրպէս Պատրիարգ, չորից սրբոց և հռչակաւոր վանից Եռաջնորդքն, այս ինքն սրբոյն Թագեոսի առաքելոյ վանիցն որ ի յԵրտազ գաւառոյն, սրբոյն Սասնէի վանիցն որ ի Սիւնիս, սրբոյն Աստուածածնի վանիցն որ ի Բջնի, և Սրբոյն Նշանի վանիցն որ ի Հաղբաթ. որք են իբր Լեթոսականալք և տեղապահք Պաժուղիկոսին, որոց և ի յընտրութեանն պարտին ներկայ գտանել և յօժմանն նախապէս զձեռն դնել ի զագաթ Պաժուղիկոսին իսկ Երուսաղեմայն ոչ է պատրիարգ և ոչ Եռաջնորդ, զի ոչ ունի ինքեան յառուկ Լեթոս, եկեղեցի և վիճակեցեալ ժողովուրդ, և ոչ ինքն իսկ Սրուսաղէ՛՛՛՛՛ է երկիր և տեղիք Հայոց. զի նախապէս էր երկիր և քաղաք Յունաց՝ և երկունք իսկ պատրիարգարան նոցա ի ժամանակս Գրիստոսնէից թագաւորաց. իսկ յետոյ ի տիրելն յՕսմանեաց ազգէն բարձաւ պատրիարգութիւնն Յունաց և իշխանութիւնն ամենայն Գրիստոսնէից անտի: Այնուհետև ելև հասարակ տեղի ինն ուխտից բոլոր Գրիստոսնէից. յորում և ստացան իւրաքանչիւրքն զյառուկ տեղի ինն ինքեանց, զգորս և արարին վանք և եկեղեցի, որոց և կացուցին իւրաքանչիւր ազգ զսպասաւոր և հոգաւորձու ինն, զի նստեղով անդ՝ զտեղիս իւրեանց

գրչուպանեացէ և ուխտարարացն իւրեանց աստիճական լինիցի. նորոպէս  
 է և մերն, որ է միայն սպասաւոր և հոգարարձու սրբոց տեղեացն՝ որք  
 Հայոց ազգիս են բաժին: Արոյ աղապաւ և առաքէ զհրաւիրակս ի յազգս  
 Հայոց՝ ուր և իցին՝ ի հրաւիրել յուխտ և յերկրպագութիւն սրբոց տե-  
 ղեացն անօրինականաց, և խնորէ զկամաւոր սղարմութիւնս ի պէտս իւրոցն  
 և ի աղջճաւութիւն սրբոց տեղեացն: Քեպէտ ի յուխտն ժամանակս ոմանք  
 վատասէրք և ախտամոլք սեւալլուիք յանգլխութենէ, ազգիս զժամ գտա-  
 նելով՝ զինքեանս պատրիարզս անուանեցին, և զհրաւիրակս իւրեանց նուխ-  
 րակուանս զորս և զսեհիկ հասարակութիւնն ազգիս մարց անընտրողապա-  
 ստիարութիւն արարեալ կոչեցին և կոչին: Այսպէս է և ի Կոստանդնու-  
 պոլիս, որ ոչ է երկիր և քաղաք Հայոց, ալ Յունաց. յորում նախք  
 Յունաց պատրիարկն որպէս և արդէն իսկ նստի: Եսկ ի յուխտն ժամա-  
 նակս ի քան և ցիր լինելն ազգիս, և սմանց ևս անպր զնալով ի վաճառա-  
 կանութիւն, և ի բազմանայն օր ըստ օրէ, և ի անաւորիկն իսկ, սկսան և  
 զեկեղեցիս ստանալ յատուկ Հայոց. վասն որոյ և հարկ ելլէ զի և առաջ-  
 նորոյ մի ևս ունիցին, զոր և ունեցան իսկ հրամաւաւ Կաթուղիկոսին: Յետ  
 այնորիկ ի զօրանալ թագաւորութեանն Օսմանցոց, և ի յաճախել  
 իշխանացն և ժողովրդոց մերոց անց, սկսան ընդզլել և անտարտուանիչ  
 յանցր նստող (Առաջնորդքն և թողու զհոգևորն կանոն, և առ յուն  
 հարկանել զպատիւն Հայրապետին, հրամանապրով պըրզգի թագաւորին  
 նասել ինքնազուխ կանոնելով և զհարկս առ յարևունիս յամէ  
 յամ, յորոց և Փաթրիկ անուանել: Աստի և ի հասարակութենէ զը-  
 սեհեաց սովորութիւն եղև Պատրիարկ կոչիլ: Երգ թեպէտ ի Պոլիս նստա-  
 ղըն արպէս ամբարտաւանեցաւ, սակայն այլոց քաղաքաց և վիճակաց  
 ժողովրդոցն մերոց՝ որք էին ի կողմանս յայնոսիկ, առաջնորդքն ըստ օրի-  
 նի ի սրբոց էջմիածնէ և ի սմա նստող Կաթուղիկոսէն կարգէին. սակայն  
 ի Պոլիս նստող Փաթրիկ կուեցեալքն զնալով ի յամբարտաւանութենէ  
 յամբարտաւանութիւն, մինչ զի և զԱրիստղանայն արկին ի գործ, ի յան-  
 կողնս հօր իւրեանց եղանելով և զիշխանութիւնն նորին ի յինքեանս  
 գրաւելով, զոր և արարին իսկ, Բանդի որովհետև ինքեանք հետեցան  
 ի ճանապարհէն ճշմարտութեան, թողլով զՀայրապետականն պատիւ,  
 հրամանաւ Օսմանցոց անբութեանն նստան ի Պոլիս առաջնորդ, սկսան ա-  
 պա և յայլ Առաջնորդական վիճակս (որք էին ընդ անբութեամբն Օս-  
 մանցոց) ձեռնամխել և հանել յիշխանութենէ Կաթուղիկոսին: Բանդի  
 կարգեցին ի դրունս յարբունի յամ յամ զհարկս վասն Առաջնորդա-  
 կան վիճակայն (զոր մոխաթայ անուանեն), զորս և արկեալ ի ներքո  
 հրամանապրի տաճկաց, սկսան ինքեանք կացուցանել զԱռաջնորդս նոյա

Թաղաւորական Կոնսիլ-1): Որք և գրեթէ ցարգը Աւաջնորդական վիճակն (որք ընդ տէրութեամբն Օսմանցւոց)՝ հանեալ իշխանութենէ Վաթուղի-ղիկոսին՝ արկին ի ներքոյ հրամանագրի Օսմանցւոց, բայց ի յամանց տեղեաց, զորս յետոյ յառիցուցից: Վասն պարտիկ և յաճախեցան ի կողմնան յայնուսիկ թերահաւատութիւնք, ախթարմարութիւնք, և պէտպէս սպորինաւորութիւնք, և յաճախեն ևս օր ըստ օրէ: Ձի Աւաջնորդք նոցին տաճկական հրամանաւ նստին և ջանան միայն զհարկս աղքատներն սաղ և զանձինս իւրեանց ճարակել, Իսկ Վաթուղիկոսն զորով ընդ տէրութեամբն պարտից, ոչ այնքան կարէ իշխել ի վերայ նոցա, ի հապածել, ի տուգանել, և պղտժք մարմնաւորօք պատժել, միայն բանադրել կորէ, այն ևս ոչ ինչ օքտէ զի վտանգաւոր է իշխանութիւնն Օսմանցւոց, յորմէ քնարք յառաջանան քան թէ օգտութիւնք, և մանաւանդ ցեցն ի միջոցէ և ոչ յարաբարաւ: Ո՛հ, ընարեցի կարճառօտել զպայսպիսեաց քան երկարել: Արդ ո՛չ թողից անմեղադրելի և զայնս՝ որք մնացին ի կողմնանս մեր ընդ տէրութեամբն Պարսից: Քանզի ի բառնիլ իշխանութեանն Հայկական ըստ մարմնաւորի տէրութեան, զօրացաւ տէրութիւնն պարսկական իշխանութեանն, որոյ զրոյն և հրամանաւ նստիւր Վաթուղիկոսն, և անարգելօրէն վարէր զիշխանութիւնն իւր ի յողջս Հայոց, եթէ հոգևոր պատժօք ոչ գային յուղղութիւն հետեցեալք օմանք, մարմնաւոր պատժօք նուաճէր: Որում և արիւր բացարձակ իշխանութիւն յարքայիցն Պարսից, որոց հրամանագիրք՝ զորս տուեալ են Վաթուղիկոսացն, ահա՛ գտն ի սուրբ Աթոռօջս: Իսկ ի բառնիլ և սոցին տէրութեանն իսպառ, որ յԱպազհան նստիւր և Շահ անուանիւր, ի ՌճՂԷ թուօջն մերում, տես պատահեաւ և զթշուառութիւնն ընդ տէրութեամբ սոցա եղելոցն:

Քանզի բարձաւ միապետական թաղաւորութիւնն սոցա, և իւրաքանչիւր քաղաքի խանք եղեն ինքնագլուխք և աներկիւղք յումբէր, որք ևս սկտան ի վերայ միմեանց յառնել և զերկիր իրերաց քակել և աւերել որք և գրեթէ ամացացուցին զտուրք երկիրս Պարսից և Հայոց, մինչ զի ի միջ երկրէ և ի նահանգէ՝ որում իշխէր խան մի, յայլ երկիր և յայլ նահանգ՝ որում այլ խան իշխէ, ոչ կարէ որ գնալ, և կամ կարի գժուարաւ: Ուստի իւրաքանչիւր խանից (ընդ) իշխանութեամբ եղեալքն ի խանս իւրեանց յեցեալք թէ՛ տանիկք և թէ՛ Հայք ի միմեանց օտարացեալք և թշնամիք իսկ եղեն իրերաց ըստ ախորժակաց խանին իւրեանց: Այսպէս և այլք գլխաւոր արշ+ 2) տաճկաց սկտան զոմանս ի Հայոց ընդ ձեռամբ ածել, և ի զեղջ իւրեանց բնակեցուցանելով՝ իւրեանց

4) Իրավարտակ: — 2) Տէր, իշխան, պարս: —

ծառայեցուցանել, և յանկարգանայն սմանց Էպոսոյ, ի վրէժխնդիր լինելուն Կաթուղիկոսին, առնիկք անաղք նոցա տէր կանգնել և ոչ թողուլ: Արդ լայ պղուժս Կաթուղիկոսին, որ յայտարարեալ ժամանակի պատահի՝ որպէս և նա սր զրեան ամբոխեցնալ մազք և թշուառական կենսոք: Արդ վերջապուցանելով զայտարարաց, եկեցցո՛ւք և ի մեր յառաջին դիտումն որ էր վնասն Առաջնորդաց: Որք թէպէտ պտպես և քան զայս առաւել արարանդի եղև ազգս մեր, աակայն որք յերկիրս Պարսից և յայլ իշխանութիւնս (բաց յՕսմանցւոց երկրէն) Առաջնորդութիւնք գոն, ի յԷջմիածնախիսա Կաթուղիկոսէն կարգին ըստ նախնոց սովորութեանն մնչև ցայսօր:

ԳԼ. Բ.

Յորում ցուցանին սրբաւարտութեամբ շնորհակցանք Կաթուղիկոսին պէտք էրիսանի՝ և զՊարսիք ընդառնեան, և ծման: Եւ յետ ծննդանն թղթագրութեանն նորն, և թէ ո՛ր գրէ պիտի ի թղթագր, և այլ ո՛ր գրէ պիտի ի թղթագր առ Կաթուղիկոս և թէ զո՞րք յարգի Կաթուղիկոսն և ո՛րպիս: Եւ այլ այսպիսի որպիսանայց Կանխանս:

Ի ժամանել անարդիւնցի և անտակի Հրամանին Առաւելոյ առ Կաթուղիկոսն ի կոչել զնա առ յինքն, պարտին ժողովել ամենայն միաբանքն ի վերայ նորս, և ըստ օրինին Հանել ի սեղորէն ի վարս ի զսպել, և ազատ զիտաւոր միաբանք և գործակալքն սրբոյ Աթոռոյս երկու կամ երկք անձինք զամենայն դրոմանն Ա. Ե. Հարանին կըքել ներկայութեամբ և գիտութեամբ զիտաւոր սպասաւորի Հանգուցելոյ վեհին, և ապա թաղել զնա մեծաւ Հանդիսիւ որպէս օրէն է, և զսպասաւորան նորին Հանել ի Ա. Ե. Հարանէն՝ և ի կարգս միաբանիցն ընակեցուցանել, և զգրուանն Ա. Ե. Հարանին կըքնալ պահել զգուշութեամբ մինչև և ի վերանստղ նորոյ Հայրապետին, և թէ պարամ և կամ զքսուր ինչ Հարկաւորիցին ի հանել ի Ա. Ե. Հարանէն, վերոյ երկու (կամ) երկք անձինքն ընդ գիտաւորի սպասաւորի Ա. Ե. Հարանին ի միասին բացեալ զգրուանն՝ Հանցեն, և գերասին կըքիցեն: Եւ այլ ոչինչ ունին Հրաման ընծութեան և Հարցաւորանութեան Ա. Ե. Հարանին, և կամ զսպասաւորան Հանգուցելոյն խոտանագիցոյ՝ բամբասելոյ և կամ վատարանելոյ Գանդի այսպիսիք՝ արեք վերանստղ Հայրապետին է և ոչ պարամ: Եւ մեծաւանդ այնպիսիք վայրապար յաջ և յահակ խօսողքն ո՛չ են օգտարարք և բարեկամք Աթոռոցն, այլ զիտաստուրք և առականարացողք նորին որպէս յայտնի է խոհեմարանից ան-

ձանց, Եւ յան պարտաւորութիւնս թաղելոցն զհանգուցեալն, ապա  
 գրեցեն գործակալքն Աթոսքն ի մտաւոր քաղաքս և ի վանօրոցս  
 Աւախարաց՝ երևելեաց, և զիւսուորաց իշխանաց, և հրախիւսեցեն ի յաւ-  
 թան, և ժողովեցին աւարքի սրբոց Եղման տեղւոյն ի յառեան Կիտեղց-  
 ւոյն, թողեալ ի բաց զառեանն, զաթուաւթիւնն, զանձնական օգուան,  
 զյառակիւն սիրելութիւնն և զոչոք միտա տեսաւորական, նախապես խո-  
 կացցեն զարժանաւորութիւնն և զկարողութիւն անձին և մանաւանդ ըստ  
 ժամանակին, երկրորդապէս զօգուան սրբոց Աթոսքն և երրորդապէս  
 զհասարակաց հասանութիւնն և զանգաղմտեղիչի գոյն (որք են նշմար և պա-  
 քապոյք կասարելութեան ընտրեցելոյն). և ի գտանելն մարանութեամբ պայ-  
 տիսի արժանաւոր զք' թէ՛ յԱթոսոյն և թէ՛ յարապոյ Աթոսոյն, ապա  
 առաջին շահարկեալն. և ապա գրեալ գրազմակերպ թուղթ համահասու-  
 նութեամբ՝ առաջեցցեն հաստարիմ արամիք ի Պատանգնուպոլիս և ի  
 յԱւագահան քաղաքն և յայն քաղաքս՝ ուր ձեռնհաս իցեն՝ ի յարջօրեղ  
 զնոսս ի համահասանութիւն ընտրեցելոյն իւրեանց. որոց և ի համահաս-  
 անելն, քերն զհասանութեան բազմակերպն և ընկալցին իրքն զհարա-  
 պետ ինքեանց:

Ապա և ընտրեցեալն՝ եթէ յԱթոսոյն իցէ, օժի, և թէ յարապոյ իցն՝  
 քոյ ի յԱթոսս և օժանի հարապետ, Եւ յեւ օժանն, և քերն զքերանս  
 գրէ յամենայն քաղաքս և ի վիճակս Օրհնութեան և շարհակալութեան  
 զի գինքն արժանացցան այնմ պատուոյ. ընդ նմին և զպատուէրս ևս՝  
 եթէ անիցի. Եւ յարան առ ընտրութիւն Հարապետին, Իսկ և վասն կրնա-  
 քաղաքութեան և յարջան Պաթուղիկոսին առ յայն, և յայնոց առ Պա-  
 թուղիկոսն, այս է կանօնն:

Հասարակապէս առ ամենայն Յանիկ ազգս, թէ առ թագաւորս Ոսմանց-  
 ւոց, և թէ առ շահն Պարսից, նշմարէս և առ փառչոյս և առ խանս և առ  
 յայլ մեծամեծս և գործակալս նոցին՝ որոց և հարկաւորիցի գիր գրել  
 Պաթուղիկոսն, ըստ նոցին օրինի տանկական բառիւ պարտի գրել և ըզ-  
 փելքն փոքրիկ յեակցս թղթոյն՝ ուր վերջացեալ է բանն, անց դնել  
 միշտ, կարմաղեղով՝ ըստ կարգին. Իսցս առ թագաւորն և առ մեքն  
 ցիւսուոր իշխօզն արզայապէս պարտի գրել, իսկ առ յայնն, որպէս առ սիրե-  
 ընս և առ բարեկամս, Եւ ի գրելն թագաւորաց առ Պաթուղիկոսն, հրամա-  
 յարպէս գրեն և զինք և զնշանն իւրեանց ի ձեակա թղթոյն դնեն միշտ  
 Իսկ բոց ի թագաւորաց և ի թագաւորապետեաց՝ Եւ և իցեն ասանիկ  
 թէ՛ փառչոյք և թէ՛ խանք և այլք. որպէս առ բարեկամ գրեն, և զինքս  
 իւրեանց յեակցս թղթոյն՝ ուր վերջացեալ է բանն, անց դնեն. Իսկ ի  
 յեակն ժամանակս՝ մինչ բարձաւ թագաւորութիւն Պարսից միայն խանն

մեր Երևանու սկսաւ հրամայապէս գրել՝ և զհինքն թէպէտ ի վերջ բանին, սակայն յերես թղթոյն գնել, և Վաթուղիկոսն առ նա արզայապէս գրել: Բայց և ի մերում ժամանակի ի ՌՄԹԿ թուոցն մերում՝ նմանապէս երարձ և խանն մեր Հիւսէին՝ այլ զհրամայապէս գրելն իւր ի մէնջ, և զհինքն իւր ևս յետկոյս թղթոյն գնել հաստատեաց: Բայց մեք արզայապէս գրեաք առ նա: Իսկ և որքան առ յարգուած սոցին զմիմեանս՝ այսպէս գիտեա: Թագաւորք և թագաւորապէսք, թէ Օսմանցոց և թէ Պարսից, որք ընդ բոլոր երկրին, նա և զերկիրս Արարտեան ընդ իշխանութեամբ ունիցին, ի խնդրելն զՎաթուղիկոսն, ի հարկէ պարտի գնալ և հնազանդել, և ուր հրամայեցեն՝ անդ նստիլ: Նոյնպէս և ի գալն նոցա (եթէ պատահիցի) յերկիրն իւր, ընդառաջ ելանել և ծառայել: Իսկ բաց ի յայտարեսաց թագաւորապէս իշխողաց, և բաց ի յատուկ Երևանու իշխողէն, այլք փաշայք և խանք առանց հրամանի թագաւորին ոչ կարեն խնդրել զՎաթուղիկոսն առ յինքեանս, և ոչ գնայ իսկ: Իսկ եթէ պատահիցի՝ զի Վաթուղիկոսն առ նոսա գնայցէ, յոտին կանգնեալ պատուեն զՎաթուղիկոսն և յանդիման ինքեանց հաւատարարք՝ նստուցանեն. և թէ նոցա պատահիցի զալ յԱթոռս, Վաթուղիկոսն ինդառաջ ելանէ ի վանիցն յարտաքս, և մեծաւ պատուով բերեալ նստուցանէ ի պատուաւոր տեղւոջ յանդիման ինքեանս: Այսու կանոնիւս վարի և առ Երևանու խանն. սակայն յորժամ և խնդրիցէ զՎաթուղիկոսն առ յինքն՝ պարտի գնալ. բայց ի գնալն առ նա, նմանապէս և յանդիման խանին նստի ի վեր քան զայլսն՝ Եք և իցեն: Եւ ի խօսելն ևս ընդ խանին ո՛չ ի գործ անէ զխոնարհական զեղջուկ բառն զայն՝ (թէ յապարկ վնի, որպէս սովորութիւն է հասարակին, և կամ ծառայ եմ տել, այլ թէ՛ իւն՝ ոչ վնի: Իսկ բաց ի յայտարեսաց փաշայից և խանից զխաւորաց, այլք առձիկք Եք և իցեն, ի գալն առ Վաթուղիկոսն՝ եթէ մեծ և երևելի իշխան իցեն, Վաթուղիկոսն միայն ի տեղւոյն իւրմէ կանգնի առանց ընդառաջ ընթացման, և հրաւիրէ ի վերայ յատուկ սփռոցի նստել ի վայր քան զինքն, և որպէս ընդ հաւասարի վարել և խօսել ընդ նոսա: Բայց նոքա ծառայապէս վարին և խօսին ընդ Վաթուղիկոսին. նոյնպէս և թէ Վաթուղիկոսին պատահիցի գնալ առ նոսա, ընդ յառաջ ելեալ յոտին կանգնին և ի վեր քան զինքեանս նստուցանեն: Իսկ այլք հասարակ առձիկք Եք և իցեն (առ յորս ո՛չ երթայ Վաթուղիկոսն), ի գալն նոցա առ Վաթուղիկոսն (թէ և հրամանաւ խանին իցեն եկեալ)՝ ոչինչ շարժի Վաթուղիկոսն ի տեղւոջն, այլ հրաւիրէ հրամայարար ի նստել ի վայր ի յետին տեղւոջ. և նոքա խօսին և վարին ընդ նմա ծառայարար. որոց եթէ հարկն պահանջիցի կարէ Վաթուղիկոսն սաստել և անարգել, և մինչև գտնել

և, թէպէս ո՛չ այնքան՝ որքան գորէին ի ժամանակս թագաւորացն նոցա: Արդ զոր գրեցաք, ըստ բերժանցն գրեցաք, բայց ըստ ժամանակին, որովհետև և ժամանակաւորքն փոփոխին, զոյն ի խահմութիւնս ապագայիցդ թոյաք:

Առ առձիկ ազգս այսքան բաւեսցի:

Իսկ և առ յազգս քրիստոնէից՝ այսպէս զիտեա՛:

Զի եթէ պատահիցի, զի Փռանկաց և Մոսկովի թագաւորացն զիր գրել առ Վաթուղիկոսն Էջփածնի, գրեն զանուն Վաթուղիկոսին ի ճակատ թղթոյն յարգանք և պատուադրութեամբ, և ենթ զանուն իւրեանց, և ապա զինի ծանուցում, և զինիքն իւրեանց ի վերջ բանին գնեն: Նմանապէս և Վաթուղիկոսն ի գրելն առ նոսա՝ զանուն նոցին ի վեր անդր գնէ՝ պատուելով ըստ արժանւոյն, և ապա ըստ կարգին Յիսուսի Բրիտանիոսի և այլն: Եւ զփոքրիկ կնիքն գնէ ի վերջ բանին:

Իսկ և Հռոմացու պապն՝ և Յունաց մեծ պատրիարքն՝ և այլք այսպիսիք ի գրելն զգիր առ Վաթուղիկոսն Էջփածնի, զանուն Վաթուղիկոսին ի վեր անդր ի ճակատ թղթոյն գնեն եղբայրականաւ պատուադրութեամբ՝ և զինիքն իւրեանց յետկոյս թղթոյն ի վերջ բանին: Նոյնպէս և Վաթուղիկոսն ի գրելն առ նոսա, զայս կանոն պահեսցէ մեծապատիւ եղբայր գրելով: Իսկ Արաց և Ասորոց Վաթուղիկոսքն ի գրելն զանուն Վաթուղիկոսին Էջփածնի՝ նոյնպէս ի ճակատ թղթոյն գնեն մեծաւ յարգանք եղբայրականաւ պատուադրութեամբ, և զինիքս իւրեանց ի յետկոյս թղթոյն ի վերջ բանին գնելով: Բայց Վաթուղիկոսն ի գրել առ նոսա, զերեսս թղթոյն ի յերկուս յէջս բաժանեսցէ, և յառաջին յէջն զանուն իւր ըստ կարգին գրեսցէ Յիսուսի Բրիտանիոսի և յն. և յերկրորդ յէջն՝ հանդէպ իւրոյ անուան զամուն նոցին գրեսցէ: Տե՛ռնաբ (այս ինչ անուն) կաթուղիկոսի եղբայրականաւ յարգանք: Բայց զինիք իւր ի մէջ Յիսուսին գնիցէ: Իսկ ի գրելն առ արքայն Արաց, զանուն իւր ըստ կարգին գրեսցէ Յիսուսի Բրիտանիոսի և յն. և զանուն արքային ի վերն գնիցէ ի ճակատին, և զինիքն իւր ի մէջ Յիսուսին: Բայց նա ի գրելն առ Վաթուղիկոս, զանուն Վաթուղիկոսին յարգական բառիւք ի վեր անդր ի ճակատն գրէ, և ի ստորոտ նորին զիւր անուն գրէ, և զինիքն յետկոյս թղթոյն ի վերջ բանին գնէ: Զայն կանոն պահես և վասն այլոց այսպիսեաց արքայապիսեաց:

Իսկ առ յազգս Հայոց միայն Փանձասարու, Աղթամարու և Սայ Վաթուղիկոսացն, և Երուսաղէմայ պատրիարգին Վաթուղիկոսն Էջփածնի ի գրելն զգիր, զանուն իւր ըստ կարգին գնէ Յիսուսի Բրիտանիոսի և յն. և զանունս նոցա ի ներքոյ ըստ կարգին, եղբայրականաւ յարգանք: Մի-

այն գաւառին զի անուանց նոցա կարմարեղջիւ գրեւ և զհինքն իւր թ ձիջ Երուսղիմ գնէ Բայց և Կոստանդնու Պաարիաքըն՝ եթէ ծերացոյն անուանի և արժանապատիւ իցի առ նա ևս զայն հանուն պահեսցէ. և թէ ոչ՝ զհինք իւր ի ճակատ թղթոյն դնիցէ. Բայց նորա ի գրին առ Կաթուղիկոսն Էջմիածնի՝ զանուն նորին ի վեր անգր ի ճակատ թղթոյն գրեն մեծաւ եղբայրականաւ յարգանքով և զհինք իւրեանց յեակցա ի ծայր թղթոյն գնին. Եւ բայց յայսցանեաց, այլք ամենեքեան ի յազար չուոյց՝ թէ՛ Եպիսկոպոս իցին և թէ՛ այլք կարգաւորք, թէ՛ մեծամեծ իշխանք և մկէք, և թէ՛ Հասարակ աշխարհականք, ի գրին իւրեանց զգիր առ Կաթուղիկոսն, որպիսիանաւ խօսաբանութեամբ և ծառայականաւ, օճիւ գրեացն մեծաւ յարգանքով զանուն Կաթուղիկոսին ի վերն դնելով, և զհինք իւրեանց յեակցա ի ծայր թղթոյն դնիցին. Երկուսն և Կաթուղիկոսն առ նոսա հայրաբար սիրով և հրամայական օճով գրեսցէ. բայց և առ յունանս համահասակ և ծերունի և անուանի եպիսկոպոսուս ի գրին, եթէ եղբայր գրեսցէ չէ անտեղի.

Բարձեալ ի յիւանեն Լայրապետին ի յԱթուոյս՝ ունել պարտի ի պարանոցին զգօտի պատշաճագոյն զունով աղնիւ և զպիւրջ իւրեան և անտոցայ՝ կախեալ երկոցուսք ուսովքն և լանջովքն զառ ի վայր. Եւ զուսպանն ի ձեռին՝ գերիս կամուսկի և պակաս յառաջընթաց հեռուսկըս ունելով առաջի իւր. Իսկ եթէ երկուսու իցէ կանեն թէ՛ առ թաղաւորս և առ յայլ մեծամեծս և յայլ ուր և կամիցի, ունել պարտի նոյնպէս զայն կանոնս զորս ասացաք. Այլ և ընդ նոսին գերիւար մի թաւրով կրեցեալ ի միջ հեծելոյ՝ քան զամենայն յառաջագնաց, որ ասի Երօտ: Եւ զգիր երեսնակն զիրկուս սևադրուխ նոյնպէս ձիւսորեալս՝ ի ձեռին միջն ձողաբարձ խաչ արծաթեայ, օ և ի ձեռին միւսոյն զուսպան արծաթեայ վառեալ սկիծեղ և աղնիւ քօղիւք. Այլ և ի յիւանեն և ի մտանեն ևս զմեծամեծ զանգակն հարկանիցին միարանիք ընդառաջ երկուսն և հանդիսիւ. Զի ի ընկ կանոն և սրբոյ Աթուոյս Լայրապետացն պատէտ վարել համարձակ և անկասկած յուսկըք. Այլ և այս է կանոն զի յորժամ Լայրապետն ի յընթրիս բազմել կամիցի ընց միարանից և ընց ուժ և իցի պարտք առաջի իւր ունել զյարտուկ սեղան, և զկիզլիս և զըմպելիս և զսպասուսրս զառեալ ի հասարակութենէն. Իսկ ի յանուսն ի ձեռն զառաջին բաժակն, ամենեքեանքն՝ որք գտանիցն ի յընթրիսն, կարգաւորք և աշխարհականք, յոսին կանգնիցն և Փառնաւոցն յառաջ կացեալ եղանակեցնն բարձր ձայնիւ ի լուր ամենեցուն, Էրամայ՝ օ Զի՛ք, Երեսնակն առիւ Եւ հայրապետն օրհնեսցէ զամենեկանսն ըստ պատշաճաւորութեան աւուրն և տեղոյն, և նոյն երկուսն նոյնպէս բարձր ձայնիւ երգեսցն աճէ:

եզեցէ՛ եզեցէ՛. և մինչ նոքա քոյս երգին, ընկնայցէ Լոյրապետն զբաժանին, և ամենքեան զբախ խոնարհնցեցեալ Լոյրապետին՝ բազմեցին ի Կարէլ:

ԳԼ. Ժ.

Յորում ծանուցանին որպէսս ինձո՛ր կաթն-զկէտացի Ողբանից՝ և երբեմնայն աղարարութիւնս նոցին ի որոյ կղկնմանէս կաթն-զկէտացի, և երբեմնայն ևս զե՛տ և առարկութիւնս նոցին, ինձ ո՛րդեօ, լուսն ո՛ր, և ե՛րբ, և այլ այլ-զկէտ որպէսս ծանուցտ հանձնանտ: Յորում և լըսցտ լուսն վըսց և որպէսս ինձոց նոցին:

Յնա հաստատեալոցն Գրիստոսի Առաւելոց մերոյ յերկինս, և առաքման Լուսնոյն սրբոյ ի յառաքեալոն ի վերնասունն, ապա և ի յառաքելն երկուստանոց առաքելոցն զինձեկաւ ի յամենայն աշխարհ, անկառ փնձակ սրբոցն Թաղէտի Առաքելոցն երկիրս Լոյսոց, Վրաց և Ալբանիոց, նախապէս դիտելի է լուսն առաքելոցս մերոյ Քաղէտի. քանզի չորք որդիք էին Յովն սեփոյ Առաւելահօգին. առաջինն Յովնար Արքայն որ Յեռան եկեալք կոչեցաւ, և յես Քրիստոսի նստաւ. առաջինն Պատրիարք յԵրուսաղէմ, որ և Յովնար Արքեան ևս կոչեցաւ: Յա գրեաց զՅովնարին Վաթուղիկեացոց Երկրորդն Յովնէ՛ որ Յաստո և Բարսարայ ևս կոչեցաւ: Յա յառաջողոցաւ ընդ Մատթիայի ի տեղի Յուդազին մտանչին յառաքելոցն, բոլոց զինձոցն ի Մատթիայ անկառ: Երրորդն՝ Յիւնն Վանանացին՝ որ Հմուտն և Նախանկարչոյ կոչեցաւ: Չորրորդն Յուրոյ, որ Ներեսն և Քաղեսն ևս կոչեցաւ, և Յուդայ Յակոբեան առացաւ լուսն եղբորք քոյցն Յակոբոյ՝ և առ ի դասիկ ի մտանչին: Յա գրեաց զՎաթուղիկեացոց յեսին թուղթն՝ որ Յուդայի անուանի: Արդ այս չորեքեկներս գլորով եղբարք և որդիք Յովն սեփոյ՝ կոչին և եղբարք Գրիստոսի ի Մեծաարանն աւլք՝ որպէս տեսանես: Եւ յոչոց չորիցս երկնն ի թիւս երկուստանոցն են, այս ինքն Յովնարս Հմուտն և Քաղեսն. և Յովնէ ի թիւս եւթմանանոցն, Արդ այս է առաքեալս մեր՝ որ Յուրոյ և Քաղեսն ասի՝ որպէս ցուցաւ, որ է գրեաւոր առաքեալ Գրիստոսի և մի ի յերկուստանոցն, և ս՛չ թէ ի յեւթմանանոցն՝ որպէս տեսանես: Գրի ի Յայտնուորն և յայլս պատմադիրս յԱթմարակոցի և ի աշխոսոց յոսոց ներմուծեցեալ: Ուրեմն ի պնձին առջինն յերկիրս Լոյսոց, առնորով ի յեւթմանանոցն և զերկու աշակերտս ապրատաւոր և յուսկից ինքնան՝ մտանէ ի յերկրոց քաղաքս և մերտէ ըզթաւարուորն Արքար ըստ խոստանման Գրիստոսի, ընդ նմին և զքաղաքն ամենայն, և զԱղզէ կերպասադարենն մեծապէ՛ և պիտկոպոս քաղաքին:

Եւ ապա շրջեալ ընդ Ասորիս, ի Մարս, գնաց ի յԱղուանս, և գարձուցանէ զբազումս ի Քրիստոս. շինէ և զԵկեղեցիս, և կարգէ զքահանայս, և յետոյ գայ ի յԱրտազ գաւառ, և մկրտէ զՈսկեանսն և զՍանգուխա զդուստրն Սանատրկոյ արքային, որ նախապէս մկրտեցեալ ի նշնոյ Առաքելոյն, յետոյ սպանանէ զնա: Որոյ հրաշագործ մարմինն կայ անգէն ի նոյն տեղոցն, ուր յետոյ հռչակաւոր վանք կառուցաւ, որ կայ մինչև ցայսօր շնորհքն Քրիստոսի, և կոչի վրն՝ սբոյն Յարտոսի առտելոյն: Այս է նախապէս Ճշմարիտ առաքեալ և Լուսաւորիչ յատկապէս Հայոց, Վրաց և Աղուանից: ընդ սին և սուրբն Բարդուղիմէոս՝ որ ետուա ի Հայս՝ և լուսաւորեաց զբազումս, և յետոյ նահատակեցաւ յանօրինաց ի գաւառն . . . ուր կայ հրաշագործ մարմինն, յորոյ վերայ և յետոյ կառուցաւ վանք հրաշալի, որ է մինչև ցայսօր շնորհքն Քրիստոսի. վասն որոյ և սա կոչեցաւ առաքեալ Հայոց ընդ Քաղէոսի: Եւ մինչ ստքա ո՛չ կարացին ըզբոյր վիճակ իւրեանց կատարեպպէս անել ի հաւատս Քրիստոսի, վասն որոյ ի ժամ նահատակութեան խնդրեցին ի Քրիստոսէ, զի ի շառաւիղէ իւրեանց յարուցէ զոք ի ընուլ զպահասութիւն վիճակի իւրեանց. որոց և աղօթիւքն յորոց Քրիստոս յեա ժամանակաց ի սրբոյն Քաղէոսի առաքելոյ շնորհարուղի գերեզմանէ զսուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն, որ վերստին նորոպեաց և փայլեցոց զսերմանեալսն ի նոցանէ, և բոլորովին լուսաւորիչ եղև նոցին վիճակի, զորմէ յետոյ տեսցո՛ւք: Արդ յեա կատարման սրբոյ առաքելոյս մերոյ Քաղէոսի՝ մի օմն յաշակերտաց սորին՝ որ Եղիշէ կոչիւր, գարձաւ յԵրուսաղէմ՝ յառաքեալսն ի պատմել զկատարումն սորին: Իսկ եղբայր Քաղէոսի առաքելոյն Յակոբոս՝ որ իբր Պատրիարք նստիւր յԵրուսաղէմ, ձեռնադրեաց զԵղիշէ Եպիսկոպոս և վերադարձոց ի Հայս ի վիճակ Քաղէոսի, զի յաջորդեցէ զտեղի նորին: Որոյ եկեալ և ո՛չ կարացեալ մտանել ի Հայս, գնաց յԱղուանս, և անդ քարոզեաց զՔրիստոս և աշակերտեաց զոմանս. և յեա ո՛չ բազում աւուրց՝ և գնա անդ նահատակեցին: Արդ ի սրբոյն Քաղէոսէ և ի Բարդուղիմէոսէ առաքելոցն և ի սրբոյն Եղիշէէ թէպէտ քարոզեցաւ Քրիստոս ի Հայս և յԱղուանս և յայլ տեղիս, և հաւատացին բազումք և կարգեցան Եկեղեցիք, սակայն զկնի կատարման նոցին՝ որպէս թէ վերադարձան բոլորքն ի կոպապաշտութիւն թագաւորօք և իշխանօք, թէպէտ գտանիւր յուրիք յուրիք ի ծածուկ և ի թագաւոր հաւատացեալ և ծառայ Քրիստոսի: Ապա յետոյ յորժամ նախախնամութեամբն Աստուծոյ բողոքեցաւ շառաւիղն օրհնութեան ի կնիզանի նշխարաց սրբոյն Քաղէոսի առաքելոյն ըստ հայցուածոց նորին, սուրբն Գրիգոր՝ որ և յեա բազմազան տանջանակութեան էած ի հաւատս և մկրտեաց զՅրդաս թագաւորն և լուսա-

ւորեաց զաշխարհս Հայոց, Վրաց, և այլոց շրջակայից. ապա և մկրեաց զՌուսայր արքայն Աղուանից, ի ձեռն նորին և զբոլոր ազգն Աղուանից լուսաւորեաց, և զթոռն իւր զմանուկն Գրիգորիս առաքեաց նոցա Վաթուղիկոս ըստ խնդրոյ Ռուսայր արքային. Ապա յայնմ հետէ յայտնի և կատարեալս փայլեցաւ հաւատն Քրիստոսի և աճեցաւ ի Հայս, ի յԱղուանս և ի Վիրս զարդարեալ Նկեղեցեօք և Նկեղեցականօք. Եւ վասն այսորիկ կարգեցաւ և կանոնադրեցաւ ի բնէ անտի յԱռաքելոց և ի Հայրապետաց և ի թագաւորաց՝ և մանաւանդ ի Սեղանատոսէ Հայրապետէն և ի Պոստանդիանոսէ թագաւորէն Հռոմայ, որք հայրապետական և թագաւորական հրամանադրով և հասաստուն դաշնադրութեամբ ի Սուրբն Լուսաւորիչ յանձնեն զԻնքնազուրի և զծայրագոյն պատրիարքութիւն տրեւելականաց և հրախսականաց՝ այս ինքն Հայոց, Վրաց, և Աղուանից, որոց զՍպիտակոսունան և զՎաթուղիկոսունան ընդ իշխանութեամբ նորա զնեն, զի ի նմանէ և ի նորին փոխանորդացն առնուցուն զձեռնադրութիւն՝ որպէս պատմի յաճախօրէն ի յԱզատանգեղոսէ, որպէս և զթոռն իւր զսուրբն Գրիգորիս ձեռնադրեալ առաքեաց Վաթուղիկոս Աղուանից. վասն այսորիկ հարկ եղև զի Վաթուղիկոսն Աղուանից՝ Լուսաւորիչ փոխանորդ Վաթուղիկոսաց որդի և թոռն կոչիցին՝ և ի նոցանէ առնուցուն զօծուած և զկարգ Վաթուղիկոսութեան և ի հնազանդութեան նոցա մայրեն, և զանուն նոցին ի յԱղուանս նախ քան զանուն իւրեանց յիշել տայցեն, և ի վիճակէն իւրեանց զգանձանակս և զպիլ արդիւնս տայցեն նոցա, որպէս և է այսպէս ի յԱղուանս մինչև ցայսօր. Բանզի Առաքեալն նոցին Նղիշէ՝ զոր յատուկ իւրեանց հռչակեն, էր աշակերտ սրբոյն Քաղեոսի առաքելոյն՝ որ ի Հայս կատարեցաւ, և Աթոռն նորին է ի Հայս. և նախկին Վաթուղիկոսն նոցին Գրիգորիս էր թոռն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ որ Հայոց էր Հայրապետ և Վաթուղիկոս, և Աթոռն նորին է ի Հայս, և է Հայրապետարան և Վաթուղիկոսարան Հայոց որ է սուրբ Էջմիածին. Այս է ճշմարիտ և նախնական կանոն և որպիսութիւն Աղուանից Վաթուղիկոսին. Իսկ ի Հայոց կարգաց և ի կանոնաց ոմանք էրեմնապէս եթէ հետեցեալք են՝ դասեցեալք են ի յԷջմիածնանիստ Վաթուղիկոսացն, և վերայուղղեցեալք ի նոցանց, տալով և զձեռագիրս կնքով, զի մի ևս ի նոյնս սահիցին, որպէս ցուցանի յառաջակայդ. Վերոգրեցեալ կանոնաւոր վարեցան հնազանդութեամբ Վաթուղիկոսունքն Աղուանից ի Լուսաւորչէն մերմէ և ի սրբոյն Գրիգորիսէն իւրեանց, (որ էր թոռն նորին,) ի ժամանակս Իբ Վաթուղիկոսաց մերոց մինչև ցԱբրահամ Վաթուղիկոս Ռըշտունցի յամս երկու հարիւր եօթանասուն և հինգ, և ի ժամանակս Վաթուղիկոսացն իւրեանց, որոց յետինն էր վերոյ Վաթուղիկոսն՝ որ յԱբրահամ

մու. մեծնադրեցաւ՝ ԺԳ. Արդ յառաջ քան զայս ի թուօն Փրկչին մերց ի  
 չորս հարիւր ութսուն և հնգոն՝ ի ժամանակս Բարգէն Կաթուղի-  
 կոսին մերց (որ չորեքասուներորդ էր Աթոռակալ զկնի Լուսաւորչին)  
 և Ջինոնի և Անաստասայ թագաւորացն Յունաց և Հռովմայեցւոց, որոց  
 և հրամանաւն իսկ մեծահանգէս և աշխարհախումբ ժողովով, Յոյնք, Ի-  
 տալիա, Հայք, Աղուանք և Վիրք միաբանեալք նդովեցին զժողովն Քաղ-  
 կեդոնի և զպիղծ ասմարն Լևոնի. Եւ մինչ ոչ դադարէին քաղկեդոնիքն  
 յայտ և անդր ի շրջելոյ և ի սերմանելոյ զչար աղանդն իւրեանց ի Հայո,  
 ի Վիրա, և յԱղուանս, վասն որոյ ի հինգ հարիւր քսան և հինգ թուօն  
 Փրկչին, ի ժամանակս Յուստինոսի կայսեր, ներսէս Կաթուղիկոսն մեր  
 Աշտարակեցի, որ քսաներորդ էր զկնի Լուսաւորչին մերց, վերստին ա-  
 րար ժողով ի Բօլին, ունելով ինքեան համաձայն զՎիրս և զԱղուանս,  
 որք և նգովեալ հերքեցին զչար ժողովն Քաղկեդոնի և զհետևողն նորին  
 ի կողմանց իւրեանց. Սակայն յուզէր միշտ և խռովէր քաղցկեղն Քաղկե-  
 դոնական և վրդովէր զեկեղեցիս հանապազ. Չի յեա սոյն ներսեսի նստի  
 Յովհաննէս Կաթուղիկոս Հայոց յամս ԺԵ. Եւ յեա նորա Մովսէս  
 յԵղուարդայ ի թուօջ Փրկչին մերց ԵՃԾ, որ քսան երկուերորդ էր  
 Լուսաւորչին, առ որով եղաւ թուականն Հայոց. Յաւուրս սորա բարձ-  
 րանայ և ծաւալի հուրն Քաղկեդոնի և հրդեհէ զբազումս ի մերայնոց՝  
 և պատառէ զեկեղեցիս Հայոց. քանզի յաւուրս Մովսէս թագաւորին  
 Յունաց՝ որ խմբեցաւ յաղանդն Քաղկեդոնի, դարձան և Հայքն ի  
 յայն՝ որք էին ի բաժնի Յունաց. վասն որոյ և ապաստմբեալք ի Մով-  
 սէսէ, հրամանաւ նոցնց թագաւորին և սատարութեամբ Բէռոդորոսի և  
 պիսկոպոսին Կարնոյ՝ կացուցանեն այնմ կողմանց զՅօհան ոմն ի Կոզմիս  
 գաւառէ՝ Կաթուղիկոս Հայոց և ընդունին զժողովն Քաղկեդոնի. Արով  
 և արկանեն զմեծ գայթակղութիւնս և զերկուութիւնս յազգս մեր. Եւ  
 յայսմանէ ախտէ մինչ Աղուանից ազգն մնայր աղատ և անխոտոր յայ-  
 տրմ միջոցի, վասն որոյ զերեսս դարձուցին ի Հայոց Կաթուղիկոսացն Սիւ-  
 նեացն եպիսկոպոսքն՝ և յարեցան յԱղուանս, և ի նոցանէ առին ըզ-  
 կարգ և զօժումն՝ որք ի Հայոց Կաթուղիկոսէն առնուին. Յենաց այս  
 երկպառակութիւնս որքան և տեւցին երկրքին Կաթուղիկոսքն մեր Մով-  
 սէս և Յօհանն. Ապա ի վախճանել սոցին՝ նստի Աբրահամ Կաթուղի-  
 կոսն ի գաւառէն Ռշտունեաց (որ ի վերդ յիշեցաւ) ի ԻԲ թուօն մե-  
 րում, աշխարհաժողով հանդիսիւ՝ համակամութեամբ երկուց կողմանց  
 Յունաբնակաց և Հայաբնակաց՝ ի Բօլին քաղաք, և ըստ օրինի միապե-  
 տեալ ազգիս մերոյ լինի Կաթուղիկոս, յաւուրս Յուստինոսի Յունաց  
 և Իսարովու Պարսից աղբարեցն, և յիշխանութեան Հայոց Սմբատայ

Բազրատունչը Բոլոյ եղնն և յաւուրս տրա խռովութիւնք մեծամեծք,  
 և պէտէս յուրմունք ի Հռոմեաց, ի Վրաց, յԱղուանից, և ի Հայոց,  
 երբեմն վասն պիղծ աղանդոցն քաղկեդոնի ի բուռն թագաւորացն Յու-  
 նաց Յուստիանոսէ և ի Մարկայ, յորոց հանապազ կրէր ազգս Հայոց  
 զյարուցմանս, յորոց հրաւիրակք և գետպանք ո՛չ դազարէին յերթեւե-  
 կութեանց, և բազմիցս հրաման հանէին ժողով յինելոյ, միանգամ ի  
 Պատանդնուպոլիս կոչեցին, և կրէցս ի Թէոդուպոլիս. և ո՛րքան վիճմու-  
 նըս և զառարկութիւնս արկանէին ճարտարաբան ազգն Յունաց առ  
 վարդապետն Հայոց, շնորհոցն Ասասուոյ ընկալնուին զպատասխանիս  
 անդէհէր. Եւ մինչ այսու ոչինչ կորացին ընկնել զազգս Հայոց, փոխե-  
 ցին ազգս և սլոյովք մաքառել՝ ասելով թէ՛ զուք ոչ ունիք զաթոռս  
 պատրիարքական, վասն զի ի չորից Աւետարանչացն ո՛չ միցն ունիք  
 զաթոռ, և ոչ միցն հնազանդեալ հետեւիք. Վասն որոյ բազում ժողովք  
 և վէճք, ուժեղ քննութիւնք և հարցափորձութիւնք լինէին ի միջոցին.  
 Ապա յետ բազմաց վիճմանց հաղիւ զասնէր զհանդարտութիւն ազգս  
 Հայոց ըստ այսմ մասին. Գանդի միարանեալք Հայոց, Վրաց և Աղուա-  
 նից, նղովեցին զժողովն Գաղկեդոնի և զածմարն Լեոնի, և մարբեցին  
 զբարձր աշխարհս ի մայեկան աղանդոցն նոցին. Եւ ապա կարգեցին  
 կանօնաւ, զի փոխանորդն Լուսաւորչին (որ նստի յԱթոռ Թաղէսի  
 առաքելոն) լինիցի պատրիարք, Աղուանից Վաթողիկոսն լինիցի Արքե-  
 պիսկոպոս, և Վրաց եպիսկոպոսն Մեարապոլիտ, առ ի հասանել գեղուս  
 Յունաց և յազատիլ ի զրպարտութեանց նոցին. Գանդի ունէին թե-  
 պէս ազգս Հայոց զայս կանօն և կարգ աւանդեալ ի սրբոյ Լուսաւոր-  
 չնն, օտկայն ի փոփոխիլ ժամանակաց և իշխանութեանց, անփոյթ կին  
 արարեալ զպայտիեաց անուանց և կոչմանց, զորս ահա՛ վերստին հաս-  
 տատեցին վասն հակառակութեան Յունաց՝ որպէս ասացաք. Եւ զի  
 յառաջ քան զայս Յիւնիք յետս կին կացեալք և բաժանեալք ի յա-  
 թոսոյ Լուսաւորչին հրամանաւ սրբոյն Պետրոսի մեծի բարունոյ Առաջ-  
 նորդին իւրեանց վասն ներհականիսա Վաթողիկոսացն (որպէս ասա-  
 ցաք) Մօսեսի և Յովհաննու, որոց և չորիքիկն, այս ինքն Գիգան, Վրու-  
 զանէտ Գրիգոր, և Բրիստափոք Առաջնորդքն ի յԱղուանիցն առին ըզ-  
 ձեանադրութիւն և զմեռօն. Աստանօր ի միապետելն Արաշամու, վերա-  
 դարձան ի սա և վերստին հնազանդեացն Աթոռոյ Լուսաւորչին, որպէս  
 և էր յառաջն. և Գաւթիմ Առաջնորդն նոցին՝ որ զկնի Բրիստափոքի,  
 էառ զձեռնադրութիւն ի յԱրաշամու Վաթողիկոսէն. Եւ ձեացին  
 այսու կանօնաւ հետեւոյք և հնազանդք սրբոյ Լուսաւորչի Փոխանոր-  
 զացն մինչև ցայսօր. Արդ այսպէս առնելով թեպէտ թօթափեցին մեր-

քըն յինքեանց զմարտս և զվէճս Յունաց և Քաղկեդոնականացն որպէս  
 ասացար, սակայն յառաջացան այնուհետև ի ներ ինքեանց, այս ինքն ի  
 Հայս, ի Վիրոս, և յԱղուանս մեծ խռովութիւնք և չարաչար բաժան-  
 մունք: Քանզի ի ժամանակին յայնմիկ էր առաջնորդ մի Վրաց՝ որ  
 Վիրիոն կոչուի: Սա նախապէս ի սարկաւազութեան գնացեալ էր ի  
 Յոյնս ի քաղաքն Վողոնիայ և կենակից լեալ Քաղկեդոնիկ շերիցու միտր  
 յորմէ և դարձեալ էր ի նորին չար ազանդն. յետոյ եկեալ ի Վա-  
 ղարչապատ յաւուրս Տեառն Մօսիսի Վաթուղիկոսին (որ ի վերոյ յիշե-  
 ցաւ) եղև Փակակալ սրբոյ Էջմիածնի: Յաւուրն յայնուսիկ վախճան-  
 եալ եպիսկոպոսին Վրաց Տեառն Պետրոսի (որ ի Մօսիսէ էր ձեռնա-  
 գրեցեալ ըսա նախնոյ սովորութեան), խնդրեցին Վիրք ի Մօսիսէ առաջ-  
 նորդ ինքեանց զխմորեալն Վիրիոն, և Մօսիս ևս ձեռնադրեաց զպիղծ և  
 զարմատն այն չարութեան Յպիսկոպոս, և առաքեաց նոցա առաջնորդ. որ և  
 ունկելով ի յինքն նախապէս զխմորն չարութեան զաղանդն Քաղկեդոնի,  
 սկսաւ օր ըստ օրէ սերմանել և ի Վիրոս սատար առեալ ինքեան և զպիղծ  
 խուժիկ զքահանայն իւր, յորմէ ուսեալ էր ինքն: Եւ երանելին Մօսիս  
 թէպէտ բազմիցս խրատեր զՎիրիոն դառնալ յաղանդոյն, սակայն նա  
 չքմեղս դներ զինքն և թաքուցանէր: Ապա ի վախճանին Մօսիսի, և  
 ի յաջորդելն Աբրահամու, և ի հաստատելն զԱղուանիցն Առաջնորդն Արք-  
 եպիսկոպոս, և Վրացն Մետրապօլիտ ի խոնարհ քան զնա, ախտացեալ  
 ամբարտաւանութեամբ պիղծն Վիրիոն՝ ոչ էառ յանձն զմետրապօլիտու-  
 թիւնն, այլ զարքեպիսկոպոսութիւնն խնդրէր առնուլ՝ կամելով նախա-  
 բարձ լինել ի վրայ Աղուանից: Վասն որոյ և Աղուանիցն խռովեալք յնաս  
 կացին ապստամբութեամբ ի Հայոց՝ յառաջագրելով զնախկնութիւնն Ա-  
 աքերոյն իւրեանց Յդիշէի (որ էր աշակերտ Քարէոսի Առաքելոյն): Ապա  
 և անիծեալն Վիրիոն զէն առեալ ինքեան զապստամբութիւնն Աղուանից  
 և մանաւանդ խմորեալ գողով յաղանդն Քաղկեդոնի՝ ժամ գտեալ իւրոյ  
 չարութեանն, ի յոչ ընկալնուին զԱրքեպիսկոպոսութիւնն, յայտնեաց ըզ-  
 մժերեալ մաղձն իւր, և դարձաւ ի Հայոց, և յարեցաւ ի Յոյնս, ընդ ինքեան  
 դարձոյց և զազգն Վրաց միանգամայն, և եղին քաղկեդոնիկ յօրէ յայնմանէ  
 մինչև ցայսօր: Քանզի մինչև ի յայս պիղծս Վիրիոն, Վիրք հնազանդք էին  
 յամենայնի և հետևողք կանօնաց և աւանդութեանց Յկեղեցոյս Հայոց.  
 և եպիսկոպոսք նոցին ի սրբոյ Լուսաւորչի փոխանորդացն առնուին ըզ-  
 ձեռնադրութիւն. և հրամանաւ սոցին նստէին, և զսուրբ Մեռոնն ի սո-  
 ցանէ առնուին: Որոց բաժանմանն պատճառ եղև պիղծն Վիրիոն: Աս  
 յորս թէպէտ բազմիցս գրեաց Աբրահամ Վաթուղիկոսն զգիրս խրատա-  
 կանս և յորդորականս, և զմարդ առաքեաց ի վերաուղղել, ոչինչ օգ-

անցաւ. Վասն որոյ և բանիւ արարեալ զՊիւրիոն, ընդ նմին և զազն Վրաց, և զրեաց կանոնականս Հայոց, Աղուանից և Սիւնեաց. զի քար- շնացն ի Վրաց, և մի՛ ևս հաղորդեցին ընդ նոսա ի հաւատս և ի յաւանդութիւնս Եկեղեցւոյ, Ապա և զմետրապօլիտութիւնն՝ յորմէ ոստե- ցան Վիրք, ընկալաւ Եպիսկոպոսն Սիւնեաց. և այս կանոն մնաց մինչև ցայսօր. Վասն այսորիկ Սիւնեաց Եպիսկոպոսն վերագոյն է ի Հայս ի վե- րայ պղոց եպիսկոպոսաց: Իսկ և Աղուանիցն ապստամբութիւն տեւալ ի ժամանակս երկուց Վաթուղիկոսացն իւրեանց (որք զկնի վերոյ Վաթու- ղիկոսին նստան անձաք տեւալ զՎաթուղիկոսութիւնն) մինչև ի Սրբա- զան Վաթուղիկոսն մեր Յէր Վոմիտաս, որ նստաւ ի ԼԲ թուողն մերում: որով ընկալաւ իսկապէս միապետութիւն Վաթուղիկոսութեան ազգս Հայոց: Քանզի ըստ ոմանց պատմագրաց, ի ժամանակս Աբրահամու զեռ ևս կենդանի էր Յօհան՝ որ նստեալ էր ի կողմն Յունաց հրամանաւ Մօրկայ թագաւորին. որ և ըստ ոմանց գերեցեալ յետոյ ի յԱշոտոյ զօրապետէն Պարսից և բերաւ ի Պարս ի Համասան՝ և անդ մեռաւ: Ապա ի միապետելն Վոմիտասայ և ի վախճանելն ապստամբ Վաթուղի- կոսացն Աղուանից, զղլացեալ իշխանացն Աղուանից ի յուսադրելոյ և ի իրաւաւցն Վոմիտասայ, առաքին զՈւխտանէս վարդապետն իւրեանց առ Վոմիտաս, և խնդրին տալ նմա զօժումն և զկարգ Վաթուղիկոսու- թեան: Զոր և արարեալ իսկ ըստ խնդրոյ նոցին առաքէ մեծաւ փառօք յԱղուանս, և դնէ նոցա ուխտ և կանոն զի մի՛ ևս ապստամբիցին ի յաթուղի Լուսաւորչին: Որք և պահելով զկանոնս զայս՝ մնացին ի ժամանակս երկուց Վաթուղիկոսացն իւրեանց Ուխտանիսի և Եղիազար- րու, և ի ժամանակս եօթն Վաթուղիկոսացն մերոց մինչև ի յԵղիա Վա- թուղիկոսն մեր Արձիշեցի, որ նստաւ ի թուողն մերում ի ԿԾԲ: Ապա ի ժամանակս սորա մեռանի Եղիազար Վաթուղիկոսն Աղուանից, (որ ի մերմէ Վաթուղիկոսացն էր ձեռնադրեցեալ) ներսէս ոմն Եպիսկոպոս Պարզմանայ, որ Բակուր մակակոչիւր՝ զոլով խմորեցեալ յաղանդն քաղկեդոնի, ուխտ և դաշինս դնէ ի ծածուկ ընդ Տիկնոջն Վարազ- արդասայ իշխանին Աղուանից, որ Սպարամ կոչիւր (որ և սա ունէր զտեսն քաղկեդոնի), թէ՛ եթէ զիս Վաթուղիկոս արասցես, զամենայն Աղուանս դարձուցից յաղանդն Քաղկեդոնի: Եւ չարախորհ կինն այն հա- ւանեալ կամաց նորին, ժողովէ զեպիսկոպոսունս և զիշխանս երկրին, և տայ ձեռնադրել զպիղծն Բակուր ի չՎաթուղիկոս Աղուանից, թարց հը- րամանի Վաթուղիկոսին Հայոց Տեառն Եղիայի: Եւ ապա Բակուրն այն պիղծ սկսաւ յայանել օր ըստ օրէ զմաղձն չարութեան՝ զոր ի վաղուց աւեր մթերեալ, զամենայն ուղղափառսն խոտելով և հալածելով, և

գլխաւահաստանն ի յիւր յաղանդն գարձուցանելով: Ապա ճարակաւոր ընալ ուղղափառ եպիսկոպոսաց և բարեպաշտօն իշխանացն Աղուանից, հասուցին զքողոքն առ Վաթուղիկոսն Հայոց Տէր Եղիա: Որոց զրոց պատճէն է այս:

Յերանգ Եղիայի Հայոց Կարուղիկոսի ի միտքամ ժողովոյս Ազուանից Երկրպաշտօնիս:

Վասն զի ի մի ուղիչ հուսա զգով հազն մեր ընդ հարսն մեր, զմիմեանց հազնն զուսաց քրիստոսի: Եւ ի ներքն Աստուծոյ զբարեպաշտ արեւելափորտան կրօնն Գաղիկոսի կէց զտիկերս, և մեր հազմուցս մինչև ցարս Ժամանակի անխառն էր մեացեալ յոյժ պանդայ: Իսկ այժմ զբ հարձեաց զպ մեզ հովիւ բարի զնրոս, առ զայլ եղեալ մանչ սխառ քանաւոր հոսա Պրօֆեսոր: Վասն որոյ կամեցաք յուշ առնել մերում Սրբութեան, այց եղանկ զգինս մերոց անգամաց և բժշկել զեկեանս մեր: Ողջ ընդ:

Ապա սրբազան Հայրապետան Եղիա շարժեալ ի Հոգւոյն սրբոց, առեալ ընդ իւր զեպիսկոպոսունս Հայոց՝ զնայ ի յԱղուանս ի քաղաքն Պարտաւ (ուր նստէր Վաթուղիկոսն նոցին), և անդ ժողովեալ զամենայն զեպիսկոպոսունս և զիշխանս Աղուանից, յառաջ անեալ զԲակուր և զՏամատիոսն նորին զչար կինն Սպարամ, ձաղածանակ խոյտաուակութեամբ կապեալ ի վերայ իշոյ՝ հալածեղ յերկրէն, և զաշխարհն մաքրեալ յաղանդոց շարին, ձեռնադրէ նոցա զՍիմէօն սարկաւազապետան Եկեղեցւոյն Վաթուղիկոս Աղուանից. և քնէ կանօնս և առնու զձեռագիրս ի յԱղուանից, զի մի՛ ևս շեղիցին ի կրօնից Լուսաւորչին, և մի՛ ևս քնել Վաթուղիկոս Բնքեանց ձեռնադրութեամբ եպիսկոպոսաց, այլ միայն ի յԱթուակալէ սրբոց Լուսաւորչին, և զօրինակ ձեռագրի նոցին զոր ետուն Եղիայ Վաթուղիկոսին, (զլիովինն ի պատմագիրս Աղուանից և Սիւնեաց, և ի Պիրակոսինն անցես): Աստ կարճառօտեալ զդիտումն միայն եղաք, որ է այսպէս:

Քանզի բազում և ազգի ազգի շարութեամբ որպէս սովոր է յամենայն ժամ բարիատեացն սատանայ զզարգամբսան ի մարդկանէ որսալ, և այլն, սակս որոյ այժմ ի միջի մերում երևեալ արմատն գառնութեան ազանդոյն նեստորի ի ձեռն ներսիսի ամբարշտացելոյ՝ որ ներսզութեամբ Հոգւոյն սրբոյ կարգեցաւ յառաջնորդութիւն տանս Աղուանից՝ և խորամանկութեամբն եղև հաւատակորոցս. և այլն. յորմէ Գրիստոսի սուրբ անգամբ և օրգիք սիօնի բովանդակք մոլորեցան խաբէութեամբ, և ողն. այլ սակայն օրհնութիւնն Աստուծոյ յայսմ վայրի, որ ոչ ես թող թշնամւոյն մարդկան իսպառ. յառաջել այլ գլխացեալ ի սկարութիւնս մեր, որորմեալ ժողովորդեանս խրում՝ առաքեաց առ մեզ զպատուական հայրդ զԵղիա շնորհիւն Աստուծոյ Հայոց Վաթուղիկոս զայր սուրբ և ճշմարիտ՝ զուզութեա սրբոյն Գրիգորի՝ ձերովք եպիսկոպոսաք:

որք եկիք ի մայրաքաղաքս մեր Պարտաւ, և ձերով քաղցրաւոցսց զարգազեալութեանքն բարձիք զչարն ի միջոյ մերմ, և յիշեով զառաջնոց հարցն մերոց աւանդութիւն, վերանորոգելիք զԱթոռ հայրապետութեանս մերոց. և այլն: Վասն որոց և միք շնորհակալութեամբ ընկալաք առաքելական զհաստան մեր, որ նախ ի սրբոյն Եղիշէէ հիմադրեալ, և ապա ի սրբոյն Գրիգորիոս հաստատեալ, որ ցայժմ ոչ կը ստեղծուի: Ի հաստմիջ փորձութեանցս՝ հասցոց Աստուած զօգնութիւն իւր ի ձեան Փախանորդիդ սրբոյն Գրիգորի, որոց ուղղափառութեանն կար աշակերտ և եղիցաք Տեառնդ Եղիպի Լոյսոց Կաթուղիկոսի, որ եղև վրեժխնդիր թշուառնոցն արգարութեան: Եւ արդ միք ամենեքեան նզովեմք զամենայն հերձուածոցն, ընդ որս և զեզփելին մեր ներսեա, որ հաւանեալ եղև երկարեակ աշունջոյն Բագրեղոսի: Ջայս կանօնս առաջի Աստուծոց և ձերոց պրութեանդ պայմանեցաք: Յայսմ հետև եթէ որ յանդմեալ զնորանաւութիւն ինչ կամիցի առնել ի մենջ, ով որ և իցի, նզովեալ եղիցի յԱստուծոց և ի մէջ. և ըն:

Նայեալեա և վասն ձեանադրութեան Կաթուղիկոսացս Աղուանից պսակե կանօնեցաք: Բանդի որովհետև ի սուղ ինչ միջոցի Կաթուղիկոսք մեր զձեանադրութիւն յեպիսկոպոսացս մերոց առին, անփոյթ առնելով զառաջնոցն կանօնաց, վասն որոց անփորձ և անընարող զործով եղեալ հերձուածեացաւ աշխարհս մեր. վասն պսորիկ պայմանեցաք առաջի Աստուծոց և ձերոց հայրութեանդ, զի ձեանադրութիւն Լոյրապետութեանս Աղուանից ի սրբոյն Գրիգորի Աթոռոցն և ի նորին փախանորդացն եղիցի մարտնութեամբ աշխարհիս մերոց, որպէս և էրն ի սկզբանէ անտի ի սրբոյն Գրիգորէ: Զի անդ իսկ ընկալաք զլուսաւորութիւն, և ճշմարտութեամբ դիտելք՝ թէ՛ զոր դուք ընտրեք և կամիք, հանջ Աստուծոց և սգուս մեզ: Եւ թէ որք կրկնուին Աստուծոց պսմ պայմանադրութեանս կատարողք լինին, որհնեալք եղիցին ի սրբոց Երրորդութենէն: Եւ թէ ընդդիմացեալք թիրեցցին ի ճշմարտութենէ, դատապարտեալք թիցն յԱստուծոց, և ձեանադրութիւնն այն լիցի ունայն և անփուեր, և մի՛ համարեսցի ընտրանելի, և այլն: Վերջ ձեանադրին:

Ասեալ Տեառն Եղիպի զայս ձեռագիրս յԱղուանից, դառնալք մեծազեալաք յԱթոռն իւր: Արդ եկաց և տեւաց այս կանօն և ուխտադրութիւն ի Ժամանակս ԺԶ Կաթուղիկոսացն Աղուանից, և ի ԺԵ Կաթուղիկոսացն մերոց՝ մինչև ի Գեորգ Կաթուղիկոսն մեր Գառնեցի, որ նստալովս ի ԳՃԺԶ թուովն մերում: (Եւ. զի տեսք ԺԳ Կաթուղիկոս գինն մզ յայսմ միջոցի, ոչ զնեղով ի կարգի զՋարաբեա Կաթուղիկոսն ի Ջաղպ գեղջէն. զի սա ըստ տեանց առ թէ՛

ի վեց ամբ Հայրապետութեան իւրոյ՝ ժողով արարեալ ի Շիրակ-  
 վան, ընկալաւ զժողովն Բաղկերանի. որոյ զնի նստաւ Գէորգ և խո-  
 տեաց զընկալեալ առմարն և զաղանդն նորին, և մարտեաց զՍկեղեցիս  
 վերստին.) Ապա ի ժամանակս Գէորգայ Վաթուղիկոսին մերոյ, մեռանի  
 Յօսեփ Վաթուղիկոսն Աղուանից, որ ի մերոց Վաթուղիկոսացն էր առեալ  
 զձեռնադրութիւն ըստ կարգին: Եւ յաւուրսն յայնոսիկ Հայոց թագաւորն  
 Աշոտ, և իշխանքն Աղուանից՝ ԺԳ ամ էր՝ որք ի պատերազմի կային ի  
